

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

523

4-18

20 JUL 2010

17.05.2013

19 AUG 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր լեռների, միացեք.

523

4-18

48

ՊՐՈՖ. Ն. ԿԱՄԵՆՇՎԻԿՈՎ

# ՏԻԵԶԵՐԳ

1002  
9996

Թարգմ.

Հ. Ա. Թ. Կ. Յ. Ա. Ն. Ի.

ՀԱՅՐ. ՀԱՅՀԱՅ. Խ. Խ. Խ. Խ. Խ.

Խմբագրությամբ, առաջաբանով յեզ հավելումներով

512  
41-181

510  
121-40



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՇԱԼԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Պրոլետարներ բոլոր լերկրների, միացեք.

510  
274-40  
191

ՊՐՈՖ. Ն. ԿԱՄԵՆՉԶԻԿՈՎ

# ՏԻՏՁԵՐՔ

Թագմ.

Հ. Ս. Ա. Ռ. Կ. Յ. Ա. Կ.

ՀԱՅՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Խմբագրությամբ, առաջարանով յեզ հավելումնեով



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

012

121  
121

## Ա Ր Ա Զ Ա Բ Ա Ն

Պրոֆ. Ն. Կամենչչիկովի «Տիեզերք» գրքույկի թարգմանությունը մեր առաջին աստիճանի դպրոցների 4-րդ խմբերի համար շատ ե այժմեյական։ Այս գրքույկը սաներին ծանոթացնում ե յերկնորի հիմնական յերեւութների հետ. «ինչպես են— ցերեկվա յեվ զիշերվա հաջորդականությունը, լուսատուների ծագելն ու մայր մտնելը, յերկնակամարի որական տեսանելի շարժումը (յերկրագնդի պտույտը), տարվա յեղանակների հաջորդականությունը (յերկրագնդի պտույտն արեվի շուրջը), լուսնի փուլերը, արեվի յեվ լուսնի խավարումները. Ծանոթացնում ե մոլորակների, ասուպների, գիտաստղերի հետ» \*), մի խոսքով, դպրոցական սաների առաջ բացվում ե հրաշալից աստղային յերկինքը. Գրքույկը սովորեցնում ե սանին վոչ միայն նայել, այլ յեվ ինքնուրույն կերպով դիտել յերկինքը, հասկանալ նրա յերեվույթները՝ մի շարք պարզ ու հասարակ աստղաբաշխական դիտողությունների միջոցով։ Նա դպրոցականին դնում ե գիտական հանապարհի վրա, սովորեցնում ե համախմբել դիտողությունները, յերեւություններն յենթարկել անալիզի յեվ այդպիսով վորոշ ծրագրով ձգտել զիտական նախատակի յեվ հասնել այս կամ այն բարդ յերեվույթի ըմբռնելուն։ Մեր հին դպրոցում, մեր հին ուսուցիչները «կրակից առավել» վախենում եին յերկնքից. (յես ի նկատի ունեմ աստղայից յերկինքը). իսկ յուրաքանչյուր յերեխայի մեջ նստած ե այն աստղաբաշխ Խալդը, վորի գիտական միտքը ամենից առաջ ընթացավ «յերկնային ճանապարհով»։ Աստղաբաշխությունը գիտություններից ամենահինն ե. այդ պատճառով բոլոր գիտություններից առաջինն ե, վոր բաղխում ե յերեխայի գիտակցության գուռը. Կարճ.— յերեխան շատ ե հետաքրքրվում յերկնքով ու լուսատուներով։ Այդ նիշտ ե. բայց դեռ նա դիտել չի կարողանում. «Դիտելու ընդունակությունն աստիճանաբար պետք ե զարգացնել»։ Դիտական դիտողությունը սովորականից տարբերվում ե յեվ իր նշտությամբ յեվ մանրամանություններով։ Նա պահանջում ե, վաստերին մոտենալ որյեկտիվ կերպով յեվ նրանցից վոչ մինը չարհամարել։ Դիտական դիտողության ժամանակ ամենախիստ ճշտությամբ նկարագրվում են վաստերը յեվ այն հանգամանքները, վորոնք զուգընթացում են վաստերին։ Ահա այն ճանապարհը, վորով ուսուցիչը պիտի տանի իր սաներին։ Յերկնքին կարելի յե մոտենալ յեվ դիտել նույն իսկ առանց բարդ գործիքների։ Յեթե կուգեր՝ սկզբում աստղաբաշխական գործիքները նվասակար ել են։ Այդ շրջանում առաջին աստիճանի սանը պետք ե սովորի դիտողություն-

\*) Պրոֆ. Ն. Կամենչչիկով։

Ներ կատարել հասարակ ազբով յեվ պարզ գործիքներով։ Այդ գործիքներն ինքն ել կարող ե պատրաստել։

Այս շրջանի աստղաբաշխական աշխատանքների իմաստը պիտի կայանա նրանում, վոր յերեխան կարողանա վորոշել իր դիրքը տարածության մեջ, հասկանա յերեվութների կապակցությունը, տարգի այդ յերեվութների գրավիչ համաչափությամբ յեվ բիթմով, վորպեսզի վերջո մղում ստանա հետազայում իր դիտողությունները տանել գիտական ավելի խիստ ու ճշգրիտ ուղիով՝ աստղաբաշխական գործիքների ոգնությամբ։

Այս ամենը ի նկատի ունենալով, այս գիրքը դասագիրք չպետք է համարել, վորով դասաւանում տարվում ե «աստղաբաշխության ավանդում»։ Սա բոլորովին չի հաշտվում դասարանի հետ։ Այս ծեռնարկը պետք է բանալ բաց յերկնքի տակ, զիշեր ու ցերեկ, դիտողությունների ժամանակ բաց յերկնքի տակ, զիշեր ու ցերեկ, դիտողությունները յեվ վորումները կատարելիս սա մի ուղղեցույց ե, վոր սաների ծեռքը տալով, ուսուցիչը միայն հետեվում ե նրանց աշխատանքներին, ստուգում գրանցումները, ոգնում իր բացատրություններով, հաճախ ներկա լինում նրանց կատարած դիտողություններին։

Ուսուցչի գլխավոր անելիքն այս կամ այն սանից նրա կատարած աշխատանքի յեվ դիտողությունների սասին հաշիվ ստանան ե։

«Տիեզերքի» ոգնությամբ աստղաբաշխությունը չի ավանդվում, այլ ծեռք ե բերվում աշակերտի կողմից ինքնուրույն յեվ ո ացիոնալ կազմակերպված դիտողություններով։ Ուսուցչին միայն մնում ե այս ինքնուրույն դիտողությունները կազմակերպել ու ղեկավարել։

Իմ կողմից պրոֆ. Կամենցիկովի գրքույկին ավելացրած ե յերեք գրուխ – ա. Մարդկության աստիճանական ծանոթությունը յերկրագնդի հետ, բ. Որացույց յեվ գ. Արեգակնային համակարգության ծագումը։ Ինչ վերաբերում ե փոփոխություններին, նրանք արված են այն չափով, վորչափ առարկան ավանդվելու յեւ այլ աշխարհագրական լայնության վրա (Հայաստանում)։ Մինչդեռ գիրքը գրված ե այլ լայնության (Ռուսաստան) համար։ Դիտողությունների մասում ել վորոշ լրացումներ են արված («Էռուսին» գլխում), վորոնք, իմ կարծիքով, անհրաժեշտ են։ Բնագրից բաց ե թողնված արեգակի մասին մեր որերում արդեն հնացած այն տեսությունը (ինչպես այդ պարզեց գերմանացի ֆիզիկոս Ներնստը), թե իբր արեգակի կյանքի տեսքությունը պետք ե հաշվել 20 միլիոն տարի։ Ուրիշ վիճելի դեպքերում իմ կողմից ծանոթություններ են դրված։

1 մայիսի 1925 թ.


Յերեան

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՍԻԴԱՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՀԵՏ

Դեռևս հին խալդերը, վոր ապրում ելին Պարսից ծոցի մոտ, դրանց հետ ել ասորեստանցիք, բաբելոնացիք և յերկիպտացիք, ինչպես նաև հեռագայում հույները, տեսնելով աստղալից յերկինքը, նպատակ դրին ժամանակը դասավորել իրենց աշխատանքներին համապատասխան։ Յերկինային յերեսությունների դիտողության մեջ աստիճանաբար խորանալով, նրանք սկսեցին հետաքրքրվել այն յերկրով, վորի ծնունդն ելին իրենք։ Հույները կարծում ելին, թե յերկիրը «մի տափարակ սկավառակ ե», վոր շրջա գատված ե «Ովկիանոս» գետով։ գետի մյուս ափին մեռած մարդկանց վոգիների աշխարհն ե։ Այդպես ելին մտածում հովքական ցեղերը, վոր նոր յին նստակյաց տակառն անցնում։ Իրենց հոտերով թափառելով սահմանափակ տարածության արոտատեղերում, կտմ հողագործության անցնելով, այլ ցեղերն ապրում ելին բնական տնտեսությամբ, այսինքն ապրուստի համար անհրաժեշտ բոլոր մթերքներն իրենք արտադրում, իրենք սպառում ելին։ Առևտի և ապրանք փոխանակելու կարիք չկար, հեռագոր ճանապարհորդություններ չելին կատարում, — ճանապարհներ չկային։ Յուրաքանչյուր ցեղ ապրում եր իր հայրենիքում բընական սահմաններով — գետերով ու լեռներով աշխարհից կտրված։ Այս պայմաններում մարդիկ կարծում ելին, թե իրենց բնակավայրից գուրս աշխարհ չկա, կայ յեթե կա յել, դա հրաշեների աշխարհն ե։ Բայց հետզետե կատարելազորձվում են յերկրագործական տեխնիկան ու գործիքները, մարդիկ կարողանում են իրենց սպառածից ավելի մթերք արտադրել, ազգաբնակությունն աճում ե, բնակավայրը նեղ ե թվում։ Բնակչության ավելցուկը տեղափոխելու համար նորանոր յերկրներ գրավելու պահանջ ե զգացվում։ գաղութներ են հիմնվում, գաղութները և մայր յերկրի մեջ ճանապարհներ են գցվում, ապրանքների փոխանակություն ե սկսվում, գաղութները կապվում են հարևան ուրիշ ժողովուրդների հետ, սկիզբն ե առնում առևտուրը։ Վաճառականներն սկսում են հեռավոր

յերկրներ գնալ և մեր դարաշրջանից դեռ վլց հարյուր տարի առաջ հին հույները առևտրական նպատակներով գնում, հասնում ելին Յեղիպտոս, Հայաստան, Պարսկաստան, Ասորեստան, Բաբելոն, Զարգանում և առևտրական կապիտալը, ժողովուրդները շփվում են իրար հետ, քարավաններով տեղափոխում են իրենց ապրանքները, փոխագարձ կերպով իրարուց կուլտուրական նվաճումներ են ընդորինակում: Առևտրականը նախկին խաշնարածի կամ հողագործի մասն անգետ, խավար կամ սնոտիապաշտ լինել չի կարող, նա զբ-




Դ. 1 Հիատել Մելիտացուախայնի քարտեզ:

բագետ պիտի լինի, իր հաշվեմատյանները վարելու համար թվարանություն պիտի դիտենա, հեռավոր յերկրներ գնալու համար աշխարհագրութ ան հետ ծանոթ պիտի լինի, աստղաբաժնությանը տեղյակ պիտի լինի՝ իր ճանապարհի ուղղությունը վորոշելու համար (հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք-թե ցամաքի, թե ծովի վրա): Յեվ արդեն Երդ գարում Պիֆագորեան այն միտքն և հայտնում, թե յերկիրը գունդ է, սակայն դրան վոչ մի ապացույց չի կարողանում տալ:

Մեր դարաշրջանից 500 տարի առաջ հույները բրոնզից պատրաստած քարտեզներ ունեյին (տես նկար 1 Հեկատոյ Մելիտացու քարտեզը). 400 տարի առաջ հույն փիլիսոփա Արիստոտելը, յերկրի գնդաձեռության փայլուն ապացույցներ և տալիս: Նա ապացույց, վոր լուսնի խավարման ժամանակ նրա վրա ընկնող կլոր ըստվերը մեր յերկրի ստվերն և և այդ խավարումը տեղի յե ունենում այն ժամանակը, յերեք յերկիրն ընկնում և արեգակի և լուսնի մեջտեղը՝ նրանց հետ մի գծի վրա, իսկ կլոր ստվեր ունենում են միայն գնդաձե մարմինները: Տես նկ. լուսնի խավարումը Լենինգրադում (գլուխ լուսին)

Մի յերկրից մի ուրիշը գնալով, նոր յերկնքի վրա նորանոր աստղեր ենք տեսնում. նախկին վայրի աստղերի մի մասն անհետանում և մեզ համար: Այդ յերեսույթը տեղի չեր ունենալ, յեթե յերկիրը տափարակ լիներ (տես նկ. 12): Միայն նրա գնդաձե՝ լինելուցն ե, վոր ճանապարհորդությունների ժամանակ յերկնքի պատկերը մեզ համար փոխվում է: Այդ միևնույնը դուք կարող եք ստուգել եքսկուրսիաների ժամանակ: Դեռ



Նկ. 2 աստղերը տարբեր վայրերում:

հին հույները Արիստոտելից հետո նկատում եին, վոր ծովափից հեռացող կամ հեռվից դեպի ափը մոտեցող նավերը զանազան վայրերում մեզ յերեսում են վոչ իրենց ամբողջ մասերով (տես նկար 3):


Մեր դարաշրջանից առաջ՝ յերրորդ դարում հույն Երատոսթենեսը յերկագնդի միջորեյականը չափեց և գտավ, վոր նա հավասար է 250,000 ստադիայի, իսկ յերկրի շառավիղը՝ 4000 ստադիայի (մեկ ստադիան=158 մետրի):

**ԱՇԽԱՑՄԱՆՔ.** Շրջագիծ գծեցեք, կենտրոնը նշանակեցեք Օտառով, անցկացրեք շառավիղ—Ա. շրջադի և շառավիղի յերկարությունը հաշվեցեք կիլոմետրներով:

Մեր դարաշրջանի յերրորդ դարում հույն աստղաբաշխ Պտղոմեոսը յերկրագունդն ընդունում եր իբրև ինքնին անշարժ մի կենտրոն, վորի շուրջը համակենարոն շրջագծերով պտտվում են արեգակը, լուսինը, աստղերը և բոլոր մոլորակները: Պտղոմեոսյան այս տեսությունը անխախտ մնաց մինչև 16-րդ դարը, այսինքն մինչև այն հեղաշրջումը, վոր գիտության մեջ առաջ բերեց լին

աստղաբաշխ Կոպերնիկոսը (ծնվել է Լեհաստանի Տորն քաղաքում և ապրել է 1534—1630):

Կոպերնիկոսը հասկացավ, վոր Պտղոմեոսի տիեզերքի համակարգությունը սխալ է: Յեթե ընդունենք, վոր յերկրագունդն անշարժ է և արեն ու աստղերը մի որում պտտում են նրա շուրջը, այդ դեպքում հարց կծագի՝ ի՞նչ արագություն պետք է ունենան նրանք, վոր կարողանան մի որում այդ պտտուաը կատարել: Չե վոր արել յերկրից շատ հեռու յե, իսկ աստղերն անհաշիվ հեռավորության վրա յեն: Մնում եր յենթագրել, վոր նրանք իրենց պտտուաը յերկրի շուրջը պիտի կատարելին խելահեղ արագությամբ: Կոպերնիկոսն ուզեց իմանալ, թե արդյոք նույն յերկու յթները տեղի չեն ունենալ, յեթե ընդունենք, վոր արել ու աստղերի փոխարեն յերկրագունդն ինքն է մի որում պտտոյտ կատարում իր առանցքի շուրջը: Մենյակում պտտող հոլի վրա նստած մըր-



Նկար 3

Հյունը յեթե խոսել կարողանար, Պտղոմեոսի պես կպնդեր, վոր ինքը նստած է անշարժ հոլի վրա, վորի շուրջը սարսափելի արագությամբ պտտվում են սենյակի դռները, լուսամուտները, պատից կախած նկարները և այլն: Կոպերնիկոսի յերկու իտալացի աշակերտները—Զորդանա-Բրունոն (1550—1600) և Գալիլեո Գալիլեյը (1565—1642), ավելի ևս հաստատեցին իրենց ուսուցչի տեսությունը: Զորդանոն գտավ, վոր աստղերից յուրաքանչյուրը մի արեգակ և շրջապատված մեզ համար մութ, անտեսանելի մոլորակներով: Նա իրեն անվանում եր վոչ թե իտալացի, այլ տիեզերքի քաղաքացի: Գալիլեյը հնարեց հեռագիտակը և գտավ, վոր արեգակն ինքն ել է պտտում իր առանցքի շուրջը: Նո առաջինը տեսավ լուսնի սարերը և ուրիշ շատ հեռաքրքիր գլուտեր արեց: Կաթոլիկ յեկեղեցին այս նոր ուսմունքն ավետարանին հակառակ գտավ և Կոպերնիկոսի գիրքն այրեց, իսկ Զորդանա-Բրունոին 8 տարի բան-

տերում տանջելուց հետո չոռմում խարույկի վրա այրեց: Մահվան սպառնալիքով ստիպեց Գալիլեյին՝ հրաժարվել իր ուսմունքից: Սակայն թող, վորքան կուզեն, հալածեն հեղափոխականներին, նրանց հեղափոխական միտքը, հենց այդ հալածանքից ել սնունդ առնելով, ամրանում ու գարգանում եւ:

Գալիլեյից հետո գերմանացի Կեպլերը (1574—1630) գտավ յերկրագնդի և մոլորակների արելի շուրջը պտտելու ճիշտ որենքները: Իսկ անգլիացի Իսահակ Նյուտոնը (1642—1727) պարզեց յերկրագնդի և մոլորակների արելի շուրջը պտտելու բուն պատճառը (մարմինների ձգողականության որենքը): Ահա այն մեծ գյուտերը, վոր իր հազարավոր տարիների զարգացման ընթացքում արել ե մարդկությունը: Այդ գյուտերն այն հիմնաքարերն են, վորի վեց կառուցում ենք մեր այժմյան աշխարհահայացքը:


# ՅԵՐԿԻՐ

## 1. ՏԵՍԱՆԵԼԻ ՀՈՐԻԶՈՆԸ

Փորձենք մեր բաղաքից կամ գյուղից բաց դաշտը դուրս գալ: Ի՞նչ կտեսնենք.—արտեր, մարգագետիններ, անտառներ, մեր վերևում գմբեթածե յերկինք, իսկ այնտեղ, հեռվում, կարծես աշխարհի վերջն, ուր մեզ այնպես կթվա, թե յերկինքն ու յերկիրը միանում են:

Հին ժամանակ մարդիկ այնպես ելին կարծում, այսոր ել մի քանի վայրենի ցեղեր դեռ կարծում են, թե յերկիրը հակայական ու տափառ ափսե յէ, իսկ այնտեղ, ուր թվում ե, թե նա միանում ե յերկնքին, աշխարհի վերջն ե:

Միթե չեք զգացել դուք, թե ինչպես ենք ուզում գնալ, գընալ, համնել այն կետին, տեսնել այդ միացման տեղը:



Նկ. 4 տեսանելի հորիզոն. վարքան ավելի յիս բարձրանում, այնքան ավելի յի լայնանում:

Բայց գնա, վորքան կուզես, այնուամենայնիվ այդ տեղին յերեք չես համնիլ, վորովհետև այդ միացումը մեզ միայն թվում ե:

Յեթե ավելի ուշագիր դիտենք մեր շուրջը, կտեսնենք, վոր յերկնակամարի ու յերկրի այդ միացումն ամեն ուղղությամբ ե, մեզնից ել՝ հավասար հեռավորությամբ:

Շարունակենք առաջ գնալ. այդ միացման տեղն ել մեզնից կը հեռանա:

Յերկնքի ու յերկրի այդ միացման տեղը մի շրջան ե. իսկ մենք գտնվում ենք այդ շրջանի ճիշտ մեջ տեղում, կենտրոնում: Այս շրջագիծը կոչվում ե տեսանելի հորիզոն:

Վորտեղ ել կանգնելու լինենք, այդ տեսանելի հորիզոնը միշտ շրջանաձև կլինի: Մի բարձր աշտարակ կամ սար բարձրանանք, և մենք նախկին մակերեսութից ել դենը կտեսնենք. մինչև իսկ այնպիսի առարկաներ, վոր մեր նախկին բարձրությունից չեյինք նըկատել (տես նկ. 4):

Պարզ ե ուրեմն, վոր, ինչքան յերկրի մակերեսութից ավելի բարձրանանք, այնքան մեր հորիզոնն ավելի կլայնանա:

Այդ նրանից ե, վոր յերկիրը, կոր ե, ուռուցիկ. իսկ այդ հանգամանքը մեր աչքից ծածկում ե հեռավոր առարկաները:

## ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Կանգնեցեք մի լայնարձակ տեղ ու նայեցեք ձեր շուրջը. այնուհետև բարձրացեք մի բուր ու դարձյալ դիտեցեք ձեր շուրջը: Ի՞նչ վոր յերկու դեպքումն ել տեսաք հորիզոնի վրա, համեմատեցեք ու պատճեցեք տարբերությունը:

2. Վերցրեք նեղ թերթ ու վրան նկարեցեք այն բոլոր առարկաները (բլուրները, սարերը, տներն, անտառները և այլն), ի՞նչ վոր հորիզոնի վրա տեսնում եք: Այնուհետև այդ թերթի յերկու ծայրերը մոտեցրեք իրար ու միացրեք և դուք կստանաք հորիզոնի շրջապատկերը կամ պանորամը (տես պատ. 5):



## 2. ՅԵՐԿԻՐԸ ԳՈՒԽՆԴ Ե

Արել ծագելիս դուրս յեկեք և նայեցեք ձեր շուրջը: Դուք իսկույն կնկատեք, վոր արեի առաջին ճառագայթները նախ լեռների դադարին են լուսավորում, հետո նրանց միջին մասերը, գործարանների խողովակները, և միայն արել բավական բարձրանալուց հետո՝ նաև մեր վոտների տակ փոփած ամբողջ տարածությունը:

Ի՞նչու յե այսպես:

Վորովհետև յերկիրը ուռուցիկ, կորնթարթ ե:

Այն ժամանակ յերբ միայն բարձր տների կտուրն երն են լու-

սավորված, գետնին կանգնած դիտողի համար արել դեռ դուրս յեկած չի լինում:

Յերկրի այդ մասը ստվերի մեջ ե, վորովհետև արեի ճառագալիթները դեռ անմիջապես նրան չեն հասնում. յերկրի կորընթարթ լինելը բռնում ե նրանց առաջը:

Հենց այդ ե պատճառը. վոր հեռվից ոտեցող նավը մեզ միանգամից չի յերեվում, այլ մաս-մաս։ Նախ տեսնում ենք կայմի ծայրի գրոշակը, հետո խողովակները, տախտակամածը, վերջում նաև ամբողջ նավը։ Իսկ յերբ մեզնից ե հեռանում, մեր աչքից կորչում ե նախ՝ նրա ստորին մասը, հետո տախտակամածը, խողովակները, ի վերջո նաև գրոշակն ու ամբողջ նավը (տես նկ. 3):

Ուրիշ որինակ։ Յերբ մոտենում ենք քաղաքին, նախ նրա ամենաբարձր շինությունների, աշտարակների. զանգակ սաների ծայրերն ենք տեսնում, ապա տանիքները, մի քանի հարկանի տները, վերջապես նաև փողոցները։

Ճանապարհորդներն ամեն ուղղությամբ աշխարհի շուրջը պըտելով համոզվել են, վոր յերկիրն ամեն կողմից կը ու, վոչ մի հետարան չունի, այլ ազատ ընկած ե տարածության մեջ։

Յերկիրը մի ահազին գունդ ե։ Նրա տրամագիծը 12,800 կիլոմետր ե. Յեթե մետրի վերածենք, կստանանք 12,800,000 մետր, իսկ յեթե մարդու հասակը հաշվենք 2 մետր և համեմատենք յերկրի տրամագիծի հետ, կտեսնենք, վոր մարդը յերկրագնդի տրամագիծի մեկ-վեցմիլիոներորդ մասից ել փոքր ե. այսինքն 6,400,000 մարդ պիտի կանգնեցնենք իրա զլիսի, վոր ստանանք յերկրագնդի տրամագիծը։

Յեթե յերկիրը փաթաթենք գոտիով, այդ գոտին 39900 կիլոմետր յերկարություն կունենա. Իսկ յեթե համեմատելու լինենք մարդու և յերկրի մեծությունը, կտեսնենք, վոր մարդը յերկրագնդի վրա նույն ե, ինչ վոր մը ջունը մի հ կա լեռան վրա։ Հապա փորձենք համեմատել սարը յերկրագնդի հետ։

Ասիայում մի լեռնաշղթա կա, վոր կոչվում ե Հիմալայանլեռնաշղթա. Նրա գագաթներից մեկի անունն ե Հառուրի զանկար, վոր աշխարհի ամենաբարձր գագաթն ե։ Նրա բարձրությունը 9 կիլոմետր ե, վոր հագաւար ե յերկրագնդի տրամագիծի  $1/1400$  մասին։ Այդ աարը յերկրի հետ համեմատած նույն ե, ինչ վոր ավագի համեմը՝ ձմերուկի համեմատությամբ։

Տեսնում եք—թե վորքան մեծ ե յերկրագունդը, և մարդը՝ նրա համեմատությամբ վորքան չնշին ե։

## ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դիտեցեք, թե արեածագից առաջ ինչպես են սկսում աստիճանաբար լուսավորվել բարձր սարերը, որինակ՝ Մասիսը, Դվար, Արագածը, Կապուճեխը ևայլն. Նույնը կտեսնենք նաև այն զեպում, յեթե գեղի արեվի ընկած տարածությունը բոլորովին հարթ ե, արեի ճառագայթների առաջը կտրող բարձրություններ ու շենքեր չկան։ Բացատրեցեք այդ յերեսույթի պատճառները։

2. Արել մանելու ժամանակ կամպնեցեք մի ազատ ու բաց տեղ և գիտեցեք բարձր սարի լուսավորված լինելը։ Հետեցեք այդ լուսավորության փոփոխությանը և բացատրեցեք պատճառները։

3. Յեթե որական 40 կիլոմետր անցնենք, քանի՞ որում կը պտտենք յերկրի շուրջը։

4. Քանի՞ որում կարելի յե պտտել յերկրի շուրջը յերկաթուղով կամ այերոսլանով։

5. Մասիսը, վոր 5 կիլոմետր բարձրություն ունի, յերկրի տրամագծի վոր մասն ե կազմում։

## 3. ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ


Յերկրագունդն ազատ շարժվում ե տարածության մեջ։ Նրա շուրջն ոգային տարածություն ե, վոր մթնոլորտ ե կոչվում. Ոգը տարածվում ե մոտ 300 կիլոմետր գեղի վեր, վորից գենը ոգագուրկ, բոլորովին դաստարկ, անսահման ու անվերջ տարածություն ե։

Սղբում դա շատ տրորինակ կարող ե թվալ. ինչպես. ջուրը, մարդիկ և բոլոր առարկաները պահպան են յերկրագնդի վրա, այն ել վոչ միայն մեր ապրած տեղում, այլ և բոլորովին հակառակ կողմում։

Տարորինակ չե, ինչ ե։

Այս սարորինակ ե, բայց միայն առաջին հայացքից։ Յեթե մի բոպե մեզ հարցնենք, թե ուր կրկնեն մեր հակառակ կողմում ապրող մարդիկ, կպատասխանենք՝ «Ներքե»։ Սակայն ինչ ե նշանակում յե կրի վրա այդ «Ներքե»։ «Ներքե» յերկրի վրա ամեն տեղ նրա մակերեսություն ե, ուր ընկնում ե ձգած քարը. գնդսկը, և ոյլը. իսկ «վերե» գետնից գեղի յերկինք ձգվող մասն ե։ ( տեսնկ. 6 )

Մեզ համար տեսանելի յերկինքը ամեն կողմից շրջապատում է յերկր գունդը։ Վոր ավագանամասում կամ կիրակուղում ել գտնվելու լինենք, մեր ձգած քարը յերկեք յերկինք չի գնալ. նա կրկնի զերին կը նկնի։ Ուրեմն յերկրագնդի վրա ինչ վոր կա, ձգտում ե դե-



պի գետին։ Յերկիրը դեպի ինքը ձը-  
գելու, քաշելու ուժ, զորություն ունի.  
Նա քաշում է ամեն բան։

Այդ ուժը կոչվում է ձգողական  
ուժ կամ ծանրություն։

Յերկիրն ամեն բան քաշում է իր  
կողմը դեպի իր կենտրոնը։ Դրա հա-  
մար ել ինչ, վոր ընկնում է, ընկնում  
է գետին և վոչ թե դեպի յերկինք։ Ու-  
րեմն վոչ մի բան չի կարող կտրվել յերկ-

ուն 6.

լից ուղեղի յերկինք թուշել։ Նույնիսկ թուչունները չեն կարողանում  
շատ բարձր թուշել և յեթե թեմբը չթափահարեն, վայր ընկնեն։ Զու-  
րը, ողը, մարդիկ և առասարկ ամեն բան յերկրի յերեսին այդ  
ձգողական ուժի շնորհիվ են պահպում։

Տեսել եք, թե մագնիսն ինչպես է քաշում յերկաթի փոքրիկ  
կտրներ։ Ճիշտ այդպես ել յերկիրն է ամեն բան քաշում։ Շատե-  
րըն են մագնիս տեսել։ Ամենը գիտեն, վոր նա պողպատե թեր-  
թիկին կամ յերկաթե փոշուն մոտեցնելիս, վերջիններս իսկույն թըռ-  
չում ու կպչուս են նրան։ այն ել այնքան ամուր, վոր թափ տա-  
լով անգամ դժվար է պոկել։

Յեթե այդ մագնիսը յերկրագնդի չափ լիներ, իւկ փոշու հա-  
տիները մարդու չափ վերջիններս ավելի ամուր կը կպչելին, քան  
այժմ ձգողական ուժի շնորհիվ ենք կպած յերկրին։

Բայց միայն յերկիրը չե, վոր ձգում է։ առարկաներն ել են լ-  
րար ձգում, կարծես, մագնիսի փոքրիկ կտրներ լինեն։ Այդ ձգո-  
ղական ուժը տեսնելը շատ դժվար է, վորովհետեւ յերկրի ձգողա-  
կան ուժը շատ ավելի մեծ է, քան առարկաների իրար ձգելը։

Մարդն ապրում ու գործում է յերկրի վրա և միշտ աշխա-  
տում է չեղոքացնել, հաղթել այդ գորությունը։

Յերկրի յերեսին շարժվելիս լինի, թե ողում թուշելիս կամ մի  
ուրիշ ֆիզիքական աշխատանք կատարելիս, մարդն իր յեռանդի մեծ  
մասը գործ է դնում այդ ուժը հաղթահարելու վրա։ Բայց նրանից  
ազատվելու նաար չկա։ Նա միշտ և ամեն տեղ ուղեկցում է  
մարդուն։

#### 4. ՅԵՐԿՐԻ ՔԱՇԸ

Դիտնականները կարողացան յերկիրը չափել։ բայց դրանով  
չբավականացան։ նրանք կշռել ել ուզեցին։ Յեզ, յերևակայեցեք։  
հասան իրենց նպատակին։ Դրա համար բնավ պետք չկար այդ ա-

հագին գունդը զլորել, ձգել կշռոքի վրա։ հարկավոր եր միայն  
ալարզել, թե մեծ կապարե գունդն ինչ ուժով է գեպ իրեն ձգու-  
փոքրիկ կապարե գնդակին։ այնուհետև ել պարզել, թե այդ նույն  
գնդակն յերկիրը քանի անգամ ավելի ուժով կը աշ իր կողմը։  
Այսպիսով դիտնականները գտան, վոր յերկիրը  $5\frac{1}{2}$  անգամ խիտ է  
ջրից, այսինքն  $5\frac{1}{2}$  անգամ ծանր է նույն ծավալ ունեցող ջրային  
գնդից։

Մենք արդեն գիտենք յերկրագնդի տրամագիծը։ դրանից հետո  
դժվար չե յերկրի ծավալը հաշվել, իսկ այնուհետև ել յերկրի ծա-  
վալ ունեցող գնդի քաշն իւանալ։

Յերբ գիտենք, թե յերկիրը ջրից  $5\frac{1}{2}$  անգամ խիտ է, դժվար  
չե հաշվել նաև յերկրի քաշը։ նա կշռում է մոտավորապես  
 $5,960,000,000,000,000,000$  տոնն։ Մի տոննը հավասար է  
1 00 կիլոգրամի կամ 61 փթի։

Դեմ, այժմ ինքներդ իմացեք, թե յերկագունդը քանի փութ է։

Յերկաթը ջրից  $7\frac{1}{2}$  անգամ է խիտ, իսկ քարաղը՝  $2\frac{1}{2}$  ան-  
գամ։ Յերկրի խտությունը  $5\frac{1}{2}$  անգամի յե հավասար։ Այսպիսով,  
յերկրագունդն իր խտությամբ յերկաթի և քարաղի մեջ միջին տեղ  
է բռնում։ Յեթե յերկրի կեղեի հանքերը քննենք, կտեսնենք, վոր  
յերկրի կեղելը Յ անգամ խիտ է ջրից։ Ավելի խոր շերտերը յեր-  
կաթի խտություն ունեն։

Իսկ յերկաթ համարյա բոլոր յերկնաւին առարկաների վրա  
կա։ Ուրեմն, անկասկած է, վոր մեր յերկիրն ել, վոր մի յերկնա-  
կա։ յին լուսատու յե, իր մեջ ամենից շատ յերկաթ է պարունակում։

#### Փ Ա Ր Հ

Կշռեցեք և իմացեք, թե վորքան է կշռում մի բաժակ ավազը,  
դաշտից վերցրած մի բաժակ հողը, մի բաժակ կավը, մի բաժակ  
դարի կտրներ և մի բաժակ ջուրը։ Այսպիսով դուք կիմանաք յերկ-  
րի կեղեի միջին խտությունը։

ՅԵՐԿԻՆ

## 5. Збручи у нас

Յեթե վերև նայենք, մեր շուրջը կտեսնենք ջինջ, կապուտակ յերկնային կամար, փորի վրա ցերեկն արևն և փայլում, գիշերն՝ աստղերն ու լուսինը:

Ալդ ի՞նչ բան եւ


Միթե իրոք յերկըի շուրջն արդպիսի ջինջ ու կապուտակ կամար կա: Զեզնից ամեն մինը նկատած կլինի, վոր մեր և առարկաների մեջ յեղած տարածությունը մինչև մի վորոշ սահման միայն կարող ենք նկատել: Մեր տեսողությունը տարածություններն անսահման կերպով վորոշելու կարողություն չունի: Տարբեր հեռավորությունների վրա գտնվող առարկաների համար մենք կարող ենք ասել, թե նրանցից վորն ե մոտիկ, վորը հեռու. սակայն դա տեղի կունենա մինչև մի վորոշ տարածություն և կախված կլինի առարկաների խոշորությունից: Յեթե անտառը մոտիկ ե մեզ, պարզ տեսնում ենք, թե ծառերից վորն ե մոտիկ և վորը հեռու: Իսկ մեզնից հեռու ընկած անտառի ծառերը մեզ շարքավորված են յերեսում, այսպես վոր դժվար կլինի ասել, թե վոր ծառն ե մոտիկ, վորը հեռու:

Նույնը պիտի ասենք յերկնքում յերեացող աստղերի մասին։ Յերկրից հեռու գտնվող աստղերը փոփած են տարածության մեջ, մինը—հեռու, մյուսը—մոտիկ։ Մերև և աստղերի մեջ յեղած տարածությունն այնքան մեծ է, վոր սովորական աչքով չենք կարող փորոշել, թե՛ վոր աստղն ե՞ մոտիկ, վորը՝ հեռու։ Դրա համար ել մեզ այնպես ե՞ թվում, թե բոլոր աստղերն ել մեզանից հավասար հեռավորության վրա յեն գտնվում և կարծես ամուր կպած են յերկնակամարդին, ճիշտ այնպես, ինչպես անտառի ծառերն ելին շարքափորփած թվում, մինչեւ իրականության մեջ ծառերն իրարից հեռու-հեռու յեն ըուսած։

Այսպես ուրեմն, հենց միայն այն պատճառով, վոր հասարակ տշող տարածությունը փորոշել կարող ենք մինչև մի հայտնի սահ-

ման, յերեկոներն ու գիշերներն այն տպավորությունն է ստացվում, թե մեր վերել, յերկնակամարի վրա, մեզնից դեպի ամեն կողմ հավասար հեռավորությամբ աստղեր են փռված. (տես պատկ. 6):

**Մեր** վերևում վոչ մի այդպիսի ջինջ յերկնակամար չկա։ Այդ կամարը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մեր տեսողության խաբսը, պատրանքը։



84. 7

Տեսանելի յերկինք ու աեսանելի հորիզոն. Ա, Բ, Գ—աստղերի իսկական տեղը տարածության մեջ, ա, բ, գ—նույն աստղերի տեսանելի տեղը յերկնակամարի դրա:

**Մեզնից վերև միայն ող ե, վոր շնչում ենք, վոր ուսցնում ենավերի առագաստները, պտտեցնում ե հողմաղացների թեվերը և տերեների մեջ սոսափյուն ե առաջ բերում։ Մաքուր ողն իսպառ թափանցիկ ե. նրա միջով յերկնային լուսատուների լույսը բոլորովին ազատ ե անցնում։**

Յերկինքը ցերեկն ել և մեզ կամար թվում, վորովհետև արելի ձառագայթները յերկիրը Մջապատող ողի յուրաքանչյուր մասնիկից անդրադառնում են. Յերկրից հեռու ընկած ողի այդ լուսավորված մասնիկները մեզ նույնպես են թվում, ինչպես աստղերը գիշերը, այսինքն՝ կարծես մեզնից սիևնույն տարածության վրա յեն և կամար են կապում յերկրի շուրջը:

Պարզ որին, մանավանդ անձրեից հետո, լերկինքը կապույտ և  
լեռնեսմ:

Յերկնքի կապույտ յերևալը նույն պատճառներից և առաջ գալիս, ինչից առհասարակ, բարձրության մեջ մարմինների գույնը: Այն եւ յեթե լույսի ճառագայթը դիտենք ապակե պղիզմայի միջով, նա Շ գունավոր ճառագայթներ ունեցող կերևա. — կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, յերկնագույն, կապույտ և մանիշա-

կագույն: Բնության մեջ զանազան մարմիններ այդ ճառագայթներից մի քանիսին կլանում, իսկ մյուսներին անդրադարձնում են: Մարմինն այն ճառագայթների գույնն եւ ստանում, վորոնցից շատ եւ անդրադարձնում: Ջինջ ողի մասնիկները գլխավորապես յերկնագույն ու կապույտ ճառագայթներն են անդրադարձնում. դրա համար եւ յերկնագույն մեզ այդպես կապտագույն եւ յերկում:

Արեւ, լուսավորելով մեզնից վերև գանված ողբ, թույլ չի տալիս, վոր ցերեկն աստղեր տեսնենք, չսայելով, վոր նրանք գիշեր ու ցերեկ յերկնքումն են: Իրոք. յեթե իջնենք մի խոր ջրհոր, կամ աստղաբաշխական հատուկ դիտակով նայենք յերկնքին, ցերեկն ել աստղեր կտեսնենք:

Գրհորում կամ հեռագիտակով նայելիս, մենք աչքներս պաշտպանում ենք լույսի այն ճառագայթներից, վոր անդրադարձնում են մեզ շրջապատող ողբ։ Եյդ դեպքում աստղից յեկող լույսն ավելի ուժեղ է լինում, քան մեզ շրջապատող ողի լույսը։ Դրանից ել աստղը յերկնքում տեսանելի յե դառնում։

## ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Ամառը դիտեցեք յերկնքի գույնն անձրևից առաջ ել, հետո յել. համեմատեցեք ձեր տեսածն ու յեզրակացություն հանեցեք:
  2. Աշնանը կամ ձմեռը յերկնքի գույնը դիտեցեք պարզ յեղանակին ել, ամպոտ որն ել. Համեմատեցեք յերկնքի գույնն ու գրեշերը, թե լերը ե յերկինքն ավելի բարձր լինում:

#### **6. ԱՐԵՎԱԾԱԳՆ ՈՒ ԱՐԵՎԱՄՈՒՏ**

Աւշուշտ արևի մայր մտնելն ամենքդ տեսել եք: Իսկ արևա-  
ծաղը: Յեթե յերբեք չեք տեսել, անպատճառ տեսեք. շատ ե հե-  
տաքրքիր: Տեսնելը և այդ տեսարանով հիանալը բավական չե: Ա-  
րեվածակը պիտի մի քանի անգամ, այն ել լավ դիտել: Այդ ժա-  
մանակ հորիզոնը հետզհետե լուսավորվում ե, արևելքում նա դառ-  
նում և մուգ-կարմիր, վոսկեգույն կամ վարդագույն, վորից հետո  
բարձրանում ե ինըը, մուգ-կարմիր արևը: Նոր ծագելիս նա մեզ  
ավելի սեծ ե թվում, քան ցերեկն ե յերեսում: Նույն ե կատար-  
վում արևը մայր մտնելիս:

Նկարեցեք արևին ըստ ձեր դիտածի՝ ծագելու և մայր մտնելու ժամանակ. այդ նկարը ներկեցեք գունավոր մատիտներով կամ ներկերով։ Նույնը կրկնեցեք մի քանի անգամ. և դուք կտեսնեք, վորտարվա տարբեր ժամանակներում, մայր մտնող արևի գույնն ու տեսքը տարբեր կլինեն։ Տարբեր կլինեն նաև հորիզոնի այն մասի գույնն ու տեսքը, ուր արևին ե մայր մտնում։

ԹԵ ԾԱԳԻԼԻՄ, ԹԵ ՄԱԼՐ ՄԹՆԵԼԻՄ, արևն ամենից շատ ձվածիլ  
տեսք ունի:



Նկար :8 արևը հորիզոնի մոտ

Քամու կամ անձրեսոտ յեղանակին արևի տեսքը հորիզոնի մոտ անկանոն ձև ունի, վոր հաճախ խիստ տարբերվում ե ձվածիր լինելուց:

Թե ծագելիս, թե մայր մտնելիս արևն ավելի մեծ է յերեսում, քան կեսորին մոտ. Յերկի ձեզնից ամեն մինը նկատած կլինի, վոր յեթե ջրով լիքը բաժակում մի գդալ դնենք ու. կողքից նայենք, գդալը մեզ կոտրած կթվա, այսինքն վհչ այնպես, ինչպես իրականության մեջ կա:

Ճիշտ այսպես եւ հորիզոնին մոտեցող արևի տեսքի այդ աղավաղումը բացատրվում է նրանով, վոր ողի ազդեցության տակ լույսի ճառագայթները մեծ չափով ու անկանոն կերպով են բեկվում:

Արևի ծագելու և մայր մտնելու ժամանակ հորիզոնի շառագունելը նույնպես լույսի ճառագայթների մթնոլորտում տեղի ունեցած տարբեր բեկումներով պիտի բացատրել:

Արել մայր մտնելիս, յերկինքն այն ժամանակ է մուգ-կարմիր զույնով յերևում, յերբ ոդում շատ գոլորշիներ կամ առանձին ժամանելու կամ: Սովորաբար այդ գույնն են ստանում վոչ միայն յերկինքը, այլ և հորիզոնին մոտ գտնվող ամպերը: Մուգ-կարմիր գույնը յեղանակի վատանալը ցույց տվող նշաններից մինն ե: Յերկինքը վոսկե-վարդագույն ե լինում չոր յեղանակին, յերբ ոդի մեջ ջրային մասնիկներ քիչ կամ: Յերբեմն վարդագույնն ավելի յե գերակում: Նա կամ աղեղի ձեռվ ե յերևում հորիզոնի ուղղությամբ կամ շրջանաձև՝ մայր մտնող արևի վրա: Յերբեմն ել խիստ վոսկեգույն ե բոնում ամբողջ հորիզոնը:

Արժե ուշադրությամբ հետեւել, թե այդ վոսկեգույնը վորքան կտեվի: Յեթե նա կարճատև լինի, միայն 10—15 ըոպե, կարող ենք ասել, վոր վաղը լավ յեղանակ կլինի, բայց թե ինչպիսի յեղանակ կլինի մյուս որը, հայտնի չե: Իսկ յեթե այդ գույնն յերկար դիմանա, այդ նշան ե, վոր մի քանի որ շարունակ լավ յեղանակ կը լինի:

Արեածագի հենց սկզբում կամ արևամուտի վերջին ըոպեյին, յերբ արեի վերջին շողն ե թոշում, յերբեմն հազվագյուտ հետաքրքիր տեսարան ե յերեան գալիս ու արևի ճիշտ մայր մտած տեղում մի վառ-կանաչ փայլ ե բռնկվում: Դա, այսպես կոչված, կանաչ ճառագայթը կամ կանաչ շողն ե:

Կանաչ ճառագայթն ավելի լավ կարելի յե տեսնել սարից, կամ բարձր շինությունների վրայից, յերբ արևը հորիզոնից իջնում ե բաց հարթության կամ ծովի վրա: Կանաչ ճառագայթն ամենից լավ յերևում ե հյուսիսային լայնության յերկրներում և տարվա ամենայերկար որերին:

Մայր մտնելուց մի քանի վայրկյան առաջ արևի շուրջը սպիտակագույն, յերբեմն ել կանաչավուն գույն ե ստանում: Իսկ մայր մտնելու վայրկյանին կանաչ ճառագայթն ե բռնկում, վոր արևից մի քանի վայրկյան հետո յել պարզ տեսնվում ե: Պիտի ասել, վոր կանաչ ճառագայթի տեսարանը տարբեր կերպով ե տեղի ունենում: Այդ տեսարանը շատ հազվագյուտ ե, գեղեցկությամբ ել անչափ դրավիչ: Աշխատեցեք տեսնել այդ ճառագայթը և ճշտությամբ նկարագրել այդ արտասովոր տեսարանը:

#### ՄԵՐ ԴԵՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիտեցեք, թե ծագող արևն ինչ հաջորդականությամբ ե լուսավորում սարերը: Գրեցեք ձեր դիտողության տետրակներում, հիշատակելով ամիսը, թիվը, որը, ժամը և ըոպեները:

2. Նույնը կրկնեցեք մի ամսից հետո և համեմատեցեք:

3. Դիտեցեք ծագող ու մայր մտնող արևի գունավորումները: Ձեր դիտողությունը նկարեցեք տետրակներում, նշանակելով ամիսը, թիվը, շաբաթի որը, ժամն ու ըոպեները. շմուսնաք հիշել, թե արևի գույնն ու ձեն ինչպես փոփոխվեցին: Նշանակեցեք նաև, ինդանակի դրությունը:

4. Դիտեցեք յերկնը գունավորումը՝ արևի մայր մտնելու ժամանակ: Նրա տեսղականությունը. Նկարեցեք ձեր տեսածը և զրեցեք, թե ձեր կարծիքով՝ ինչ տեսարան ե սպասվում: Հաջորդ որն արտագրեցեք, թե վորքան ճիշտ եք գուշակել, և այդ բանն անցկացրեք ձեր դիտողությունների տետրակը:

#### 7. ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԵՐԸ

Յերկրի յերեսին չմոլորվելու համար մարդիկ տեսանելի հորիզոնի վրա չորս հաստատուն կետեր, կամ ինչպես ասում են, կողմեր են նշել.—հարավ, հյուսիս, արևելք և արևմուտք: Այդ կետերից յուրաքանչյուրն իր տեղում մշտական ե:

Հարավն հորիզոնի այն կետն ե, վորի վրա կեսորին արևն ե լինում, սրա հակադիր կետը հյուսիսն ե: Յեթե յերեսներս դարձնենք դեպի հարավ, մեր ձախ կողմում, հյուսիսի և հարավի ուղիղ մեջտեղում կլինի արևելքը, իսկ աջ կողմում՝ արևմուտքը (աես նկար 9):

Արևելք և արևմուտք ցույց  
տվող կետերը չպետք ե շփոթել  
արևի ծագելը և մտնելը ցույց  
տվող կետերի հետ:

«Հյուսիս—հարավ» գիծը կոչ-  
վում ե կեսորյա կամ միջորյա  
գիծ, գորովհետև կեսորին արևի  
հորիզոնի վրա յեղած ժամանակ  
առարկաների ամենակարծ սավե-  
րը նրա ուղղությամբ ե ընկնում:

Այդ գիծը սարգու դիրքը յերկ-  
րի վրա վորոշելու խնդրում ահազին նշանակություն ունի, վորով-  
հետեւ նա վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի տեղի աշխարհագրական մի-  
ջորելական: Հյուսիսի կետը ցույց ե տալիս այն ուղղությունը,  
վոր տանում ե դեպի յերկրագնդի հյուսիսային բևեռը. իսկ հարա-  
վի կետը՝ դիտողի տեղից ուղղությունը դեպի հարավ:

«Օրեւելք—արևմուտք» գիծը տեղի զուգահեռն ե, վոր մենք  
տեսնում ենք գլորուսի վրա:

ովուսից


թղթ

իտուս

նկար 9. աշխարհի կողմերը

Փորձեցեք այժմ դպրոցի բակում ցցերով կամ փայտիկներով աշխարհի արդ չորս կողմերը վորոշել:

Առաջին ձեւ գրա համար շատ բան հարկավոր չե. պետք է ունենալ 5 ցից, կողմացույց, տախտակ, մատիտ, չորս պղնձե մեխ կամ քորոց (տես նկ. 10): Մեխերն անպայման պետք ե պղնձից լինեն և վոչ յերկաթից. վորովհետև յերկաթե, մեխերը իրենց կողմը կծան մագնիսե սլաքը, վոր դրանից հետո սխալ ցույց կտա: Յեթե պղնձե մեխեր կամ քորոցներ չկան, կարե մի յե վերցնել չորս լուցկի:



Նախորոք պետք ե կողմացույցը դնել տախտակի մեջտեղը և նրա լծակի ոգնությամբ ազատ թողնել մագնիսե սլաքն այնքան, որ կարողանա ազատ պտտովել: Այսուհետև սպասել, վոր սլաքը բոլորովին հանգստանա, դրանից հետո սլաքի ուղղությամբ տախտակի վրա մատիտով գիծ քաշել: Այդ գծի յերկու ծայրերում մեխեր, քորոցներ կամ լուցկիներ անկել, ինչպես ցույց ե տրված նկ. 11-ում: Տախտակի վրա՝ ճիշտ կողմացույցի մեջտեղում մատիտով գիծ անցկացրեք, վոր «հյուսիս - հարավ» գծին ուղղահայց լինի և նրա հետ ուղիղ անկյուն կազմի: Դա կինի «արեելք - արեմուտք» ուղղությունը: Այս ուղղությունն ել նշանակեցեք քորոցներով կամ մեխերով, ինչպես ցույց ե տրված նկարի վրա: Այժմ ցիցը տնկեցեք այստեղ, վորտեղից դուք դիտում եք: Դա կը լինի դիտողի ցիցը, Վրան գրեցեք Դ տառը:

Այժմ տախտակը կողմացույցի հետ միասին զգուշությամբ հորիզոնական ուղղությամբ դրեք ցցի վրա այնպես, վոր կողմացույցի կենտրոնը ուղիղ ցցի վրա ընկնի:


Ինչպես տեղափոխելիս, այնպես ել դիտելիս՝ կողմացույցը ընալ չպետք ե շարժվի:

Յերբ բոլորովին սլաքը կհանգստանա, տախտակը զգուշությամբ պատցըք այնպես, վոր մագնիսե սլաքը զուգադիպե տախտակի վրա քաշած «հյուսիս - հարավ» գծին: Հետո ընկերներից մեկը թող տախտակի վրա տնկած քորոցների ուղղությամբ նշան բռնի, «հյուսիս - հարավ»-ը, իսկ մի ուրիշ ընկեր ձեռքի ցիցն աշխատի այնպես անկել, վոր զուգադիպե «հյուսիս - հարավ» քորոցների ուղղությանը:

Նույն ձեռվ բակում ցցեր տնկենք տախտակի մյուս կողմում՝ «հյուսիս - հարավ» ուղղությամբ: Այն ցիցը, դեպի վորը դարձած ե սլաքի կապույտ ծայրը, կինի հյուսիսի կետը: Նրա վրա գրենք

հյուսիս. հանդիպակաց ցցի վրա գրենք հարավ: Մենք արդեն գտանք մեզ համար ամենակարենը ուղղությունը: Տախտակին ամբացը քորոցների վրայով արեելք և արեմուտք ցույց տվող կետը նշան բռնելով, նույնն անենք, այսինքն ցցեր անկենք, վրաները նշանակելով արեելքը, արեմուտքը: Չառանանք միայն, վոր յեթե յերեսով կանգնենք դեպի հարավ, արեմուտքը կինի մեր աջ կողմում, իսկ արեելքը՝ ձախ:

Աշխարհի կողմերը և մեր դիտելու տեղը ցույց տվող ցցերը հողում տնկած ել թողնենք. հետագայում նրանք մեզ պետք կգան: Վորով՝ նկար 11, կողմացույցով հետև յերկինքն այդ տեղից ենք դիտում, վրա աշխարհի կողմերը գործելը համար անվանենք այդ հրապարակը մեր աստղաբարձրական հրապարակ:



Նկար 12. Մեր աստղաբարձրական հրապարակը

Յերկը որդ ձեւ Հողի վրա աշխարհի կողմերն ուրիշ կերպ ել կարելի յե վորոշել:

Յեթե բակում մի բարձր ձող անկենք, կտեսնենք, վոր մի հնույն որը ձողի ստվերն իր ուղղությունն ու յերկարությունը կը փոխի: Ամենայերկար ստվերն արեւ ծագելիս և մայր մոնելիս կը լինի:

Յեթե որվա ընթացքում հետեւնք ստվերի մեծությանը, կտեսնենք, վոր ժամի 12-ին ամենակարճ ստվերը կինի: Նշանելով ձողի ամենակարճ ստվերի յերկարությունն յերկրորդ ցցի ոգնությամբ, վոր պետք ե տնկել ստվերի ծայրում, կտանանք միջորեյի գծի յերկարությունը:

Ամենակարճ ստվերի ոգնությամբ իմացանք միջորեյի գծի ուղղությունը։ Այժմ շատ հեշտ է գտնել դրա վրա ուղղահայաց իջնող «արևելք—արևմուտք» ուղղությունը։

Ցցեր տնկելով նշանակեցեք հարավ, հյուսիս, արևելք, արևմուտք։ Այս ել ձեզ աշխարհի կողմերը վորոշելու յերկրորդ ձեռ։

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1 Դպրոցի բակում աստղաբաշխական հրապարակ շինեցեք, դրա համար վերցրեք բաց հրապարակ։ Կողմնացույցի ոգնությունը ստվերի ոգնությամբ թիւմք դպրոցի բակում վորոշելու տեղի միջորեյականը վորոշելք ցեք աշխարհի կողմերը՝ և դրանց ու դիտելու տեղը ցցերով նշան արեք։ տեղի միջորեյականը—«հյուսիս—հարավ» ծածկեցեք հողակոշտով։ Նույն արեք «արևելք—արևմուտք» ուղղության համար։

2. Աշխարհի կողմերի այս վորոշումը ստուգեցեք յերկրորդ ձեռով՝ դիտելով ձողի ամենակարճ ստվերը։

#### 8. ՅԵԿՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԸ


Պարզ գիշերին հվ չի տեսել կապույտ յերկինքը՝ զուգված աստղերով։ Ցեվ վորքան շատ են այդ աստղերը։ Կարծես թիվ ու համար չունեն։

Բայց մարդիկ մեզնից գեռ հազարավոր տարիներ առաջ են սովորել ուշադիր կերպով դիտել ու նույն խոր ճանաչել այդ աստղերը։

Այդ հեռագոր ժամանակներում, յերբ մարդիկ գեռ վոչ ժամացույց ունեյին, վոչ որացույց, դիտելով ճանաչում ելին աստղերը, նրանցով ել գիշերվա ընթացքում վորոշում ժամանակը։ Աստղերով—արևով նրանք գուշակում ելին տարվա յեղանակները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ։

Աշխարհի յերեսին չմոլորվելու համար ծովագնացները գիշերն իրենց նավերը վարում ելին աստղերով։ Խոր ճանումը հովիվները մըթին անտառներում ու դաշտերում գիշերն իրենց ճանապարհն աստղերով ելին գտնում։

Մարդիկ հետզիետե սովորեցին վոչ միայն մի աստղը մյուսից տարբերել, այլ և նկատել, վոր աստղերն իրար վերաբերությամբ իրենց դիրքը յերբեք չեն փոխում։ Նրանք նկատեցին, վոր աստղերը յերկնքում զանազան ձևերով են փոփած։ Այդ ձևերը կամ խըլքերը միշտ իրենց պատկերը պահում են։ Աստղերի այդ խմբերը համաստեղություններ են կոչվում։



Այդ համաստեղություններին մարդիկ զանազան անուններ տվին։ Մարդը ճանաչեց նույն խոր առանձին աստղերը, և նրանց անուններ տվավ։ Խոր յերբ ավելի զարգացավ, համեմատեց նաև տեսանելի ու անտեսանելի աստղերը։

Բանից դուրս ե գալիս, վոր տեսանելի աստղերը, վորոնք անթիվ, անհամար են թվում, առանց հեռագիտակի նայելիս 6000-ից ավելի չեն յերեսում։

Մեր հորիզոնի վրա բարձրացող յերկնակամարը աստղալից յերկնքի միայն կեսն ե բոնում ուրեմն տեսանելի աստղերի միայն կեսը, այսինքն միայն 3000 հատ են մեզ յերեսում։

Մի ասաղը մյուսից տարբերելը բնավ դժվար չե։ մի շարք աստղեր ավելի վառ են փայլում։ մի քանիսներն ավելի թույլ վոմանք կարմրավուն են, վոմանք ել սպիտակավուն կամ ուրիշ գույնի։

Ըստ իրենց փայլի ել աստղերը բաժանվում են մեծությունների։ Այենից փայլուններն առաջին կարգի մեծության աստղեր են։ Դրանք թվով 19-են։—Արկտուր, Կապելլա, Վեգա, Սիրիոս և այլն (տես աստղաքարտեզ)։

Յերկրորդ մեծության աստղերը—69 են։ Մեծ Արջի աստղեր և այլն (տես նույն քարտեզ)։



Նկ. 13. 1—6-րդ մեծության աստղեր

Յերրորդ մեծության աստղերը 200 են, թույլ փայլ ունեցող աստղերը թվով ավելի շատ են։

Առանց խողովակի, հասարակ աշքով մենք միայն մինչև 6-րդ մեծության աստղերն ենք տեսնում։ (Տես Նկ. 13)։

Ինչպես ասացինք, այդ տեսանելի աստղերի թիվը 6000-ից ավելի չե։ Յեթե վերցնենք մի դիտակ (բինուլ), թեկուզ ամենահասարակը, վոր մենք գործ ենք ածում թատրոններում, կտեսնենք 7 րդ, 8-րդ և այլն մեծության աստղերը։ Այդ արգեն կարսված կըլինի դիտակի ուժից։ Ամենաուժեղ հեռագիտակով կարելի յե մինչև 14-րդ մեծության աստղեր տեսնել։ Այդ աստղերն ել են համարված։ Բանից դուրս ե գալիս, վոր ամենաուժեղ հեռագիտակով յերեացող աստղերի թիվը ընդամենը 42 միլիոն ե։

Ուրեմն տեսանելի աստղերն անթիվ, անհամար չեն, ինչպես մեզ առաջին հայացքից թվում եր։

Աստղերից, արկից ու լուսնից բացի յերկնային մոլորակների թըլլին են պատկանում այսպես կոչված մոլորակները։ Մոլորակնշանակում ե մոլորված, թափառող, շարժում ունեցող աստղ։ Հասարակ աչքին նա նույնպիսի լուսավոր կետ ե յերեսում, ինչպես և աստղը, այն տարբերությամբ, վոր նա աստղի չափ ուժեղ չի առկայժում, այլ վառվում ե ավելի միապաղադ ու վառ լույսով։ Բայց բավական ե միայն դիտակը վերցնել, և իսկույն աչքի կը կնկնի աստղի ու մոլորակի տարբերությունը։ Աստղը կետ ե յերեսում, իսկ մոլորակը՝ ըջանակ։

Առանց դիտակի, հասարակ աչքով դժվար չե տարբերել մոլորակն աստղից։ Միայն հարկավոր ե ուշադիր կերպով դիտել նրա դիրքը։ Այն ժամանակ, յերբ աստղերն իրար վերաբերությամբ հաստատուն դիրք են պահում, մոլորակը մոտենում ե՝ մեկ այս, մեկ այն աստղին։

Դեռ հեռավոր հնումը մարդիկ 5 մոլորակ գիտեյին։ — Հերմես կամ Տյուր (Մերկուր), Արուսակ (Վեներա), Հրանտ (Մարս). Լուսնթագ (Յուպիտեր), և Կրօնոս (Սատուրն)։

Սրանց առանց հեռադիտակի յել կարելի յե գտնել։

Յերկու մոլորակներ ել կան — Ուրան և Նեպտոն. վորոնք, սակայն առանց հեռադիտակի չեն յերեսում։

Յերկնքում յերբեմն մի ուրիշ տեսակի լուսատուներ ել են յերեսում մթագնած գլխով ու պոչով։ Դրանք գիսաստղերը կամ պոչավոր աստղերն են, վորոնք ըստ մեծի մասին հայտնվում են անսպասելի կերպով, մնում են յերկնակամարի վրա մի քանի որ կամ շաբաթ, փոխում են վոչ միայն իրենց դիրքն աստղերի վերաբերությամբ, այլ և տեսքը։

Զեղսից ով չի տեսել աստղերի թռչելը յերկնքում, դրանք, այսպես կոչված, վայր ընկնող աստղերն են։ Զեղսի թե կարծում եք, թե՝ իրոք յերկնքի վորեւ համաստեղությունից աստղ ընկավ։ Ամենենին վոչ։

Աստղերն իրենց տեղում անմխաս են և փայլում են առաջվապես։ Թոշողն ու մեր մթնոլորտում այրվողը փոքրիկ մթին մետեղը քար եր, վոր՝ ողի հետ շփվելուց առկայժեց ու ամբողջովին այրվեց, իր ետեից թողնելով այն հետքը, վոր տեսնում ենք։ Մուրակների, զիսաստղերի և ընկնող աստղերի մասին մանրամասն կիսունք «մոլորակների աշխարհ» և «գիսաստղերի աշխարհ» դըլուխներում։

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Ուշադիր կերպով նայեցեք, թե այսոր, արկը մտնելուց վորքան անց կերեա առաջին աստղը։

2. Այդ դիտողությունը կատարեցեք ոգոսառոսի, սեպտեմբերի, հոկտեմբերի, նոյեմբերի և դեկտեմբերի կեսերին։ Դրեցեք ձեր տետրակներում և համեմատեցեք։


#### 9. ԱՄՏՎԱՅԻՆ ՅԵՐԿՆՔԻ ՏԵՍՔԸ

Պարզ գիշերին ուշադիր նայեցեք յերկնքին։ ձեր հայացքն ակամա կանգ կառնի մի ամբողջ խումբ աստղերի կամ հատ պայծառ աստղերի վրա։

Դուք մեկեն կուզեք իմանալ, թե այն ինչ աստղ ե, ինչպես ե կոչվում, և մի ուրիշ անդամ ել ինչպես նրան գտնեք։

Վորպեսզի համաստեղություն կամ աստղ գտնելը հեշտ լինի, պետք ե գոնե մի համաստեղության տեղն իմանալ։

Այ ձեզ մի համաստեղություն, վոր յերեի ամենքը գիտեն։ Դա Մեծ Արջ համաստեղությունն ե։ Հենց այս յերեկո աշխատեցեք նրան գտնել, ի հարկե, յեթե յերկինքը պարզ լինի։



Նկ. 14

Հյուսիսային աստղալից յերկնքի տեսքը և թե ինչպես գտնել համաստեղությունը

Այդ համաստեղության մեջ յերկրորդ մեծության յոթն աստղեր կան. ընկած են կոթավոր կաթսայի ձեռվ։ Զեր ուշադիրունը մեկեն կը սեվեռեք դրանց վրա։ Այդ համաստեղությունը կամ յերկնքի հենց մեջ տեղումն ե լինում կամ նրա հյուսիսային կողմում։ Յեթե մեր մտքում գծով միացնենք Մեծ Արջի յերկու ձայրերի աստղերը և այդ գիծը շարունակենք, ասենք, այնքան հեռա-

վորությամբ, վորքան ե կաթսայի քթից մինչև նրա կոթը, (տես նկար 14), մենք կդանենք յերկնքի ամենակարևով աստղը - Բեկեռային աստղը կամ Աշխարհի բևեռը:

Բոլոր աստղերից միայն սա յե, վոր յերեսում ե միշտ միենույն տեղում, յերկնքի մեջ տեղից վոչ հեռու, ուղիղ դեպի հյուսիս. Գիշերվա վոր ժամին ուզեք, դուք այդ աստղով կդանենք նույն տեղում հյուսիսը. Ով սրան գտնելը գիտե, նա գիշերը յեթե մուրզի յել, կիմանա, թե վոր կողմը պիտի գնա:

Յեթե յերեսներս դարձնենք դեպի Բեկեռային աստղը, հորիզոնի վրա ուղիղ մեր դիմացը, հյուսիս կինի, մեր յետել՝ հարավը, աջ կողյում՝ արեւելքը, ձախում՝ արևմուտքը. Հենց գրա համար ել բոլոր հատակագծերի ու քարտեզների վրա հյուսիսը նշանակվում ե վերեւում. հարավը ներքեւում, արևելքն՝ աջ և արևմուտքը՝ ձախ կողմերում:


Իր փայլով Բեկեռային աստղը յերկրորդ մեծության ե պատկանում ե այն համաստեղությանը, վոր կոչվում է Փոքր Արջ. Այս համաստեղությունն ել ե կաթսայի նըան, միայն, թե Մեծ Արջից փոքր ե և հակառակ կողմը դարձած: Բեկեռային աստղը այդ կաթսայի կոթի հենց ծայրին ե գտնվում: Բավական ե գտնել սրան, և մենք իսկույն կդանենք Փոքր Արջ համաստեղությունը:

Հենց վոր գտանք Բեկեռային աստղը, իսկույն մեր աստղաբաշխական հրապարակում ցուցանակ տնկենք՝ վոր նայի դեպի այդ նըանակալից աստղը:

Դրա համար դիտողի ցցի կողքին պիտի տնկել աշխարհի բեկեռացույցը (տես մեր աստղաբաշխական հրապարակի հատակագիծը): Այս ցիցը պիտի  $1\frac{1}{2}$  արշին բարձրություն և  $1\frac{1}{2}$  մատնաչափ (ման) հաստություն ունենա. դրան մի քանոն պիտի կպցնել (տես նկար

15), վոր պիտի դարձած լինի ուղիղ դեպի Բեկեռային աստղը: Այդ ցուցանակը միշտ ել մեզ կասի, թե վորտեղ ե գտնվում աշխարհի բեկեռը:

Յեթե պետք ե գտնել նաև Մեծ Արջ համաստեղության մոտ ընկած մյուս համաստեղությունները, հարկավոր ե համաձայն նկար 14-ի ցուցմունքի, մտքով գծեր անցկացնել յերկրի վրայով: Որինակ. յեթե Մեծ Արջի պոչը շարունակենք, կդանենք Յեղնարած գեղեցիկ համաստեղությունը իր միջի առաջին մեծության և գեղեցիկ Արջապան կամ Արկտուր աստղով: Սա արջերի հոչակավոր հետապնդողն ե,



28

վորին մարդը գեռ խոր հնութիւն եր ճանաչում: Յեղնարածի գլխավերելը պնակի նման ընկած ե Հյուսիսային թագ համաստեղությունն իր Գեմմա կամ Մարգարիտ կոչված պայծառ աստղով:

Յեթե մի անգամ գտնեք այս համաստեղությունները գուք նըրանց այլևս չեք կորցնի:

Շարունակեցեք Մեծ Արջի կաթսայի վերի յերկու աստղերի միացնող գիծը, և դուք մի հինգանկյունի կդանենք փայլուն աստղերից: Դա կառպան հյուսիսային համաստեղությունն ե, վորի մենամեծ ու պայծառ աստղը կապելլան ե:

Յեթե Մեծ Արջի կաթսայի ծայրի կողմի յերկու աստղերի վըրայով մտքով գիծ անցկացնենք, միայն բեկեռային աստղի հակառակ ուղղությամբ (տես նկար 14) մենք պարզ կտեսնենք աստղերի ուսւական հարցական միայն հակառակ կողմը դարձած նշանի (?) ձև ունեցող մի խումբ: Դա Առյուծ համաստեղության գլուխն ները Այժմ շատ հեշտ կլինի գտնել՝ թե ամբողջ համաստեղությունը նրա ամենափայլուն աստղը, վոր Ռեգուլ (Առյուծի սիրտ) աշունն ունի: Այս աստղը առաջին մեծության ե և բաց-կապտավուն գույն ունի:

Յեթե Մեծ Արջի կաթսայի վրայով մի անկյունից մյուսը մըտքով գիծ անցկացնենք, (նկար 14) մենք կդանենք Յերկորյակների համաստեղությունը՝ Պոլուկս - առաջին մեծության և կաստոր յերկրորդ մեծության աստղերով:

Այսպես ուրեմն, յեթե ձեռքի տակ ունենք աստղաբարտեզը և կարողանանք մի համաստեղություն գտնել, ու այնուհետև վորեն ծանօթ համաստեղությունից զանազան ուղղությամբ մտքով գծեր անցկացնենք, կարող ենք ուսումնասիրել յերկինքը, կճանաչենք յուրաքանչյուր համաստեղություն և հեշտությամբ կդանենք ուղած համաստեղությունը:

#### ՄԵՐ ԴԵՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Աստղաբաշխական հրապարակում սարքեցեք Բեկեռային աստղացույցը.

2. Յերկնքում գտեք Մեծ Արջի համաստեղությունը և ձեր տերակում նկարեցեք նրա դիրքը. նշանակելով ձեր կատարած աշխատանքի տմսաթիվը ու ժամը:

3. Գտեք Բեկեռային աստղը և նրանով ստուգեցեք միջորեյի, այսինքն «հյուսիս—հարավ» գիծը:

4. Գտեք Յեղնարած և Հյուսիսային թագ համաստեղությունը, այլ և Արկտուր և Մարգարիտ (Գեմմա) աստղերը:

Համեմատեցեք դրանց գույներն ու փայլը: Նշանակեցեք ձեր տես-  
րում:

5. Գտեք Կառապանն ու Կապելլան. ձեր դիտողությունը նկա-  
րեցեք ձեր տետրում:

6. Գտեք Առյուծ համաստեղությունն ու Առյուծի սիրտը—Ռե-  
գուլը՝ նկարեցեք տետրում:

7. Գտեք Յերկվորյակների համաստեղծությունն ու Կաստոր և  
Պոլուկս աստղերը: Համեմատեցեք այս համաստեղության աստղերը:  
Վորոնը են ամենափայլուն աստղերը: Նկարեցեք այս համաստեղու-  
թյունը և նշաններով ցուց տվեք այդ աստղերի փայլի աստիճանը  
(զանազան մեծության շրջանակներով.—ամենափայլուն աստղը նը-  
շանակել ամենամեծ շրջանակով):

#### 10. ՅԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՄԱՐԻ ՄԻՈՐՅԱ ՅԵՐԵՎՈՒՅԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Դուքս գանք մեր աստղաբաշխական հրապարակը և մոտենանք  
դիտողի ձողին (տես մեր աստղաբաշխական հրապարակը) 2—3  
մետր հեռու դիտողի ցցից, դեպի հարավի կետը ուղղահայաց կեր-  
պով մի ձող տնկենք միջորելի գծի վրա:

Այդ ձողի յերկարությունը մոտ յերկու մետր պիտի լինի,  
իսկ հաստությունը 3—4 սանտիմետր նրա մի ծալը պիտի սրել,  
վոր ավելի հեշտ գնա հողի մեջ. գետնի մեջ պիտի լինի նրա մոտ  
մետրը, ինքը բոլորովին ուղղահայաց կանգնած լինի (կապարա-  
լարի ուղղությամբ) այս ձողը մենք կանվանենք միջորեյական ձող:

Յեթե բեեռացույցի և այս ձողի վրայով մի այնպիսի մեծ  
հարթություն անց կացնենք, վորը կպչի յերկնակամարին, մենք  
կստանանք մեր միջորեյականի հարթությունը, վոր  
մեր դիտողությունների համար կարեվոր նշանակություն ունի:  
Չեզանից ամեն մինը տեսել ե, թե հորիզոնի վրա արեվն ինչպես  
ե հետզհետե բարձրանում, կեսորին ամենաբարձր կետում լինում,  
վորից հետո սկսում ե իջնել հորիզոնի կողմը:

Արեվի այս շարժումը կատարվում ե արեվելքից արեվմուտք.  
այսինքն՝ յեթե յերեսով դեպի հարավ գառնանք, ուրեմն ձախից  
դեպի աջ: Կեսորին մոտ մեր միջորեյական ձողի ստվերն ամենա-  
կարճը կլինի և ուղիղ տեղի միջորեյականի ուղղությամբ կընկնի:

Լուսինն ել և այս ուղղությամբ շարժվում: Այս ըանը ձեզ հա-  
մար հո նորություն չե:

Բանից դուքս ե գալիս, վոր բոլոր յերկնային լուսատուների  
շարժումն ել և այս ուղղությամբ կատարվում. սակայն ձեզնից վո-

յանք աստղերի այս ուղղությամբ շարժումը գուցե և նկատած չը  
լինեն:

Վորպեսպի այդ ել տեսնենք ու համոզվենք, կանգնենք դիտո-  
ղի ցցի մոտ և միջորեյական ձողի մոտ մի վորեվե աստղ ինկատի  
առնենք: Նկարենք մեր տետրում այն դիրքը, վոր ունի աստղը մի-  
ջորեյական ձողի վերաբերությամբ և նշանակենք միշտ ժամը (տես  
նկ—16.):

Յերկու ժամից հետո կրկին գանք ու  
նկարենք նույն աստղի դիրքը: Կտեսնենք,  
վոր աստղն իր նախկին տեղից բավական  
դեպի աջ ե թերքել, իսկ յեթե ուշադրու-  
թյամբ դիտենք նրա շուրջը գտնված աստ-  
ղերը, կտեսնենք, վոր այդ աստղերի վերա-  
բերությամբ նա իր վերքը բնավ չի գուխել,  
նրանցից չի հեռացել: Համաստեղության  
ձեվը, պատկերը միշտնույն ե մնում: Աստ-  
ղերն իրենց տեղը փոխում են միայն հո-  
րիզոնի վերաբերությամբ: Իրար վերաբերու-  
թյամբ նրանց դիրքն անփոփոխ ե:

Նկ. 16 աստղերի դիրքը մի-  
ջորեյական ձողի վերաբե-  
րությամբ

Յեթե մեր հրապարակում մեկ կամ-  
յերկու ժամ անընդհատ ուշադրությամբ  
դիտենք հորիզոնի շուրջը, կտեսնենք, վոր աստղերը տեղափոխու-  
թյունը կատարվում ե արեվելքից արեվմուտք: Մենք կտեսնենք,  
վոր աստղերը, ինչպես և արեվը, յերեվում են հորիզոնի արեվել-  
յան մասից, տեղի միջորեյականի հարթությունն անց-  
նելիս հասնում են հորիզոնի ամենաբարձր կետին և  
մայր են մտնում հորիզոնի արեվմուտքան մասում:


Միայն մի հատիկ աստղ կա, վոր միշտ անշարժ ե. դա Բեկե-  
ռային աստղն ե: Աշխարհի բեվեռացույցով լավ նայեցեք նրա վը-  
րա և դուք կտեսնեք, վոր իր տեղում անշարժ ե մնացել:

Քիչ ե այդ: Մի ուրիշ հետաքրքիր բան ել կտեսնենք, — վոր  
այդ շարժման ընթացքում աստղերից վոչ մինը մյուսին չի հաս-  
նում, այլ վոչ յերկինքն աստղերի հետ միասին, ինչպես մի ամ-  
բողջություն, պտտում ե արեվելքից արեվմուտք իր առանցքի  
շուրջը, վոր ուղղված ե դեպի Բեկեռային աստղը:

Այս յերեվակայական առանցքը վրա համար ել կոչվում ե աշ-  
խարհի առանցքը. իսկ Բեկեռային աստղը աշխարհի բեկեռային աստղ է:

Հենց աշխարհի բեկեռի ուղղությունն ել ճիշտ յերկի առանցքի  
ուղղությունն ե այսինքն յերկի առանցքի շարունակությունն ե:

Արեգելքից արեգմուտք յերկնքի կատարած այս շարժումը կոչվում է յերկնակամարի միորյա յերեգութական շարժում: Միորյա յեղութեավ նավերջանում մի որում: յերեգութական, վորովիետեվ այդ միայն յերեգում, թվում ե, զա մեր տեսողության պատրանքը, խաբսն ե: Խսկապես վոչ թե աստղերն են պըտում յերկրի շուրջը արեգելքից արեգմուտք, այն ել այնպիսի ճիշտ կարգով, վոր իրար չեն հասնում, այլ յերկիրն ե պտըտում իր առանցքի շուրջը արեգելքից արեգմուտք:



Նկար 17

հասկանալ, վոր դա մեր զգայարանի խաբսն ե: հեռազրասյուներն ու պահակատնակները չեն, վոր թոշում, գնում են, այլ մենք ենք տարփում արագասլաց գնացքով:

Նույն ե կատարվում նայեվ յերկնային լուսատուների արեգելքից արեգմուտք կատարած շարժումը դիտելիս:

Արեգի, լուսնի, աստղերի և ամբողջ յերկնակամարի արեգելքից արեգմուտք շարժվելը միայն և միայն մեր զգացողությունների պատրանքն ե: Ճիշտ այնպես, ինչպես վագոնի պատուհանից նայելիս եր: Անհուն տարածության մեջ փոված աստղերն մեզ համար անշարժ են. մենք ենք, վոր յերկրի հետ միասին պտավում ենք նրա առանցքի շուրջը՝ արեգմուտքից արեգելք:

Յերկրի այս շարժումը չենք նկատում, վորովիետեվ նա կատարվում ե շատ սահուն, առանց ցնցումների:

Մենք պտավում ենք արեգմուտքից արեգելք, այսինքն յեթե յերեսով դառնանք դեպի հարավ, աջ կողմից դեպի ձախ: Այդ ձեւով մեր հորիզոնը ձախ կւղմում (արեգելյան) քաշանում և աստղերը մեր աչքին տեսանելի դարձնում, իսկ աջ կողմում (արեգմուտյան) բարձրանում և մեր աչքից նրանց ծածկում ե: Մինչդեռ մեզ այնպես ե թվում, թե աստղերն արեգելքում ծագում, արեգմուտքում մայր են մտնում: Դիտելով յերկնակամարի այդ յերեգութական շարժումը, փաստորեն մենք դիտում ենք յերկրի պտույտը իր առանցքի շուրջը:

Այսպիսով աշխարհի առանցքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ յերկրի առանցքի ուղղությունն, իսկ աշխարհի բեկեռը—յերկրի առանցքի շարունակության ծայրը, վորտեղ փայլում ե Բեկեռային աստղը:

### ՄԵՐ ԴԵՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Աստղաբաշխական հրապարակում միջորեյական ձող պատրաստեցեք այնպես ինչպես վերն ասվեց:

2. Այդ ձողի ոգնությամբ դիտեցեք արեգի, լուսնի ու աստղերի միորյա շարժումը: Դրա համար անհրաժեշտ ե, վոր նկատեք արեգի, լուսնի կամ աստղի դիրքը միջորեյական ձողի վերաբերությամբ և նշանակեք ժամը: Նույն դիտողությունը կրկնեցեց յերկու ժամ հետո և համեմատեցեց:



Նկար 18 Էստղերի աշխարհի բեկեռի շուրջը կատարած միորյա յերեգութական շարժման ժամանակ լուսանկարչական պատկերը

Նույն ձողի ոգնությամբ դիտեցեք արեգի շարժումը կես որին մատ, լուսնի շարժումը կես զիշերին, յերբ լուսինը լրիվ ե: աստղերի շարժումը՝ յերեկոյան կամ զիշերը, վոր ժամին կուզեք:

3. Աշխարհի բեկեռացույցի ոգնությամբ արած դիտողություններով համոզվեցեք, վոր Բեկեռային աստղը անշարժ ե: Գրեցեք դիտողության տետրում:

4. Զեր տետրում նկարեցեք հորիզոնի տեսքը և Մեծ Արջի 7 աստղերի դիրքը հորիզոնի վերաբերությամբ՝ յերեկոյեան 8 ժամին և զիշերվա 12 ժամին: Տվեք ձեր յեղրակացությունը:

5. Նույն արեք Արկտուրի և Յեղարած համաստեղության մյուս աստղերի վերաբերությամբ՝ յերեկոյան 8 ժ. և գիշերվա 11 ժամին: Տվեք ձեր յեղակացությունը:

6. Նույն արեք Գեմմա և Հլուսիսալին Թագի մյուս աստղերի վերաբերությամբ՝ յերեկոյան 9 ժ. և գիշերվա 12 ժամին: Տվեք ձեր յեղակացությունը:

7. Յեթե ձեզնից մեկն ու մեկը լուսանկարչական մեքենա ունի, կարելի յերկնակամարի այդ միորյա յերեկութական շարժումը նկարել. դրա համար պիտի ընտրել լավ, անամպ գիշեր, միայն թե լուսին չլինի:

Լուսանկարչական կամերան պիտի դարձնել դեպի Բեվեռային աստղը, իսկ եքսպոզիցիան շարունակել  $1\frac{1}{2}$ —2 ժամ: Այս ժամանակամիջոցում լուսանկարչական թերթի (պլաստինգ) վրա լավ կնկարվեն աստղերի միորյա ճանապարհները համակենտրոն շրջանների, աղեղների ձեզով աշխարհի բեվեռի շուրջը (տես նկ. 18):

8. Դիտողի ձողի մոտ կանգնեցեք կեսորյա գծի վրա. նայեցեք միջորեյական ձողին և նրա մոտով անցնող վորեվե փայլուն աստղի: Այդ միեմնույն ե, թե դուք դիտում եք աստղի անցնելը տեղի միջորեյականի հարթության վրայով: Նշանակեցեք անցնելու այդ ժամանակը (ժամը, ըստին և վայրկյանը) ձեր տետրում և աստղերի քարտեզին նայելով, ասացեք այդ վոր աստղն ե:

## 11. ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ԾԱԳԵԼՆ ՈՒ ՄԱՅՐ ՄՏՆԵԼԻ

Վորպեսզի լուսատուների ծագելն ու մայր մտնելը լավ կարողանանք դիտել, անհրաժեշտ ե, վոր մեր աստղաբաշխական հրապարակը բաց տեղ լինի, վոր նրա շուրջը բարձրություններ չը լինեն: Անհրաժեշտ ե, վոր մեր հորիզոնն ամեն կողմից յերեա:

Պետք է տետրում նկարել հորիզոնի թե արեելյան, թե արեմըտրան մասերի տեսարանները, — համապատասխան նշաներ անելով:

Դրա համար բնավ հարկ չը կա, վոր դուք լավ նկարել կարողանք և նկարեք ամեն ինչ, վոր տեսնում եք հորիզոնի վրա: Այն ել բավական ե, յեթե ուրվանկարեք (հօհուց), ինչ վոր տեսնում եք հորիզոնի վրա. որինակ. բարձր ծառ, գործարանի խողովակ, զանգակատուն, անտառ և այլն (տես նկ. 15). Այդ նկարի վրա պիտի նշանակել արևելքի և արևմուտքի կետերը:

Մեր դիտողությունները միշտ պիտի սկսել հրապարակի միենույն կետից—դիտողի ցցից:

Նկարի վրա պիտի նշանակել լուսատուների հորիզոնի վերաբե-

րությամբ ունեցած մերձավոր դիրքը: Զը պիտի մոռանալ՝ նշանակել դիտելու ժամն, ամիսն ու ամսաթիվը:

Յեթե արևի ծագելը կամ մայր մտնելը այս ձեզով դիտենք տարվա զանազան որերին, դիտողությունները միմիանցից հեռացնելով մի շաբաթ, յերկու շաբաթ, մի ամիս, իսկույն կը նկատենք, վոր արևի ծագելու և մայր մտնելու կետերը զանազան ժամանակներում տարբեր ել կը լինին. այսինքն արևը տարվա զանազան որերին հորիզոնի տարբեր կետերում ե ծագում ու մայր մտնում:

Մարտի 21-ին և սետպեմբերի 23-ին պրեվլ ծագում ե ճիշտ արևելքի կետում; մայր ե մտնում արևմուտքի կետում:

Մարտի 22-ից մինչև սեպտեմբերի 22-ը արևը ծագում ե արևելքի և հյուսիսային կետերի մեջ, սեպտեմբերի մեջ՝ մարտի 20-ը արևը ծագում ե արևելքի և հարավի կետերի մեջ, մայր ե մտնում արևմուտքի և հարավի մեջ: Նույնը կը տեսնենք լուսնի վերաբերությամբ: Ամենից հարմարն ե լուսնի դիտողություններն սկսել նրա մայր մտնելուց, ծնունդի յերրորդ կամ չորրորդ որը, յերբ նեղ մանգաղանման «նորալուսինը» յերեւում ե յերկընըի արևմտյան մասում, մայր մտնող արևից ձախ:

Իսկ յեթե աստղերի ծագելն ու մայր մտնելը դիտենք, կը տեսնենք, վոր տարվա զանազան որերին միենույն աստղի ծագելու և մայր մտնում կետերը չեն գոյն փոխվում:

Պարզվում ե, վոր աստղերից ամեն մինը ծագում ու մայր և մտնում հորիզոնի նույն կետում: Կը տեսնենք նաև, վոր այն աստղերը, վորոնք ծագում են հարավի և արևելքի կետերի մեջ, մայր են մտնում հարավի և արևմուտքի կետերի մեջ. իսկ այն աստղերը, վորոնք ծագում են հյուսիսի և արևելքի կետերի մեջ, մայր են մտնում հյուսիսի և արևմուտքի կետերի մեջ:

## ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Նկարեցեք ձեր աետրում, հորիզոնի արևելյան և արևմտյան մասերի տեսարանները: Դիտեցեք, ինչպես ասվեց, արևի ծագելն ու մայր մտնելը մարտի 21-ին, հետո մարտի 28-ին և ապրիլի 5-ին: Այնուհետև մոտ ապրիլի 21-ին, մայիսի 21-ին, հունիսի 22-ին, հուլիսի 21-ին, սգոստոսի 21-ին, և պատեմբերի 23-ին, հոկտեմբերի 1-ին, 8-ին, 22-ին, նոյեմբերի 21-ին և դեկտեմբերի 23-ին, հունվարի 21-ին և փետրվարի 21-ին:

Ձեր հորիզոնի պանորամի վրա նշանակեցեք արևի ծագելու և մայր մտնելու դիրքը, նշանակելով դիտելու ամիսն, որն ու ժամը: Արևի ձեր սեփական յեղակացությունը (տես նկ. 15):

**2. Զեր հորիզոնի պանորամի վրա նշանակեցեք լուսնի ծագելու և մայր մտնելու կետերը՝ նշանակելով ամիսն, որն ու ժամը:**

Որացուցից խմացեք լուսնի ծնունդը և յերրորդ կամ չորրորդ որից սկսած՝ դիտեցեք նրա մայր ժամելը: Պանորամի վրա նշանակեցեք ըստ ձեր դիտողության նրա ամենամոտ դիրքը հորիզոնին: Նկարեցեք նաև լուսնի տեսքը:

Այս դիտողությունները ձեզ այն յեզրակացության կբերեն, վոր յերբեմն միայն լուսնի մայր մտնելն է յերեսում, իսկ ծագելը՝ վոչ, վարովնեաւ սեղի յե ունենում ցերեկը յերբ լուսինը նորածին է: Յերբեմն ել կարելի յե տեսնել թե ծագելը, թե մայր մը ունելը, իսկ յերբեմն ել միայն ծագելը (տես լուսնի ֆազերը):

Կը համոզվենք նույնպես, վոր լուսնի ծագելու և մայր մտնելու կետերն իրենց տեղը փոխում են:

**3. Դիտողության տետրում հորիզոնի արևմտյան մասի նկարում նշանակեցեք Արկտուրի մայր մտնելը մի աշնան յերեկո: Հետո մի գարնան յերեկո հետեւցեք ու նշանակեցեք նույն աստղի ծագելը հորիզոնի արևելյան մասում: Դուք կը համոզվեք, վոր աստղերի ծագելու և մայր մտնելու մասին մեր վերն հիշված կանոն ները ճիշտ են:**

**4. Ամառվա վերջերի մի յերեկո նույն ձևով դիտեցեք Բեգուլ աստղի մայր մտնելն, իսկ ձմեռվա վերջի մի յերեկո նրա ծագելը:**

**5. Դեկտեմբերի կամ հունվարի մի յերեկո նույն ձևով դիտեցեք Հայկ համաստեղության (Որիոն) ծագելը. իսկ մարտի կամ ապրիլի մի յերեկո՝ նրա մայր մտնելը:**

## 12. ԱՍԴԱԼԻՑ ՅԵՐԿԻՆՔԸ ՏԱՐՎԱԾ ԶԱՆԱԶԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ


Դեռ շատ հսումը մարդիկ աստղերով կարողանում եյին գուշակել տարվա յեղանակների փոփոխությունները՝ գտնան գալն ու գետերի հորդանալը, ամառվա տապ որերի և անձրեստ աշնան գալը:

Իրոք հարկավոր ե միայն ուշագիր կերպով դիտել աստղալից յերկինքը յերեկոները միևնույն ժամերին, և իսկույն կը նկատենք վոր տարվա զանազան ամիսներում յերկինքի տեսքն ել զանազան ելինում: Մի քանի համաստեղություններ յերեկոները միևնույն ժամին, բայց տարվա տարբեր յեղանակներին հորիզոնի տարբեր մասերում են յերեսում: Մի քանիսներն ել վորոշ ամիսներում բոլորին չեն յերեսում:

Այս բոլորը պիտի անձամբ դիտել և համոզվել:

Արևի մայր մտնելուց հետո հորիզոնի արևմտյան մասում յերեւ վացող համաստեղությունները դիտելով, մենք կը նկատենք

աշնանը Յեզնարած համաստեղությունը՝ Արկտուր աստղով, ձմեռը՝ Արծիվը՝ Ալտաիրով, գարնանը՝ Յուլը՝ Ալլութարանով, ամառնը՝ Առյուծը՝ Բեգուլով: Ամառը, մութն ընկնելիս, յերկնքի հարավային մասում ամենից առաջ սկսում են վառվել յերեք աստղեր.՝ մեր գլխի վերեկը Քնար համաստեղության մեջ Վեզա աստղը, ձախ կողմում, ավելի ցած՝ Արծիվ համաստեղության մեջ Ալտաիրը, իսկ հեռու, աջ կողմում Յեզնարածի մեջ Արկտուրը: (Տես նկ. 19): Յերկնքի հյուսիսային մասում ցած կանգնած է Կառապան համաստեղությունը, վորտեղ փայլում է Կապելլան:




առաջին մեծության աստղեր ունեն: Դրանցից՝ Քնարը, Կարտապնը  
ու Կառապանը յերեսում են ապրին բոլոր:

Յեզնարածը—յերեկոները՝ հունվարից սեպտեմբերին:  
Արծիվը—տարվա յերկրորդ կեսին՝ ամառը և աշնանը:  
Յերկորյակներն ու Ցուլը ուշ աշունից մինչև գարուն:  
Որիոնը, մեծ ու փոքր Շները ձմեռվա ամիսներին, դեկտեմբերից մինչև ապրիլ:

Առյուծը տարվա առաջին կեսին՝ ձմեռն ու գարնանը:  
Կույսը գարնանը,

Հենց մեր զիսի վերեսում յերեսում են ձմեռվա յերեկոներին  
Կառապանը, ամառը—Քնարը վաղ գարնանը—Առյուծը, և Մայիսին  
—Յեզնարածը:



Նկ. 20 Հմեռային համաստեղություններ — Արիոն, Մեծ  
Շուն, Ծուլ, Ցերկորյակներ և փոքր Ցուն:\*

Եթ, իսկ մեզ այնպես ե թվում, թե աստղերի դիրքն ե արևի վերաբերմամբ փոխվում: Վորոշ ամիսներում արևի մայր մանելուց  
անմիջապես հետո արևեմուտքում մի տեսակ աստղեր ենք տեսնում,  
իսկ այլ ամիսներում բոլորովին այլ աստղեր: Ամառը յերեացող  
աստղերը ձմեռն աներեսութանում են, վորովհետեւ այդ ժամանակ  
նրանք ցերեկն են փայլում, արևի հետ միասին, և ընդհակառակը:

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Արեւ մայր մտնելուց հետո, մեկեն դիտեցեք առաջին մեծության աստղեր ունեցող համաստեղությունները՝ հորիզոնին մոտ, յերկնքի արևեմույթին կողմում սեպտեմբերի, դեկտեմբերի, ապրիլի

\*) Սիրիուսը Մեծ Շան իսկ Պրոցիոնը Փոքր Շան համաստեղությունների աստղերն են:


և հուլիսի վերջերին վորոնք են յերեսում: Նկարեցեք նրանց դիրքը հորիզոնի վերաբերությամբ: ոգտվեցեք այս գրքին կցած քարտեզից և նշանակեցեք, դրանք վոր համաստեղություններն են և դըրանց մեջ գտնվող առաջին մեծության աստղերն ինչպես են կոչվում: Զեր տետրում նշանակեցեք դիտելու ամիսը, թիվը ու ժամը. այնուհետև դրեցեք՝ ձեր դիտած համաստեղություններն ու աստղերը նույնը կիրակն ամբողջ տարում:

2. Տեսեք, թե Մեծ Արջն իր պոչը հորիզոնի վերաբերությամբ  
ուր ե դարձնում՝ յերեկոյան ժամի 9 ին, գարնան, ամրան, աշնան  
և ձմրան սկզբներին: Զմոռանաք ձեր դիտողությունների ճիշտ ժա-  
մը, ամիսն ու ամսաթիվը նշանակել ձեր տետրակներում: Հիմա  
ինքներդ ասացեք, Մեծ Արջի պոչի ուղղությամբ կարելի՞ յե գու-  
շակել տարվա այս կամ այն յեղանակի վրա հասնելը. յեթե այս,  
ուրեմն ինչպես կձևակերպեք այդ գուշակությունը:


3. Տարվա զանազան յեղանակներին յերեկոները դիտեցեք  
յերկինքը հարավում: Փնտուցեք այնտեղ մեր հիշած 12 համաս-  
տեղությունները՝ իրենց առաջին մեծության աստղերով և սովորե-  
ցեք շուտ գտնել նրանց. միտներդ պահեցեք այդ համաստեղությունների ամենափայլուն աստղերի անունները և նրանց տեղը համաս-  
տեղության մեջ:

Դրա համար հարկավոր ե նկարել ձեր դիտողությանը յենթա-  
կա յերկնակամարը, առաջին, յերկրորդ և յերրորդ մեծության  
աստղերը տարբեր մեծության շրջանակով, այլ և ճշողությամբ նը-  
շանակել դիտելու ժամը, ամիսն ու ամսաթիվը: Վորպեսզի ավելի լավ  
կազմեք աստղալից յերկնքի նկարը, վերցրեք 20 սանտիմետր յերկա-  
րության և 17 սանտիմետր լայնության մի տախտակ, վրան հի-  
նեցեք հաստ, սպիտակ թել այնպես, վոր ցանց ստացվի՝ 5 ուղ-  
ղահայաց և 3 հորիզոնական թելերով (տես նկար 21):

Վարի մասում ըլլ-  
ջանակին կոթ շինեցեք,  
նեղ ժապավեն կպցրեք:  
Ժապավենն այնքան յեր-  
կար պիտի լինի, վոր  
կարելի լինի ցանցի: մի-  
ջից աստղերն այնպես,  
դիտել, վոր աչքերից  
միշտ միևնույն հեռավո-  
րությունն ունենա—մոտ  
20 սանտիմ., ինչպես  
կա նկարի վրա (տես նկար 22):



Նկար 21, աստղալից յերկնքը դիտելու ցանց



Նկար 22. ցանցը՝ աստղակից յերկնիքը դիտելու (Գեմմա) և Արկտուրի գույնն ու ժամանակ

6. Հաշվեցեք, թե հասարակ աչքով քանի՞ աստղ եք տեսնում Պլեյադա աստղակույտում, դիտակով քանի՞ Նշանակեցեք տետրում:

7. Գտեք Մեծ Արջի պոչի նախավերջին աստղը, Դրա անունը Միցար ե. նա յերկրորդ մեծության աստղ ե. իսկ նրա կողքին կը տեսնեք մի աստղիկ—6-րդ մեծության. դա Այլկորն ե, վոր թարգմանած նշանակում ե «Ճիւավոր»: Ահա ձեզ 6-րդ մեծության աստղի մի որինակ: Հասարակ աչքով տեսնում եք Այլկորին: Յեթե այս, ուրեմն դուք շատ սուր աչք ունեք: Այլկորը դիտելով՝ ստուգեցեք ձեր տեսողությունը: Այս ել մտցրեք ձեր տետրի մեջ:

8. Փետրվարի վերջերի մի յերեկո մեր աստղաբաշխական հրապարակում կանգնեցեք դիտողի ձողի մոտ և տեսեք, թե Այլկերերանն ինչպես ե անցնում միջորեյականի ձողի մոտով. Ժամը. ամիսն ու ամսաթիվը մտցրեք ձեր տետրի մեջ: Ճիշտ մի ամսից հետո, մարտի վերջին՝ ձեր ժամացույցով հենց նույն ժամին և նույն տեղից կը կին դիտեցեք Այլկերարան. այժմ նկարեցեք Այլկերարանի դիրքը միջորեյականի ձողի վերաբերությամբ և վորոշեցեք, թե Այլկերարանը ձեր ժամացույցով զի՞ր ժամին կանցնի ձողի մոտով: Գտեք, թե փետրվարին և մարտին անցած ժամերի մեջ վժրքան տարբերություն կա:

9. Նույն ձեռվ դիտեցեք Կաստորի կամ Պոլլուկսի անցնելը մարտի վերջերի մի յերեկո: Ճիշտ մեկ ամսից հետո, դիտելու նույն ժամին, նկարեցեք Կաստորի և Պոլլուկսի դիրքը միջորեյական ձողի վերաբերությամբ: Յուրաց տվեք, թե ձեր ժամացույցով Կաստորը կամ Պոլլուկսը յըրբ կանցնեն տեղի միջորեյականով:

10. Հոկտեմբերի վերջերի մի յերեկո նույնն արեք Արտայիրի

վերաբերությամբ և ճիշտ մի ամսից հետո կրկնեցեք նույնն, ինչպես վերը: Այժմ յեզրակացրեք՝ Արտայիրի առաջին և յերկրորդ անգամ միջորեյականի ձողի վերաբերությամբ անցնելու մեջ քանի՞ ժամ տարբերություն կա:

### Ծիր կ Ա. Թ Ի Ն

Պարզ գիշերներին յերկնքում աչքի յերնկնում լայն ու պայծառ մի գոտի, ամբողջապես ծածկված մանր աստղերով, վորոնց փայլը սիածուլվում, մի լուսեղին շերտ ե կազմում: Այս շերտը Բեեռութին աստղի կողքից անցնելով՝ կտրում ե յերկինքն ու անցնում ե Կարապի, Կասիոպեյի ու Պերսեյի վրայով: Սա Ծիր Կաթինն ե:

Ծիր Կաթինում բազմաթիվ մանր աստղեր ենք տեսնում. իսկ դիտակով Ծիր Կաթինի այս լուսավոր շերտում նորանոր հազարավոր աստղեր են յերկում, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն. իսկ աստղադիտական ուժեղ հեռադիտակով՝ միլիոնավոր աստղեր են նշանարվում: Վորքան մեծ լինի դիտակը, Ծիր Կաթինում այնքան ավել շատ աստղեր կերևան: Ծիր Կաթինի այդ մթությունն աստիճանաբար չքանում ու փոխվում ե աստղերի մի անհամար բազմության:

Տարվա զանազան յեղանակներին Ծիր Կաթինն ել տարբեր և յերկում: Գարնան յերեկոներին նա համարյա չի յերեւմ: Այդ ժամանակ նա տարածվում ե փոքր և վոչ այնքան բարձր աղեղով յերկնքի հյուսիս-արևմտյան կողմից, ուր գարնանը Պերսեյն ե լինում, դեպի հյուսիս-արևելք, ուր Կարապն ե փայլում: Այս աղեղի ամենաբարձր կետը, Կասիոպե համաստեղությունը, այդ միջոցին գտնվում ե Բեեռութին աստղի և հորիզոնի մեջ զտնված տարածության ուղիղ մեջտեղում:

Ծիր Կաթինն ամառը վեհ տեսարան ե ներկայացնում, մանավանդ մի փոքր ուշ, յերբ Կարապ համաստեղությունն անցնում է տեղի միջորեյականի վրայով: Ամարային յերեկոներին Ծիր Կաթինը հսկայական աղեղի նման հենց մեր գլխի վրայից անցնելով, զոտեփորում ե ամբողջ յերկնակամարը: Նա սկսում ե Պերսեյի հյուսիս-արևելյան կողմից, Կասիոպեն կտրելով, բարձրանում ե գեպի զենիտ (ուղիղ մեր գլխի վերի կետը յերկնքում) և, իջնելով գեպի հարավ, մոտենում ե Կարապին: Այստեղից ել յերկու հոսանքով ընկնում ե գեպի Արծիվը, անցնելով նրա աջ կողմից:


Աշնան յերեկոներին Ծիր Կաթինը, հսկայական աղեղի ձևով անցնելով ամբողջ տեսանելի յերկնակամարի յերեսով արևելքից արեվմուտք, բաժանում ե նրան յերկու հավասար մասի—հյուսիսային և հարավային: Այդ միջոցին վերև նայեցեք, և դուք ուղիղ զենի-

տում կտեսնեք Կասսիոպեն, ամբողջ մանր աստղերի մեջ կորած։ Կասսիոպեյից ԾիրԿաթինն իջնում ե դեպի արեմուտք, Կարապի մոտ և այս համաստեղության գլխավոր աստղ Դեների մոտ յերկուսի ճյուղավորվելով՝ ձգվում ե ուղիղ մինչև հորիզոնը։

Յերկնքի մյուս արեելյան կողմում Ծիր Կաթինի մի փայլուն հոսանք Կասսիոպեյի մոաից իջնում ե դեպի Պերսեյր, վողողելով նրան իր փայլով անպես վոր Պերսեյի աստղեւն ուղղակի կորչում են Ծիր Կաթինի աստղերի մեջ։

Զմեռվա խիստ ցուրտ գիշերներին Ծիր Կաթինն առանձնապես վառ ե փայլում։ Այդ ժամանակ նրա աղեղն ընկած է լինում հյուսից հարավ և վոչ արեելքից արևմուտք՝ ինչպես աշնանն ե լինում, ու անցնում ե վոչ թե գենիտով, այլ՝ թեք։ Այդ ժամանակ Ծիր Կաթինի ամբողջ աղեղը յերկնակամարի արևմտյան կիսումն ե գտնվում։

Զմեռվ Կարապը գտնվում ե հյուսիսում՝ ցած։ Նրանից վերև, հյուսիսարևեմուտք յերկում ե Կասսիոպեն, իսկ Պերսեյի համատեղությունն ավելի բարձր ե, յերկնքի հարավ-արևմտյան մասում, գենիտին մոտ։ Հենց այս համաստեղությունների վրայով ել անց-



Նկար 23. Ծիր Կաթին

նում ե Ծիր Կաթինը։ Պերսեյից նա իջնում ե հարավի կողմը՝ Կառապան և Յուլ համաստեղությունների միջով, այնուհետև իջնում ե ներքեա Յերկվորյակների և Որիոնի միջով, դրանից հետո յել Մեծ ու Փոքր Շների միջով անցնելով, Սիրիուսի ձախ կողմով իջնում, հասնում ե հորիզոնին։

Ծիր Կաթինը ձմեռը յերկնքի հարավային կողմում իբրեւ մի փայլուն շերտ ե յերառում, վոր, կարծես, թեք կերպով աջից ձախ և իջնում։

Յեթե մենք կարողանայինք սեր յերկը հարավային կիսու-

գունդն անցնել և այստեղ դիտել Ծիր Կաթինի մնացած մասը, կը համոզվեյինք, վոր Ծիր Կաթինը մի իոնավոր աստղերից կազմված մի հսկայական ողակ ե, վոր շրջապատում ե ամբողջ յերկրագունդն ու աստղալից յերկինքը։ Ծիր Կաթինն, իբրև մի հսկայական գոտի, շրջապատում է յերկուսի յե բաժանում վողջ տիեզերքը։

Ավելի ուշագիր յեղեք, և դուք հեշտությամբ կնկատեք, վոր առաջին մեծության և ընդհանրապես, փայլուն աստղերը Ծիր Կաթինի ընթացքով են ընկած։ Ընդհակառակը, նրա այս ու այն կողմերում և նրանից հեռու յերկնքի այն մօսերն են, վորոնք աղքատ են փայլուն աստղերով։

#### ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիտեցեք Ծիր Կաթինն ու նկարեցեք նրա դիրքը՝ գարնան, ամառվա, աշնան և ձմեռվա մի յերեկո։ Նշանակեցեք, թե ինչպես ե ձգվում և վորտեղ են գտնվում հորիզոնի հետ նրա հատման կետերը։ Նշանակեցեք տարվա զանազան ժամանակներին նրա դիրքի մեջ յեղած տարբերությունը։


2. Նկարեցեք մի յերեկո և դիտեցեք, թե Ծիր Կաթինի յերկու կողմով ի՞նչ փայլուն աստղեր են ընկած։ Նկարեցեք այդ ձեր տետրերում։

## ԱՐԵՎ

### 14. Ա. Ր. Ե. Վ.

Ի՞նչ բան է արել. յերկնքի այս ամենից գլխավոր լուսատուն, վոր մեր շուրջն ամեն ինչ ջերմացնում, լուսավորում ու կենդանացընում է: Ի՞նչ է մեր այս ցերեկվա լուսատուն:

Արել, վոչ այլ ինչ է, յեթե վոչ՝ աստղերից մինը նա մեծ ու



Նկար 24. արել ու յերկրի համեմատական մեծությունը: Արելի վրա յերեացող բծերից մի քանի որ յերկրազնդից մեծ էն:

կլոր և յերեռում միմիայն նրա համար, վոր մեզ անհամեմատ ավելի մոտ է, քան վորեւ այլ աստղ: Յեթե արեն ել մեզնից այնպահ ինսեր, վորքան կապելլան, նա մեզ այդքան մեծ գնդի

գոխարեն 6-րդ մեծության մի ասուղի պես կերեար, և հազիվ կը նշմարվեր. այն ինչ՝ կապելլան առաջին մեծության ասուղի փայլ ունի: Մեզնից մինչև արելը 149,000,000 կիլոմետր եւ Սա մի հըսկայական տարածություն եւ Վորպեսզի որական 40 կիլոմետր անցնող հետևակն արեկին հասնի, պիտի անընդհանուր 140 դար ճանապարհ գնու: Ժամը 100 կիլոմետր կարող մարդար ար գնացքն աւրեվին կհամնի միայն 160 տարուց հետո: Մի վայրկյանում կես կիլոմետր թռչող թնդանոթի գնդակն արեկին կհամնի միայն 10-րդ տարում:

Արել մեր յերկրից 1,300,000 անգամ մեծ է:


Պատկերացնենք մեզ արևի մեծությունը: Մեկ լիտրը միջին թվով պարունակում է մոտ 10 հազար ցորենի հատիկ: Այս հաշվով մի գույլը, վոր 12,3 լիտր է, կազմակերպությունի 123 հազար հատիկ: Յեթե մի տեղ կուտենք 11 գույլ հատիկ և դրանցից վերցնենք մի հատիկը, այդ շնչար կին է արելը, իսկ նրանից վերցրած հատիկը՝ մեր յերկրը:

Միթե պարզ չե, թէ արելը մեր յերկրից փորքան մեծ է:

Յերբ արելը բարձր հորիզոնի վրա պայծառ փայլում է, և ուղում ես նայել վրան, պիտի աչքի մութ ապակիով ծածկես. այլապես կարող ես կուրանալ կամ տեսողությունդ փչացնել: Աշքներս չփչացնելու համար ծածկենք մութ ապակիով ու խող վակով նայենք արեկն: Կաեսնենք, վոր արելի մակերեսույթի հավասար չե, նա ծածկված է կը սկի ծովի հակառական ալիքներով: Խողավակի միջից այդ ալիքները մեզ սպիտակ կետեր կթվան (տ. ս. նկար 25):

Այդ կետերն անազին մեծություն ունեն — մինչև 4000 կիլոմետր և կոշկում են գրանուլներ — հատիկներ:

Արելի մակերեսույթի վրայի այդ փայլուն ալիքների մեջ սկ կետեր, ծակուածիներ են յերեկում: Դրանցից ահազին սկ բծեր են կազմվում՝ փորոնցից ամեն մինը յերեմն յերկը ից բայց հոյթը լուսանկարած, հատիկներ), բծեր, շակուիներ



Նկար 25. արելի մակերեսույթը լուսանկարած, հատիկներ), բծեր, շակուիներ

(տես նկար 25, 26): Այդ բծերից մեծերը կարելի յե առանց խողովակի յել առենել, հասարակ աչքով, միայն մըոտած ապակիյով:

Յերբեմն արևի բծի մեջ բացի սև կորիզից — ստվերից, կորիզի շուրջն յերեսում են նաև մոխրագույն կիսատվեր, ինչպես կանոնական նկարի վրա:

Բծերից ամեն մինը մի քանի ժամանակից հետո վոչնչանում են: Նրանց փոխարինում են նորերը: Այդ բծերի քանակությունը միշտ սիենույնը չի լինում: Տարիներ են լինում, յերբ նույնիսկ փոքրիկ բծեր չեն յերեսում: Բայց հետո սկսում են շատ ու շատ յերեալ Աստղաբաշխները նկատել են, վոր բծերաշատ տարիները կանոնավոր կերպով կրկնվում են ամեն մի 11 տարուց հետու, Որինակ արևի առատ բծեր կային 1905, 1917 թվերին, սպասվում են 1927 թվին: 1925 թվին այդ բծերը պակաս ելին, համարյա չկային:

Ի՞նչ ե այս պարբերականության պատճառը, չգիտենք: Պարզ է միայն, վոր բծերի առատությունը շատ ե ազդում մեր յերկրի վրա, հատկապես ելեքտրական ու մագնիսական յերեսութիւների վրա: Այդ տարիներում հյուսիսափայլեր շատ են նկատվում: ԽՍՀՄ հյուսիսային յերկրներում հյուսիսափայլը հաճախ յերեսում ե զիշերները, յերբ պարզ, անամպ յերկնքում հանկարծ հորիզոնի մի շերտ սկսում ե վառվեր: Այդ փայլը կանաչ կիսաշրջանի ձև ունի: Նա յերեմն ըստ կնում ե ամբողջ յերկնքով, իսկ զեպի նա թափալվում, ալիքանման գալիս են նոր շերտիկներ:

Արեն ել, ինչպես յերկիրը, պատռում ե իր առանցքի շուրջն արեմուտքից արենելը: Նա իր լրիվ պատռութը կատարում է 26 որում: Յերկիրը պատած է ողի շերտով, վոր մթնոլորտ է կոչվում:

Արևի շուրջն ել մթնոլորտ կա, վոր բաղկացած է ջրածնի և հելիոնի գաղերից և մետաղների, գլխավորապես, յերկաթի գոլորշիներից:


Արևի մթնոլորտում մետաղների գաղեր լինեն ապացույց ե, վոր արևը սաստիկ տաք եւ իրոք, յերկաթը միայն մեծ գործարանների վառարանների ահազին տաքությունից ե հալվում և սպիտակ, ջեռացած ու հեղուկ զանգված գառնում, վորի մոտ անկարելի յե կանգնել: Զուրը հեշտ ե գոլորշի դարձնել: Բայց յերկաթն ինչպես տաքացնես, վոր գաղ գառնա: Պարզ ե ուրեմն, թե արևը վորքան տաք պիտի լինի, վոր նրա մթնոլորտում յերկաթե գոլորշիներն այսպես լողան, ինչպես յերկրի մթնոլորտում լողում են ամօղերը, վորոնք ջրի գոլորշիներից են բաղկացած: Արևի մթնոլորտի շերտությունը 6000 աստիճան է:

Արևի խավարումների ժամանակ նրա չորս կողմում կարելի յե

տեսնել այդ մթնոլորտը, նույն իսկ նրա վերին շերտերը: Այդ շերտերը կազմում են, այսպես կոչված, արեկի թագը:

Այդ խավարման ժամանակ աստղաբաշխական խողովակով արևի մակերեսույթի վրա կարելի յե արտավիժուաներ տեսնել, վորոնք յերբեմն ահազին չափերի յեն հասնում: Այդ արտավիժուաները հրակայական վարդագույն շատրվաններ են, վորոնք ձեղքում, անցնում են արևի մթնոլորտը: Դրանք փոթորիկներ կամ պրոտուքերանոն են կոչվում:

Մեզ, յերկրի ըլնակիչներիս համար արել հսկայական նշանակություն ունի: Յերկրագնդի վրա կյանքը կախված է արեգակի ջերմությունից և լույսից: Առանց այդ ջերմության ու լույսի կյանքը յերկրի վրա անհրաժեշտ կրին կրին կուտածածիկ վրա:



Նկար 26. պրոտուքերանոներ

#### ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Մրոտած ապակիով նայեցեք արևին: — մեծ բծեր կտեսնեք, թէ վոչ: Յեթե տեսնեք, զրեցեք և ձեր տետրում նկարեցեք՝ նշանակելով դիտողության ճիշտ ժամանակը, այլև բծերի դիրքն արևի շրջանի (գիսկ) վրա:

2. Նույնը կրկնեցեք մի քանի որից հետո, համեմատեցեք այդ յերկու դիտողության տրդունքները:

3. Յեթե հեռադիտակ ունեք, զրանով նայեցեք արևին: Դիտակն ամբացրեք այսպես, վոր շշարժվի: Ոկույարին (այն ապակին, վորի վրա դնում ենք աշքներս) անպատճառ մութ ապակի ամբացրեք, վոր ձեր աշքը շայրեք:

#### ԱՐԵՎԻ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Տեսեք, թե վորքան տարություն են տալիս մեզ արևի ճառագայթները: Արեն մեզ տաքացնում ու կենդանացնում եւ: Զմեռը, յերբ արևը հորիզոնի վրա այնքան ել բարձր չե, նրա ճառագայթներն յերկրի մակերեսույթի վրայով լոկ սահում են, զրա համար ել մեզ քիչ են տաքացնում: Այդ ժամանակ մեզնում ցուրտ ել լինում,

գետերն ու լճերը սառչում են, յերկիրը ծածկվում է ձյունով, բույսերն այլևս չեն մեծանում:

Ուրիշ է գարնանը:

Արեք հորիզոնի վրա հետզհետե բարձրանում է. Ամեն ինչ արթնանում է. Զյունն ու սառույցը հալվում են. առվակներ ե, վոր վազում են. գետերն ազատվում են սառցե կապանքներից, անտառն սկսում է կանաչել, ինչ եք կարծում, վորքան փայտ վառել հարկավոր կիխի, վորպեսզի կարելի լինի մեր քաղաքն ։ Հրջակայրը ծածկող բոլոր ձյունը հալել. Այդ տաքությունը մեզ արեն ե տալիս:

Թիչ ե այս:

Արեկի ճառագայթները վոչ միայն գալիս են ձյունն ու սառույցը հալեցնելու համար, այլև ահազին աշխատանք կատարելու:

Սառն ու տաք սենյակների մեջտեղում գտնված դռները բաց անելիս, դուք, անշուշտ, նկատել եք սառն ողի շարժումը, վոր ներքեսվ հոսում ե զեպի տաք սենյակը, իսկ տաքը դուրս ե գալիս վերեսով: Հենց այդպես ել քամին ե առաջ գալիս յերկրի վրա: Ողն արեկի ճառագայթներից մի տեղ ավելի յէ տաքանում, մի այլ տեղ՝ պակաս: Անկասկած ե, վոր այդ դեպքում ողը հանգիստ մնալ չի կարող: Նա սկսում ե շարժվել: Առաջ ե գալիս քամի: Վորքան այդ յերկու վալրերի ջերմության տարբերությունը մեծ ե, այնքան ուժեղ ե քամին: Իսկ քամին ահազին ույժ ունի: Նա ուղցնում է առագաստները, քշում, տանում ե մեր նավակներն ու նավերը, պըտըցնում ե աղորիքների թերեն ու աղում մեր ցորենը: Ուժգին քամին դժբախտություններ ել ե պատճառում: — արժատահան ե անում ծառերը, տների տանիքներն ե պոկում, նույն իսկ քաղաքներ ե կործանում: Յեկ այս հսկաւական ուժն արեկի ջերմությունից ե առաջ գալիս: Նույն արեգակի ջերմությունն ե, վոր ծովերից, գետերից ու լճերից գորորշիացնում ու բարձրացնում ե ջուրը: Վերեսում այդ գորորշին սառչում, խտանում և ամպեր են գոյանում, վորոնք հետո անձրեի փոխված՝ ներքեն են թափում, յերկիրը ջրում: Զուրն իշնում, ծծվում ե հողի մեջ, առվակներ ու աղբյուրներ են դառնում, զնում գետերն են թափում: Գետերը հոսում են: Այդ գետերի վրա անհամար լաստեր ու նավեր են լուզում, վորոնց գետի հստանքով վարում են մարդիկ: Միաժամանակ գետերը դուրս են գալիս ափերից, զեպի իրենց բերաններն են տանում ավազի մեծ քանակություն, վոր տարեց տարի դարսիւով, դարսվելով սկզբում ծանծաղներ են դառնում, իսկ հետո նաև սմբողջ կղզիներ: Գետերը նույնիսկ ահազին լեռներ են վողողում,

նրանց մեջ հարյուրավոր վերստ յերկարության ձորեր կազմելով. յերբեմն նույնիսկ ահազին տարածություն ցամաք են հեղեղում: Այս բոլորը քշվում, զնում ե ծովերը: Դրանից ծովերն ավազով ցվում, հատակը հետզհետե բարձրանում է ու յերկրի խորտ ու բորսությունները կոկվում են: Յերբեմնի ծովի տեղ լայնատարած ցամաք ե յերեսում: Այս աշխատանքը հարյուրավոր ու հազարավոր տարբիներ ե տեսում:

Հսկայական աշխատանք ե. այնպես չե: Յեկ այդ աշխատանքի լմիակ աղբյուրն արեն ե:

Մենք վառարանը վառում, փայտն այրում ու տաքությունն ենք ստանում: Իսկ բույսերն աճում են միայն արեկի ճառագայթների ազգեցության տակ: Այնպես վոր, մենք ի հաշիվ արեկի ջերմության ենք տաքանում: Արել մեզ հոմար ջերմության ահազին պաշար—հսկայական անտառներ ե կուտակել: Դրանից ավելի տաքություն հողի կրծքում ե: Այստեղ քարածուխի, տորֆի հաստ շերտեր ու նավթի աղբյուրներ կան: Այս բոլորն առաջանում ե բույսերից, վորոնք յերբեմն յերկրի յերեսն եյին ծածկում:

Ուրեմն, յերկաթուղիների, շոգենավերի, գործարանների ամբողջ աշխատանք առաջ բերողն արեկի թագնված տաքությունն ե:

Կենդանիները բույսերով են կերակրվում. մարդն ել իբրև կերպակուր գործածում ե մի շարք բույսեր ու կենդանիների սիս:

Մարդու մարմնի տաքությունը շնչառությամբ ե պահվում, վորի ժամանակ այրվում ե կերակրի հետ մեր արյան մեջ մտած ածուխը: Մարդը միայն այն ժամանակ կարող ե աշխատել, յերբ մնվում ե. ուրեմն, դարձյալ ի հաշիվ արեկի թագնված տաքության:

Կենդանիներն ու մարդիկ ապրել կարող են միայն այն գեպօւմ, յեթե գոյություն ունեն արեկի լույսն ու ճառագայթները: Մարդկային միաքն աշխատել կարող ե միայն այն ժամանակ, յերբ նրա ուղեղն ու նյարդերը կանոնավոր աշխատում են. մի բան, վոր ամբողջապես ամբողջ մարմնի կանոնավոր սննդառությունից ե կախված, վոր առանց արեկի անկարելի յէ: Պարզ ե, վոր հենց ինքներս ապրում, աշխատում և մտածում ենք արեկի լույսի ու ճառագայթների շնորհիվ:

Արեկ... դա մեր կյանքի, մեր ֆիզիքական ու մտավոր աշխատանքի աղբյուրն ե: Դա սկզբնապատճառն ե այն ամենի, վոր ապրում ե աշխարհի յերեսին: Նա իր կենդանարար ճառագայթներով մեզ այնքան տաքություն ե տալիս, վոր հաշիվ յերեք չենք կարող:

Այժմ հարցնենք. ինքն արել վորտեղից այդքան տաքություն

ունի, և մինչև յերբ կրավականանա այդ տաքությունը: Արել տաքություն ունի վոչ թե նրա համար, վոր ինքն ալրգում, վառվում է, այլ վորովհետեւ, նա հարաւան սղմվում է, վորի ժամանակ նրա մասնիկները շարժվում, շփվում են իրար: Իսկ այս շփումից տաքություն ե առաջ գալիս:

Արել սղմվելիս հետզհետեւ հովանում է: Բայց վորովհետեւ առեվը հսկայական մեծություն ունի, զրա համար ել նրա տաքության պաշարը հսկայական է:

#### Խ Ն Դ Ե Ր Կ Ե Ր

1. Նկարագրեցեք, թե արել տաքությունն ինչպես ե քամո փոխվում:

2. Գրեցեք, թե ինչպես է, վոր ամպերն արելի աշխատանքի արդյունքն են:

3. Պատմեցեք գետերի դերի մասի:

4. Բացատրեցեք, թե ինչպես է, վոր մեր ամբողջ տեխնիկան ու արդյունաբերությունն արելի լույսի ու տաքության արդյունք ե հանդիսանում:

5. Գրեցեք, թե ինչու մարդը միայն արելի շնորհիվ կարող է մտածել ու ստեղծագործել:

#### 16. ՅԵՐԵԿ ՈՒ ԳԻՇԵՐ ՀԱԶՈՐԴՈՒՄ ԵՆ ԻՐԱՐ

Ամենքդ տեսել եք, թե առավոտներն արելին ինչպես ե ծագում, հետզհետեւ բարձրանում հորիզոնի վրա, ապա մայր մտնում: Արելի հորիզոնի յետելի անցնելուց հետո գիշերը մելեն չի վրա համար: Մեր տեղը գեռ միառժամանակ լուսավորված ե մնում: Հետո յերեվում են նախ՝ առաջին մեծության աստղերը, և մոլորակները, այնուհետեւ աստիճանաբար նաև պակաս փայլ ունեցող աւտղերը:

Արելի մայր մտնելուց մինչև առաջին մեծության աստղերի յերկալու մեջ յեղած ժամանակամիջոցը կոչվում է քաղաքացիան աղջամուղջ, իսկ մինչև վեցերորդ մեծության աստղերի յերեալը՝ աստղաբաշխական աղջամուղջ:

Հասարակ աչքով տեսնվող բոլոր աստղերի կամ վեցերորդ մեծության աստղերի յերկալու բոլոր սկսվում ե գիշերը:

Արելի ծագելուց առաջ ել գիշերն ե աստիճանաբար յերեկի փոխվում կամ մենք տեսնում ենք արշալույսը: Յեթե յերկիրւ շրջապատված չլիներ մթնոլորտով, աղջամուղջ և արշալույս չելին լինել: Գիշերը մեկեն վրա կհասներ:

Արշալույս և աղջամուղջ տեղի յեն ունենում, վորովհետեւ մըթնոլորտի վերին շերտերն անդրադարձնում են արելի ճառագայթնեւ:

Ըստ գրանից ել թույլ լուսավորություն ե ստացվում: Ի՞նչն ե պատճառը, վոր գիշեր ու ցերեկ հաջորդում են իրար:


— Ի հարկե արելի յերկութական շարժումից՝ յերկնակամարի վրա—թվում ե մեզ: Բայց չե վոր արեկելքից արեմումտք տեղի ունեցող այդ շարժումը վոչ այլ ինչ է, յեթե վոչ յերկի պըտույտը: Ուրեմն ցերեկի և գիշերի իրար հաջորդելն ել առաջ ե գալիս նրանից, վոր յերկիրն արեկելքից արեմումտք պտտելովիր առանցքի շուրջը, յերբեմն մի կողմն ե դեպի արեր դարձնում, յերբեմն մյուսը: Յերկրի այն մասում, վոր դարձած ե դեպի արեր, ցերեկ է լինում, իսկ հակառակ կողմում—գիշեր (տես նկար 26 և 27):

Յերկրի այս պտույտից ել ըստ վերռաջե գալիս զանազան տեղերի ժամացույցերի տարբերությունը:

Ճիշտ արելի առաջնով անցնող տեղերում կեսոր կլինի, իսկ հակառակ կողմում—կես գիշեր (տես նկար 27):

Յերկրի պտույտի ժամանակ ըստ վերից դեպի լույս գուրս յեկող տեղերում առավոտ կլինի, իսկ լույսից դեպի ստվեր մասնող տեղերում—յերեկո (տես նկար 27):


Վորովհետեւ յերկիրը պտտվում ե արեմումտքից արեկելք, այդ պատճառով ել արելի մոտով առաջ արեկելյան յերկրամասերն են անցնում: Հենց զրա համար ել ժամացույցն արեկելքում ավելի բարձր թիվ ե ցույց տալիս, քան արեմումտքում: Նայեցեք 27-րդ նըկարին, և դուք պարզ կտեսնեք, թե յերկրի վրա յերբ ե ցերեկվա 12 ժամը, 3 ժամը, յերեկոյան 6 ժամը, 9 ժամը, գիշերվա 12 ժամը, 3 ժամը, առավոտյան 9 ժամը: Մենք համոզվեցինք, վոր ամեն յերկիր իր սեփական ժամանակն ունի, այսինքն տարբեր վայրերում ժամացույցը յուրատեսակ ե ցույց տալիս: տվյալ տեղը վորքան ավելի դեպի արեկելք ե, ժամացույցն ել այնքան մեծ թիվ ե



Նկ. 26 Յերկրի գիշեր գեկանմբերի 22-ին  
(վերի) հունիսի 22-ին (ներքի)

ցույց տալիս: Որինակ. յերբ Լոնդոնում կեսոր ե Լենինգրադում ցերեկվա ժամը 2-ե, Յերևանում 3-ե, Խաբարովակում (Արևելյան Սիբիր) յերեկոյան ժամի 9-ե, իսկ Վաշինգտոնում (Ամերիկա)՝ առավոտյան ժամը 7-ը:

Յեթե մի ամբողջ տարի ուշադրությամբ հետեւնք ցերեկի ու զիշերի իրար հաջորդելուն, հեշտ կնկատենք, վոր այդ հաջորդելն ել տարվա զանազան որերում տարբեր ե լինում: Որինակ. ձմեռը



նկ. 27 զիշեր և ցիրեկ

ցերեկը շատ կարծ ե. կարծես արևի ծագելն ու մայր մտնելը մեկ ե լինում. և ընդհակառակն ամառը ցերեկը շատ յերկար ե, իսկ զիշերը կարճ:

Տարվա ամենայերկար ցերեկը լինում ե հունիսի 22-ին: Այդ ժամանակ հյուսիսային Ռուսաստանում յերեկոյան աղջամուղը շատ յերկար ե տեսում, վորին իսկույն արշալույսն ե հաջորդում. աստղեր համարյա չեն յերևում և բնակ չենք սխալվիլ, յեթե ասենք — այդ տեղ զիշեր չկա:

Այդ զիշերները սպիտակ գիշերներ են կոչվում:

Լենինգրադում սպիտակ զիշերներ լինում են ապրիլի 23-ից մինչև ոգոստոսի 23-ը:

Տարվա ամենակարճ ցերեկը և ամենայերկար զիշերը լինում ե դեկտեմբերի 22 ին. ցերեկն ու զիշերը հավասարվում են մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին: Այդ ժամանակ արևը ծագում է առավոտվա ժամը 6-ին, մայր ե մտնում յերեկոյան ժամը 6-ին:

Այժմ փորձենք մեր աստղաբաշխական հրապարակում տարվա

զանազան որերում, բայց ճիշտ կեսորին, միջորեյական ձողի ըստ վերը նշանակել ցիցերով: Իսկոյն կնկատենք, վոր տարվա զանազան որերում այդ ստվերի յերկարությունն ել տարբեր կինի: Բանից գուրս ե գալիս, վոր տարվա ամենայերկար ցերեկը (հունիսի 22-ին) ամենակարճ ստվերն ե լինում. իսկ ամենակարճ ցերեկը (դեկտեմբերի 22-ին)՝ ամենայերկար ստվերը:

Մենք արգեն գիտենք, տարվա զանազան որերին հորիզոնի վրա արևի ծագելն ու մայր մտնելը տարբեր կետերում ե լինում:

Տարվա ամենայերկար ցերեկն արևը ծագում ե արևելքի և հյուսիսի կետերի մեջ ավելի մոտ հյուսիսի կետին. մայր ե մտնում արևելքի և հյուսիսի կետերի մեջ ավելի մոտ դարձյալ հյուսիսի կետին: Տարվա ամենակարճ ցերեկը արևը ծագում ե արևելքի և հարավի կետերի մեջ ավելի մոտ հարավի կետին. մայր ե մըտնում արևելքի և հարավի կետերի մեջ ավելի մոտ հարավի կետին:

Ի՞նչ եք կարծում. — ցերեկի և զիշերի իրար հաջորդելն ինչու յե այսպես տարբեր կերպով տեղի ունենում:

Յեթե յերկիրը միայն իր առանցքի շուրջը պտտեր, այդ տարբերությունը տեղի չեր ունենալ. բայց նա տեղի ունի, վորովհետեւ բացի նրանից, վոր յերկիրը իր առանցքի շուրջն ե պտտվում, պըտը տվում ե նաև արգակի շուրջը:

#### ՄԵՐ ԴԻՏԱՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Մեր աստղաբաշխական հրապարակում կեսորին զիտեցեք միջորեյական ձողի ստվերը, ստվերի վերջում ցից տնկեցեք և վըրան զրեցեք ամիսն ու ամսաթիվը: Հետո այդ ստվերն արշինով կամ սանտիմետրով չափեցեք ու զրեցեք ձեր տեսրում: Այդ միենույնը կատարեցեք ամեն որ, հունիսի 15—29: Նույնը կրկնեցեք հուլիսի 20-ի մոտերքը, ոգոստոսի 20-ի մոտերքը, սեպտեմբերի 29-ի մոտերքը, հոկտեմբերի 20-ի և նոյեմբերի 20-ի մոտերքը: Նորից զիտեցեք ամեն որ՝ զեկումբերի 16—30, զբանից հետո դարձյալ հունվարի 20-ի, փետրվարի 20-ի, մարտի 21-ի, ապրիլի 20-ի և մայիսի մոտերքը: Համեմատեցեք այդ դիտողությունները և տվեք ձեր յեղակացությունը:

2. Գարնան, ամրան, աշնան և ձմրան որերից մեկում վորշեցեք բաղաքացիական աղջամուղը տեսրությունը: Դրա համար պետք ե դիտել արևի մայր մտնելը և զրա ճիշտ ժամն ու բոպեն զրել տեսրակում. այսուհետեւ սպասել առաջին աստղի գուրս գալուն, այդ ժամն ու բոպեն ել նշանակել: Այդ յերկուսի տարբերությունը կը լինի աղջամուղը տեսրությունը:

3. Գարնան, ամրան, աշնան, և ձմրան ամիսների որերից մեկում վորոշեցեք աստղաբաշխական աղջամուղջի տեղականությունը: Դրա համար պետք է վարվել այնպես, ինչպես վերն ասվեց, միայն սպասել վեցերորդ մեծության աստղերի յերեալուն. նպատակահարմար ե սպասել Մեծ Արջի Այլկոր աստղի յերեալուն. ուրան յերկնքում գտնելն շատ հեշտ է. նա միշտ Մեծ Արջի պոչի նախավերջի աստղի վերեռումն ե գտնվում:

### 17. ՏԱՐՎԱ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԻՐԱՐ ՀԱԶՈՐԴԵԼԸ


Յեթե տարվա զանազան որերի կեսորին դիտենք միջորեւական ձողի ստվերի յերկարությունը, կտեսնենք, վոր այդ ձողի յերկարությունը հունիսին ավելի կարճ ե լինում, քան դեկտեմբերին, այսինքն արեր հունիսի կեսորին հորիզոնի վրա ավելի բարձր ե լինում, քան դեկտեմբերին: Դրա համար ել արեկի ճառագայթները հունիսին ավելի բարձրից և ուղղիղ են ընկնում յերկրի վրա ու ավելի յեն տաքացնում նրան, քան դեկտեմբերին, յերբ նրանք թեք իջնելով, սահում են յերկրի վրայով. հետեաբար և բիչ են տաքացնում նրան:

Պետք ե ասենք, վոր ցերեկը հունիսին ավելի յերկար ե լինում, քան դեկտեմբերին և արեկն այդ յերկար ժամանակամիջում կարողանում ե ավելի տաքացնել, քան դեկտեմբերին: Այս այս պատճառով ե, վոր մեզնում ամառը տաք ե, ձմեռը ցուրտ: Տարվա յեղանակների—գարնան, ամրան, աշնան և ձմրան—այս հաջորդականությունը առաջ ե գալիս նրանից, վոր յերկիրը պտտվում ե արեկի շուրջը, և այս շարժման ժամանակ յերկրի առանցքը միշտ միենույն թեք ուղղություն ե ունենում: Յերկիրն արեկի շուրջը նույն ուղղությամբ ե պտտվում, ինչ իր աշանցքի շուրջը. այսինքն արենմուտքից—արեկը: Յեթե դուք կարողանաք թեք առանցքով մի գլորուս և մոմ գտնել, կտեսնեք յերկրի այս պտույտն արեկի շուրջը:

Յերեկոյան գլոբուսը դրեք վառած մոմի մոտ, այնպես վոր գլոբուսի առանցքը մոմից դեպի հակառակ կողմն հակված լինի: Յենթազենք, թե վառվող մոմն արեկն է: Յերկրագնդի այն մասում, վոր լուսավորում ե մոմը, ցերեկ կլինի, իսկ մյուսում—գիշեր: Այս գեպում (գլոբուսի առանցքը մոմից հակառակ կողմն ե հակված) արեկի կողմն ավելի շատ հարավալին կիսագունդն ե դարձած, իսկ հյուսային կիսագնդի մեծ մասը ստվերումն ե գտնվում: Արեկի ճառագայթները հյուսիսային կիսագնդի վրա թեք են ընկնում. այդ պատճառով ել այդ տեղ ձմեռ կլինի: Այդ դրությունը լինում ե

ձիշտ դեկտեմբերի 22-ին և կոչվում ե ձմերային արեագարձ կամ ձմեռնամուտ (տես նկար 26 և 28 դիրք III):

Գլոբուսը շրջանաձեւ առաջ առնենք արեկի շուրջը՝ մինչև մարտի 21-ի դրության համար, (դիրք IV): Այդ դրությամբ յերկու կիսագունդն ել մի տեսակ են լուսավորվում և ամեն տեղ գիշերուցերեկ հավասար են լինում: Յերկրի այս դրությունը կոչվում ե գարնան ային գիշերահավասար կամ գարնանամուտ:



Նկ. 28


Յերկրի պտույտն արեկի շուրջը և տարվա չորս յեղանակներ

Շարունակեցեք նույն ձեռվ առաջ տանել գլոբուսը (դիրք I) մինչև հունիսի 22-ի դիրքին համար: Այդ դրությամբ հյուսիսային կիսագունդն ե դարձած ուղղիղ գեպի արեկ և նրա մեծ մասըն ե լուսավորված: Այդ ժամանակ մեզ մոտ սկսվում ե ամառը, յերբ ամենայերկար ցերեկը և ամենակարճ գիշերն ե լինում:

Յերկրի այդ դրությունը կոչվում ե ամարային արեագարձ կամ ամառնամուտ:

Այս միենույն ավելի պարզ ցույց ե տրված նկար 29-ի վրա: Այստեղ մենք տեսնում ենք ամենայերկար ցերեկի տեղաբանությունը յերկրագնդի զանազան կետերում: Որինակ կենինգտոնում ( $60^{\circ}$  լայնություն) ամենայերկար որը տեսում ե 18 ժամ 30 րոպե, Խարկովում ( $50^{\circ}$  լայնություն) — 16 ժ. 9 րոպե: Շարունակեցեք առաջ տանել գլոբուսը մինչև սեպտեմբերի 13-ի դիրքը (դիրք II): Այս անգամ ել յերկու կիսագնդերը մի տեսակ են լուսավորվում և

ցերեկ ու գիշեր ամեն տեղ հավասար են: Այս դրությունը կոչվում  
է աշնանային գիշերահավասար կամ աշնանամուտ:



Նկ. 29

Ցերեկի դիրքը հունիսի 22-ին, ամառամուտ, տարվա ամենայերկար կիսագնդի բնակիչ-  
որը յերկրի զանազան ժամերում.

պատկեր են ներկայացնում:—յերբ հյուսիսում գարուն ե, այնտեղ  
աշուն ե, յերբ հյուսիսում ամառն ե, այնտեղ ձմեռն ե, յերբ հյու-  
սիսում աշուն ե, այնտեղ գարուն ե և յերբ հյուսիսում ձմեռն ե,  
այնտեղ ամառն ե:

#### ՄԵՐ ԴԻ ՏՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Հետեւցեք այս տարի մեր յերկրում ձմեռվա ձյունը հալ-  
վելուն: Գրեցեք ձեր տեսրակներում և սպասեցեք հաջորդ տարվա  
հալոցին: Համեմատեցեք իրար հետ:

2 Տեսեք թե այս տարի ձեզնում յերբ կոտ ձյունը, ճիշտ ժա-  
մանակը ձեր տեսրում նշանակեցեք: Սպասեցեք ձյունի յերեալուն՝  
մի տարուց հետո: Համեմատեցեք իրար հետ:


Զեր տեսրում զրեցեք առաջին կայծակի ճիշտ ժամանակը:  
Դիտեցեք օի տարուց հետո առաջին կայծակի խփելը: Համեմա-  
տեցեք իրար հետ:

#### 18. Ա. Բ Ե Վ Ի Խ Ա. Վ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Բ Բ Ը

Հնումն արեի խավարումները, մանավանդ յեթե նրանք լրիվ  
ելին, ան ու սարսափի մեջ ելին զնում տգետ ու սախապաշարված  
մարդկանց:

Միթի այսոր ել նույնը չե:

Տգետ ու մութ մարդիկ կան, վորոնք հավատացած են, թե ա-  
րեվի խավարման պատճառն այն ե, վոր արեի վրա սի ինչ վոր  
հրեշ, աժդահա յե հարձակվում: Այս հրեշն ուզում ե լափել արեին  
ու իր սև մարմնի ողակներով փակում, ծածկում ե նրան մեր աշ-  
քերից: Նրանց կարծիքով պետք ե ոլի կերպ, ինչ զնով ել ուզում  
ե լիներ, վրկել արել: Այդ ամբոխը փողոց ե գուրս զալիս ու  
աշխատում ե աղմուկ-աղաղակով վախեցնել, փախցնել հրեշն.—  
հրացան են արձակում, աղաղակում են, թմբուկ են զարկում,  
նույնիսկ պղինձներ են թակում: Բայց ի հարկե, գուք ել կասեք,  
վոր չկա մի այգալիսի հրեշ կամ չար վոգի, վոր ուզենար արեին  
լափել: Արեկի խավարումն առաջ ե զալիս նրանից, վոր յերբեմն  
յերկիրն ընկնում ե լուսնի սովերի մեջ (տես նկար 30):



Նկար 30. Արեկի խավարումն


Այդ պատկերի վրա մենք տեսնում ենք մի փոքրիկ սև շրջա-  
սակ, ուր լուսնի սովերն յերկրին ե քսվաւ: Բայց վորովհետեւ յեր-  
կերը պտտում ե իր առանցքի շուրջը, իսկ լուսինը շարժվում ե  
յերկը շուրջը, այդ պտտմառով ել այդ սև շրջանակը, վոր վոչ այ-  
լինչ ե, յեթե վոչ լուսնի սովերի ծայրը, շարժվում ե յերկը մա-  
կերեկույթի վրայով: Այդ սև շրջանակով պտտած յերկըներում  
արեգակի լրիվ խավարումն ե առաջ զալիս:

Այժմ նախորոք են գուշակում արեի խավարումն՝ ճշությամբ  
ցույց տալով խավարելու և այդ խավարման սիրիզն ու վերջանա-  
լու ժամն ու ըստեն: Արեկի խավարման մասին նախըրառք կարելի յե-  
խմանալ լրագրերից և աստղաբաշխական որացույցից:

Արեկի խավարումը զիտելու համար անպատճառ սկայրած, մրո-  
տած ապակի պիտի ունենալ Դա մի զժվար բան չե: Վերցրեք ա-  
պակին, բռնեցեք վառած մոմի վրա, նա մըի շերտով կծածկվի: Ա-  
ռանց այդ ապակու, ինչպես արդեն ասել ենք, արեին նայել չե  
կարելի: Հակառակ գեպքում աչքներս կիսանձնիք:

Յեթէ հեռազիտակ ունեք, ավելի լավ է նրանով նայեք. բայց հենց այդ խողովակի ապակուն ել պիտի այդպիսի մի մըոտած ապակի կպցնել՝ աչքը պաշտպանելու համար:

Այնուհետև, առաջուց գիտենալով խավարման ձիշտ ժամը, տեսրու ու մատիտը բռնած սպասեցեք նրա յերկալուն:




Նկար 32. Արեկի լրիվ խավարումը, զոր տեղի ունեցավ Ռիգայում ոգոստոսի 12-ին

Արեկի խավարումը միշտ նրա աջ կողմում է յերեսում: Ձիշտ այդանու ել կտեսնեք, թե ինչպես է լուսնի ծերը կամ սկավառակն (ՃԱԾԲ) ընկնում արեկի բոլորակի վրա: Իսկույն տեսրում գրեցեք խավարելու սկսվելու ձիշտ ժամը. այնուհետև ժամանակ առ ժա-

մանակ նկարեցեք խավարած արեկի տեսքը, միշտ նշանակելով նաև ժամանակը (Նկար 32):

Քանի դեռ արեկի շրջանակի թեկուղ փոքր մասը բաց է, ար-



Նկ. 31 Արեկակի և լուսնի խավարումների սխեման:

առկարգ վոչինչ չի փոխվում, միայն մի քիչ ավելի մութն է լինում, ձիշտ այնպես, ինչպես ամպամած որերին, բայց և այնպես զգում ես, վոր գեռ կենդանարար արեկ կա:

Բայց ահա կորչում են նաև արեկի վերջին ճառագալթը և վրայի համոււմ արեկի լրիվ խավարումը, վոր տեսում են 3-4 վայրկյան: Թե յերկնքում, թե յերկրի վրա ամեն ինչ մեկեն և փոխվում: Կանաչ ծառերն ու մարգագետինները մոխրագույն են թվում, մարդու մարմինը մութ—սեռելային գույն են ստանում, յերկրի յերեսին ալիքանման ստվերներ են սահում, լույս որը մեկեն փոխվում է զիշերի, ցրտում, սառը քամի յե փշում, բույսերի վրա ցող են նըստում, իսկ գորշ-կապտագույն յերկնքում, լուսնի սև շրջանակի բոլորում արծաթանման պսակ է փայլում. դա արեկի թագն է (տես նկար 32):

Նկարեցեք այդ բոլորը տետրում և նշանակեցեք ձեր տեսնելու ժամն ու ըստեն:

Յերկնքում փայլում են աստղերն ու մոլորակները: Հեռագիտակով նայելիս կարելի յե լինում տեսնել արեկից բարձրացող կարմիր գրաւվորումները կամ պրոտոբերանմները (տես նկար 26):

Կենդանիներն ու թռչունները, կարծելով թե՝ արգեն զիշեր են, լուս ու դեպի իրենց զիշերային հանգստարանն են շտապում, մի քանի բույսեր կուչ են ածում իրենց տերեններն ու ծաղիկները:

Վերջապես մի քանի բույսերից հետո, արեկի ճառագալթները նորից են յերեսում, նորից են ցերեկ դառնում, վոր իր հետ խինդ և ուրախություն են բերում, և ամբողջ բնությունը, վոր մի փոքր առաջ մեռած եր թվում, իր ամբողջ գեղեցկությամբ նորից են արթնանում:

**Ծանրություն.**—Վորքան լավ կլիներ, յեթե կարդայիք ոուս հայտնի գրող Կորունկոյի «Խավարումին» սիրուն պատմվածքը:

### ՄԵՐ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Դիտարանում կամ լրագրներից իմացեք, թե ձեզնում յերբ պիտի արեկի խավարումն լինի: Դիտեցեք այդ խավարումն: Խավարումի ժամանակ ինչ ել վոր կտեսնեք յերկնքում՝ արեկի վրա և շրջապատող բնության մեջ, զրեցեք ձեր տետրում:

2. Վորովհետեւ արեկի խավարումը շատ արագ են տեղի ունենում և դիտելու շատ նյութ են տալիս, ուստի ավելի նպատակահարմար են, դիտելը կատարել ամբողջ կոլեկտիվով կամ մի քանի ընկերներով: Ի հարկե, աշխատանքը նախորոք պիտի բաժանել ընկերների մեջ: Մեկը ժամացույցին են այտում և բարձր ձայնով հայտարարում ժամանակը.—Խավարումից յերկու բոպե առաջ ակսած մինչեւ նրա վերջանալը լուրաքանչյուր բոպեյից հետո, մի քանի ները շրջապատող բնությունն են դիտում, —յերկնքի գույնը, առարկաների գույների փոփոխվելը, չերմության, քամու փոխվելը,

այլ և այն, թե ամպերը յերկնքի յերեսով ինչպես են սահում: Յերկուսը դիտում են արեկի շրջապատի հետզհետե ծածկվել և նըկարում արեկի տեսքը զանազան ժամանակներում - ինչպես ծածկվելիս, այնպես ել արեկի լրիվ խավարումից հետո նրա նորից բացվելը: Մյուս ընկերներն արեկի լրիվ խավարման ժամանակ արեգակնախին թագն են նկարում: Յեթե հեռադիտակ կա, յերկու կամ յերեք հոգի կարող են զիտել արեկի խավարելու ընթացքը: Բոլոր դիտողներն իրենց տետրերում նշանակում են դիտելու ժամանակը:

Այսպիսի կոլեկտիվ աշխատանքից հետո, բոլոր դիտողները ժողովում և պատմում են իրենց տեսածները, վորպեսզի կարելի լինի պատկերացնել տեղի ունեցած յերեսույթը և ընդհանուր յեզրակցություններ հանել:

### ԼՈՒՍԻՆ

#### 19. ԼՈՒՍԻՆԻ ՓՈՒԼԵՐԸ (ՅԱԶԵՐԸ)

Ո՞վ չի տեսել, թե պայծառ ու պարզ զիշերին արծաթափայլ լուսինն ինչպես ե լուսավորում տներն ու ծառերը, վորոնք գետնի վրա վորոշակի ստվերքն թողնում: Լուսնի լույսը նման չե արեկի լույսին: Արեկի լույսի տակ ամեն բան պարզ յերեսում ե, նույնիսկ ստվերում:

Լուսնի տեսքը միշտ միևնույնը չի լինում: Յերբեմն նա մեզ յերեսում ե մեծ ու պարզ շրջանի ձևով, յերբեմն իբրև կիսաշրջան, յերբեմն և նեղ մանգաղի ձևով: Մրանք այսպես կոչված լուսնի փուլերն են, վորոնք 29-30 րը մի անգամ նորոգվում են:

Յերբ լուսնի մեծ ու պայծառ շրջանի ձև ունի, զա այն փուլն ե, վորին լուսնի լրումն անունն ենք տալիս:

Լրացած լուսինը կես զիշերին շատ բարձր ե լինում: Նա ծագում ե յերեկոյան—արեկը մտնելուց հետո, մայր ե ժամում առավոտյան, արեկը ծագելու ժամանակ. Լրացած լուսինը յերբեք արեկի հետ միասին մի կողմում չի լինում. Նա միշտ արեկի զիմացումն ե լինում, յերկնքի հակառակ կողմում: Այսպես. արեկը մըտնում ե հորիզոնի արեմտյան կողմում, իսկ լրիվ լուսինը ծագում ե արեկեթից: Կես զիշերին արեկը հորիզոնի յետեղում ե, իսկ լրացած լուսինը բարձր, հորիզոնի վրա յե և անցնում ե ձիշտ տեղի միջորեյականի վրայով, այսինքն մեր միջորեյական ձողի մոտով: Այդպես կերեա, յեթե նայենք դիտողի ցցի վրայից:

Առավոտյան արեկը գտնվում ե հորիզոնի արեկելյան կողմում, իուկ լրիվ լուսինը—արեմտյան: Կեսորին արեկը բարձր յերկնքում ե հատում ե տեղի միջորեյականի հարթությունը, լրացած լուսինը,

Վոր այդ ժամանակ հորիզոնի յետեռումն է գտնվում, չի տեսնվում:  
Լուսնի լըման ժամանակ մենք շատ պարզ տեսնում ենք, թե  
ինչպես արել լուսավորում ե լուսնին, վոր այդ ժամանակ արել  
դիմացումն ե լինում:

Մանգաղի ձե ունեցող լուսնին ասում ենք նորալուսին:  
Նորալուսինը սենք տեսնում ենք արել մայր մտնելու ժամանակ՝  
յերկնքի արեմայան կողմում, արելց վոչ հեռու, մի փոքր ձախ:

Նոր լուսինը մայր ե մտնում յերեկոյան, արել մայր մտնե-  
լուց անմիջապես հետո: Նորալուսինի ծագումը տեսնել անկարելի յե,  
վորովհետև այդ ցերեկն ե տեղի ունենում, արել ծագելուց անմի-  
ջապես հետո: Արել հետ ել սահում ե յերկնքով, տեղ ունենալով  
միշտ արելց քիչ ձախ: Հենց դրա համար ել միջորեյականի վրայով  
նրա անցնելը զիտել անկարելի յե: Լուսնի փայլուն ու նեղ յեղ-  
ջուրը յերկնք միշտ մեջքով դեպի արեն ե յերեռում: Դեռ չի  
յեղել, յերբեք չի ել կարող պատահել, վոր նորալուսինն իր յեղ-  
ջուրները դարձնի դեպի արել: Արեն այդ ժամանակ ել ե լուսա-  
վորում լուսնին. միայն թե այդ ժամանակ լուսինը մեզ վոչ թե  
շրջանաձեւ յերեռում, այլ նեղ մանգաղի ձեռվ, վորով մեր կողմը  
դարձած ե լինում միայն լուսնի լուսավորված մասի պոռնագը:

Յերբ վոր լուսինը մեզ կիսաշրջանի ձեռվ յերեռում, դե-  
պի աջ դարձած դուրս ընկած մասով, ասում ենք լուսնի առա-  
ջին քառորդն ե:

Արել մայր մտնելիս լուսնի առաջին քառորդը յերեռում և մեր  
միջորեյական ձողի մոտ, ճիշտ տեղի միջորեյականի վրա: Այդպէս  
կերևա, յեթե մենք նայենք առ օղաբաշխական հրապարակում գրտ-  
նըված զիտողի ձողի վրայից: Լուսինն այդ ժամանակի արել մայր  
մտնելուց 6 ժամ հետո յե մայր մտնում: Լուսնի առաջին քառորդի  
ծագումը դիտելն ել անկարելի յե: Վորովհետև դա կատարվում ե  
յերեկը, պայծառ արել ժամանակ:

Լուսինն այս դեպքում ել ե մեջքով դեպի արել դարձած, այ-  
սինքն այն կողմից, վորտեղից նրա վրա լույսն ե ընկնում: Մենք  
նրան կիսաշրջանի ձեռվ ենք տեսնում, վորովհետև միայն նրա  
լուսավորված կեսն ե գործած մեր կողմը:

Յեթե մենք տեսնենք կիսաշրջանաձեւ լուսինը՝ դուրս ընկած  
մասը դեպի ձախ, կասենք լուսնի յերբորդ քառորդն ե: Լու-  
սինը յերբորդ քառորդ յեղած ժամանակ ծագում ե արեածաղից 6  
ժամ առաջ, այսինքն նրան միայն առավոտները կարելի յե տես-  
նել: Արեածաղին նա անցնում ե տեղի միջորեյականի վրայով,  
այսինքն կերեա մեր միջորեյական ձողի մատերքում: Նրա մայր


մանելը յերբորդ քառորդի ժամանակ ել չի կարելի տեսնել, որովհ-  
ետև արդ բանը տեղի յե ունենում ցերեկը, պայծառ արելի ժա-  
մանակ:

Լուսնի յերբորդ քառորդից հետո մենք նրան կրկին նեղ ման-  
գաղի ձեռվ ենք տեսնում, միայն թե մեջքով դեպի ձախ և նույն-  
պես դեպի արել: Այդպիսի լուսինը կոչվում ե նվազումն լուս-  
նի կամ նորալուսնից առաջ: Նա առավոտներն ե ծագում, ա-  
րեվագագից քիչ առաջ: Այդ ժամանակ նա սահում ե յերկնքով, ա-  
րեվի հետ միասին, նրանից վոչ հեռու և դեպի աջ: Դրա համար ել  
չի կարելի դիտել վոչ միջորեյականի վրայով նրա անցնելը, վոչ ել  
մայր մտնելը:

Լուսնի այս փուլերը դիտելուց հետո մարդիկ զվիսի ընկան, վոր  
լուսինն իր լույսը չունի, այլ լուսավորվում ե արելից ստացած  
լույսով:


Լուսինն ել գունդ ե, բայց անլույս: Նա լուսավոր ե այն կող-  
մից, վոր կողմը լույս ե ստանում արեից. մյուս կեսը մութն ե և  
մեղ համար աննկատելի: Բայց վորովհետև լուսինը պտտում ե յերկ-  
րի շուրջը, դրա համար ել մեղ ե դարձնում իր տարբեր լուսավոր-  
ված մասերը. և մենք նրան տեսնում ենք յերբեմն մանգաղի ձե-  
պի, յերբեմն իբրև կիսաշրջան, յերբեմն ել իբրև ամբողջ շրջան:  
Հենց այս պատճառով ել մեղ թվում ե, թե լուսինը տարբեր ձեեր  
կամ, ինչպես ասում են, փուլեր ունի (տես նկար 33\*):

Լուսնի փուլերը  
փորձով ցույց տալը  
դժվար չե (աես նկ.  
34): Վերցնենք վո-  
րեկ գնդակը, սպի-  
տակ թղթով պա-  
տենք և պտտենք մեր  
շուրջն այնպես, վոր  
զանազան դիրք ու-  
նենա թե մեր, թե  
վառվող լապտերի  
վերաբերությամբ:  
Լապտերն անպայ-  
ման առանց լուսամ-  
փոփի պիտի լինի:  
Պտտելիս մենք կը  
տեսնենք գնդակի  
տարբերձեռվ լուսա-  
վորված մասերը կամ  
փուլերը:



Նկ. 33, Համար փուլերը

\*) 1-6 լուսնի զիրքերն են որբիտի վրա, որբիտից դուրս լուսնի  
դիրքերը նկարված են այնպես, ինչպես մեղ յերեռում ե լուսինը:



Նկար 34. Հուսնի փուլերը ցույց տվող փորձ կելով ճիշտ ժամն ու ժամանակը. ապա մի որից հետո, ճիշտ մինույն ժամին նույնը կրկնենք ու մեր այս դիտողությունները համեմատենք իրար հետ, կնկատենք, վոր լուսինն իր դիրքն աստղերի մեջ զգալի կերպով փոխել ե՝ աջից դեպի ձախ. Այդ փոփոխությունը մենք մի դիշերքա դիտողություններով ել կնկատենք, վորովնետև բավական նկատելի ու արագ կերպով ե տեղի ունենում: Այդ փոփոխությունը 5—6 ժամերի ընթացքում այնքան ե տեղի ունենում, վորքան տեղ կրոնելին 6 լրիվ լուսիններ՝ կողք-կողքի դըրսում:




Նկար 35

7 Ժ. 20 Ր. յերեկոյան

Հուսնի դիրքն աստղերի մեջ

Այդ բոլորը մեզ համար ավելի պարզ կլինի մանավանդ այն դեպում, յեթե դիտողությունները կատարենք մեր ցանցի միջոցվով (տես նկար 22):



Նկար 36

10 Ժ. 20 Ր. յերեկոյան

Հուսնի դիրքն աստղերի մեջ

Լուսինը դիտե-  
լիս, յեթե աերձա-  
վոր աստղեր ել  
տեսնենք, զրա հետ  
միասին կնկատենք,  
վոր լուսինն աստ-  
ղերի մեջ ունեցած  
իր դիրքը փոխում եւ:  
Իսկապես, յեթե  
մենք նկարենք լուս-  
նի դիրքն իրեն շատ  
մոտ գտնվող աստ-  
ղերի մեջ՝ նշանա-  
կելով ճիշտ ժամն  
ու ժամանակը՝ ապա  
մեր այս դիտողությունը մենք մի դիշերքա դիտողություններով ել կնկատենք, վո-  
րովնետև բավական նկատելի ու արագ կերպով ե տեղի ունենում:

## ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Դիտեցեք լուսնի փուլերի փոփոխությունները: Դրա համար լուսնի ծնունդից 3 կամ 5 որ անց դիտեցեք լուսինն արևի մայր մանելուց հետո ու նկարեցեք նրա դիրքը հորիզոնի և արևմտոցի վերաբերմաբ: Զմոռանալ նշանակել ամիսն, ամսաթիվը ու ժամը: 1-2 որից հետո նույն դիտողությունը կրկնեցեք: Զեր նկարներն ու դրությունները համեմատեցեք ու յեզրակացություն արեք: Յերբ հնարավորություն ունեք, շարունակեցեք այդ դիտողություններն ու յեզրակացությունները մի ամբողջ ամիս:

2. Դիտեցեք լուսնի մայր մանելը սկսած ծնունդի 4-րդ որից մի ամբողջ ամիս և ասացեք—հնարավոր ե արդյոք լուսնի ծնունդը դիտել թե վոչ: Տետրում նկարեցեք լուսնի փուլն անմիջապես մայր մանելուց առաջ, իհարկե, նշանակելով լուսնի մայր մանելու ամիսը, թիվը, ժամն ու ըոպեները: Յեթե գտնեք, վոր դիտելն անկարելի յե, զրեցեք դրա պատճառը: Այժմ ասացեք—վոր փուլերի ժամանակ կարելի յե դիտել լուսնի մուտքը և վորի ժամանակ՝ վոչ:

3. Լուսնի լրումի որից սկսած մի ամբողջ ամիս, ամեն որ դիտեցեք լուսնի ծագելը և անձամբ համոզվեցեք, թե կարելի՞ կամ հնարավոր ե դիտել լուսնի ծնունդը, թե վոչ: Լուսնի ծագումից անմիջապես հետո նկարեցեք լուսնի փուլը, նշանակեցեք ճիշտ ժամը: Յեթե անկարելի լինի լուսնի ծագումը դիտել, գրեցեք պատճառը:

Դեհ, ասացեք, վոր փուլերի ժամանակ կարելի յե դիտել լուսնի ծագումը. վորի ժամանակ՝ վոչ:

4. Մեր աստղաբաշխական հրապարակի դիտողական ձողից դիտեցեք լուսնի անցնելը տեղի միջորեյականի վրայից: Ասացեք—յերեկոյան, լուսնի վոր փուլի ժամանակ ե՞նչնարավոր այդ դիտողությունը, և մոտավորապես վոր ժամին: Այսուհետև ձեր՝ ասած ժամին սպասեցեք լուսնի անցնելուն՝ միջորեյական ձողի մոտից. ձեր տեսածը նկարեցեք տետրում, նշանակեցեք ճիշտ ժամն ու ըոպեն և տեսեք—ճիշտ եյիք հաշվել:

5. Աշխատեցեք արևի մայր մանելուց հետո ամեն յերեկո դիտել լուսինը, նշանակել դիտողությունների ճիշտ ժամանակ՝ լուսնի առաջին քառորդի ժամանակ: Այդ հիման վրա գուշակեցեք լուսնի լրման, յերբորդ քառորդի, ծնունդի և առաջին քառորդի մոտավոր ժամանակը: Ստուգեցեք ձեր գուշակածը:

6. Դիտեցեք լուսնի տեսանելի տեղափոխությունը յերկնքում, աստղերի մեջ: Դրա համար ամենանպատակահարմարը աստղալից յերկնքը դիտելու համար շինված ցանցից (նկ. 22) ոգտվե-

լըն ե: Համեմատելով իրար հետ ձեր նկարները, ասացեք—վորքան և դեպի վճռ կողմն ե թեքվում լուսինը մի որվա, 6 ժամվա և 3 ժամվա ընթացքում:

## 20. ԼՈՒՍՆԻ ԽԱՎԱՐՈՒՄԸ

Արել, միշտ լույս տալով, լուսավորում ե յերկրագնդի նախ մեկ ապա մյուս կեսը:

Յերկիրը, իբրև մի անթափանցիկ մարմին, արելի ճառագայթների առաջը կտրում և յետ ե զցում իր ստվերը: Այդ ստվերը յերեսում ե միայն այն ժամանակ յերբ ընկնում ե վորեւ լուսավոր մարմնի վրա: Այդ ստվերի յերկրից ունեցած յերկարությունը լուսնի յերկրից ունեցած հեռավորությունից 3 անգամ ավելի յե: Այդ ե պատճառը վոր լուսինը, վոր յերկրի արբանյակն ե և պտտում ե նրա շուրջը, կարող ե այդ ստվերի մեջ ընկնել—խավարել:

Այս յերկնային յերեսույթը կոչվում ե լուսնի խավարումն (տես նկ. 31):

Յեթե ամբողջ լուսինն ե ընկնում ստվերի մեջ, ստացվում ե լրիվ խավարումն լուսնի, իսկ յեթե նրա միայն մի մասն ե ընկնում ստվերի մեջ, ստացվում ե մասնակի խավարումն:

Լուսնի խավարումները կարող են տեղի ունենալ միայն այն ժամանակ, յերբ լուսինը գտնվում ե արելի դիմաց՝ յերկրագնդի յետեռում:

Չը պետք ե մոռանալ, վոր այսպես կարող ե լինել միայն լուսնի լրման ժամանակ. ուրեմն նրա խավարումներն ել միայն լրման ժամանակ են տեղի ունենում: Լուսնի շարժումը աստղերի մեջ գիտելիս, մենք տեսանք, վոր նա շարժվում ե աջից դեպի ձախ, ուրեմն՝ յերկրի ստվերն ել կընկնի իր ձախ կողմով. նշանակում է լուսնի խավարումը ևս պիտի սպասել նրա ձախ կողմից:

Աստղաբաշխները վորոշ և ճշգրիտ հաշիվների հիման վրա կարողանուս են գուշակել ինչպես լուսնի, այնպես ել արելի խավարումները, յերբ են սկսվելու, յերբ են վերջանալու և յերկրի վոր մասերում են յերեալու: Հետաքրքրվեցեք, այդ գուշակությունների մասին կիմանաք մոտակա աստղաբաշխական դիտարաններում, որացույցից ու լրագրերից:

Լուսնի խավարումը յերկնային հազվագյուտ և հետաքրքիր յերեսույթներից մինն ե. նրան չպետք ե անտեսել այլ պետք ե անպատճառ դիտել:

Դա կատարվում ե մի գեղեցիկ, լուսնայի գիշեր, յերբ բոլորակ լուսինը բարձրանում ու մեզ շրջապատող առարկաները լուսավորում ե իր սառը, բայց ուժեղ լույսով: Այդ առարկաների ստվեր-

ները զատվում են իրենց սուր սեվությամբ: Մեկ ել հանկարծ, խավարման հենց առաջին վայրկյանից, լուսնի այդ պայծառ լույսն ըսկում ե նվազել. ահա մի թեթև ամպ անցավ լուսնի վրայով: Լուսնի պայծառ բոլորակն սկսում ե հետզետե մթնել. կարծես, մի ինչ վոր մոխրագույն խուփ ձախ կողմից առնելով՝ գալիս ծածկում ե նրան: Յերկրի ստվերն ե դա. նշանակում ե՝ լուսինն արդեն էնկավ այդ ստվերի մեջ:



Նկ. 37  
Լուսնի խավարումը Հենինգադում

Յերկրի այդ ստվերը, քանի զնուժ, ավելի պարզ ե տեսնվում լուսնի վրա. իսկ մնացած առարկաների ստվերներն սկսում են նը-

վագել։ Նրանք այլիս առաջվա նման սուր ու սև չեն։ Նրանք կամաց կամաց լուծվում ու չքանում են։

Լուսնի սուլորական լույսը հանգչում ե. մնում ե մի բոլորովին այլ տեսակի լույս, վոր զարմանք ե պատճառում խավարումը դիտողներին։ Լուսինը բոլորովին չի սեանում, թանաքի նման, ինչպես արեջն ե սեանում՝ իր լրիվ խավարումների ժամանակ։ Լուսինը բոլորովին անտեսանելի չի դառնում։ Մենք շարունակում ենք լուսինը տեսնել բայց այս անգամ վոչ իբրև ուսափոր շըջանակ, — ինչպես խավարումից առաջ եր։ Նրա գույնը դառնում ե ինչ վոր գորշ-կամրավուն։ Այդ առաջ ե գալիս նրանից, վոր արևի ճառագայթների մի մասը, վորոնք այնուայնայնիվ անցնում են յերկրի մոտով, նրան շըջապատող ողի միջով, ընկնելով լուսնի վրա, լուսավորում են նրան ինչ վոր կարմրավուն լույսով։ Այս կարմրավուն արտացոլքը մենք միշտ տեսնում ենք արևը մայր մտնելուց հետո։

Լուսնի խավարումը տեսում ե՝ քանի դեռ նա անցնում ե յերկրի ստվերի միջով, այսինքն յերկու ժամ։

Յեթե լուսինն իր լուսան ունենար, ինչպես արեն ու աստղերն ունեն, նա խավարումներ չեր ունենալ. նրան մթացնելու համար յերկրի ստվերը շատ անույժ կը լիներ։ Լուսնի խավարումների ժամանակ յերկրի ստվերը նրա վրա պարզ յերեսում ե։ Այդ ստվերը միշտ կլոր ե լինում. իսկ այդպիսի ստվեր թողնում են միշտ կլոր, գնդաձև առարկաները. որինակ. գնդակը, ինձորը, ձըմերուկը և այլն։ Ուրեմն լուսնի խավարումներն ել են հաստատում վոր մեր յերկիրը մի մեծ գունդ ե<sup>\*)</sup>։ Յեթե յերկիրը հենարան ունենար, այդ հենարանն ել ստվեր կսւնենար, այդ ստվերը մենք կը տեսնելինք լուսնի վրա, նրա խավարման ժամանակ։ Բայց այդպիսի բան յերբեք չի յերեացել։ Այստեղից պարզ ե, վոր յերկիրը վոչ մի հենարան չունի. նա ազատ ընկած ե տարածության մեջ այնպես, ինչպես ե մյուս յերկնային մարմինները։

#### ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Աստղադիտարանում, օրացույցից կամ լրագիրներից իմացեք, թե յերբ ե սպասվում լուսնի խավարումն։ Վճր ժամին ու բոպեյին են լիսելու նրա սկիզբն ու վերջը։ Նախորոք դիտելու պատրաստվեցեք։ Դիտելու որը ճշտեցեք ձեր ժամացույցը, պայտանավորվեցեք մի քանի ընկերների հետ և աշխատանքը բաժանեցեք։

Լուսնի խավարումը դիտելը ամենալավը խմբով կատարելն եւ Խավարումից յերկու բոպե առաջ մի ընկեր սկսում ե բարձր ճայ-

<sup>\*)</sup> Այդ յերեայթը առիթ տվեց Արիստոտելին ապացուցել յերկրի գնդաձևությունը։ Հ. Հ.

նով ասել թե ժամի քանիսն ե, այդ անելու յե նա յուրաքանչյուր բոպեյից հետո և շարունակելու յե մինչև խավարումի վերջը։ Մի քանի ընկերներ նկատում են լուսնի աստիճանաբար սուզվիլը յերկրի ստվերի մեջ, հետո յել՝ նրա աստիճանաբար դուրս լողալն այդ ստվերից։

Զը մոռանաք. — Լուսնի խավարումը ձախ կողմից ե սկսվում։ Ընկերներից վոմանք հետեւում են շըջապատող առարկաների գունավորվելուն ու ստվերներին։


Յերկու, յերեք ընկերներ ել հեռագիտակով, յեթե այդպիսին կա, լուսնի խավարման ընթացքն են դիտում, միաժամանակ նշանակելով առաջին ընկերովից լսած ժամանակները։

Այսպիսի կոլեկտիվ աշխատանքից հետո հավաքվում և հաժեմատում են իրենց դիտածները, վորակեսզի կարելի լինի այդ յերեւույթի ընդհանուր պատկերը տալ և ընդհանուր յեզրակացություններ անել։

## 21. ԼՈՒՄԻՆ

Մեր միակ արքանյակ լուսինը մեզ նույնպիսի շրջան է թվում, ինչպես և արեվը։ Ակամա հարց ե ծագում, թե լուսինն ել նույնքան մեծ ե, վորքան և արեվը, վոր, ինչպես դիտենք, մեր յերկրից 1,300,000 անգամ մեծ ե։

Վոչ, լուսինը շատ փոքր ե. նա մեր յերկրից 50 անգամ փոքր ե (տես նկ. 38)։



Նկ. 38. Երկիր և լուսին.


Յեթե լուսինը ձեզ նույնքան մեծ ե յերեվում, վորքան և արեվը, դրա միակ պատճառն այն ե, վոր լուսինը մեզ անհամեմատ ավելի մոտ ե, քան արեվը։ Նա յերկրից միայն 384,000 կիլոմետր ե հեռու։

Հեռու առարկաներ միշտ փոքր են յերեվում. այդ ե պատճառը, վոր անագին, բայց մեզնից հեռու արեվը նույնքան փոքր արդիան ե յերեվում, վորքան և փոքրիկ, բայց մեզ մոտիկ լուսինը։

Յեթե մնաք սովորական աչքով նայենք լուսին, նրա վրա մութն ու պարզապ բժեր կտեսնենք. բայց հենց վոր վերցնենք թերկուզ ամենահասարակ հեռադիտակ ու նայենք, շատ պարու կերպով

լեռներ կտեսնենք։\*) Հեռադիտակով կտեսնենք նաև, վոր հասարակ աչքով յերեացող մութ կետերը վոչ այլ ինչ են, յեթե վոչ ահագին խոր փոսեր։ Առաջ կարծում եյին, թե այդ մութ բժերը ծովեր են։ Հիմա յել են այդպես անվանում։ Իրանց չափով նրանք մեր ծովերից փոքր չեն, միայն անջուր են։ Պետք ե նկատել, վոր լուսնի վրա վոչ մի տեղ ջուր չկա։ Ինչպես յերեում ե, այդ բժերն առաջ ծովեր են յեղել, վոր ժամանակի ընթացքում ցամաքել, ու թողել են այդ ահագին փոսերը, վորոնց հունը ծածկված ե ինչ վոր մութ, կարծես չորացած մոխրագույն ցեխով։ Լուսնի վրայի պայծառ տեղերը լեռներ ու լարձրություններ են։ Լեռների լուսավորված մասերը ուժեղ փայլում են. նրանք շատ բարձր են և սուր ու սեղեր են թողնում (տես նկար 39). Գիտունները այդ ըստ վերներով ել վորոշում են լուսնի լեռների բարձրությունը։ Լուսնի հյուսիսային բեկորը

Սառնոթյան  
ծով



Արիստոտել

Եղիսաբետ

Կարգության  
ծով

130 կիլ. յեր-  
կարությամբ  
և 10 կիլ. լայ-  
նությամբ  
ճեղքվածք

Եղիսաբետ

Կասովինի

Անձրևների  
ծով

Երիստրիլ


Ավտոլիկ

Կովկաս  
Նկ. 39 Լուսնի հյուսիսային մասը հեռադիտակով դիտելիս

Նկար 39 լուսնի վերին մասը հեռադիտակով. յերեում են Սառնոթյան, Անձրևների և Պարզության ծովեր. Կովկասյան և Ալպյան շղթաները. Արիստոտելը, Եվլոկսը, Կասսինին, Արիստիլին, Ալտոլիկը և ուրիշ սարեր։ Ճեղքվածքի չափը մասշտաբ ե լուսնի մակերեսութիւնի վրա յերեացող առարկաների համար։

\*) Առաջին անգամ լուսնու լեռները նկատեց իր հնարած հեռադիտակով իտալացի Գալիլեո Գալիլեուը. Հ. Հ.


Լուսնի վրա յեղած սարերի ու բարձրությունների ստվերները մեզ մի անգամ ել են ասում, թե լուսինն իր սեփական լույսը չունի. նա իր լույսն ստանում է արևից, վորը լույս է տալիս նաև մեր յերկրին:



նկ. 40 Յերկրը լուսնի մակերեսութից

Հեռադիտակը ցույց է տալիս, վոր լուսնի մակերեսույթն ամբողջապես սարերով է ծածկված: Այնտեղ ել մի քանի կիլոմետր բարձրություն ունեցող սարեր կան. կան նաև մեր կովկասյան լեռ-

նակոտու նման յերկար լեռնաշղթաներ: Լուսնի վրա ամենից շատ կլոր սարեր են. Դրանց կը ատերն եր են անվանում: Կրատերը սարե, ստորոտում լայն ու կլոր, իսկ գագաթում խոր փոսով: Կրատերը շատ ենման մեր յերկրի հրաբուխին, միայն թե վաղուց հանգել ե (տես նկ. 41):



նկ. 41 Լուսնի մակերեսութիվը

Առաջ, շատ առաջ լուսինը հեղուկ և հալված վիճակումն է յեղել: Հետո նա սառել ու կեղեռվ ծածկվել եւ: Ժամանակի ընթացքում կեղեռվ սկսել է ճեղքվածքներ տալ: Այդ ճեղքվածքները լավ հեռադիտակով պարզ յերևում են: Կասկածից դուրս ե, վոր լուսնի բաղմաթիվ կրատերներն անհիշելի ժամանակներում գործող հրաբուխներ են յեղել, վորոնք ահազին քանակությամբ կրակ, ծուխ և մոխիր են արտավիժել: Լուսնի մակերեսույթը գողում ու տատան-

վում եր ներքին կրակի ձնշումից բայց այժմ այստեղ ամեն ինչ  
մեռած ե ու հանգիստ:

Լուսինը յերկրին միշտ իր մի կողմն ունի դարձրած. իսկ արեւ-  
փին նա դառնում է ամեն կողմով: Այսպիսով մարդիկ իմացան, վոր  
լուսինն ել իր առանցքի շուրջը պտտում է արևմուտքից արեւելք,  
միայն թե՝ նա իր ամբողջ պտույտը կատարում է վոչ թե 24 ժա-  
մում, ինչպես յերկիրը, այլ 27<sup>1</sup>/<sub>3</sub> որում: Այսպիսով լուսինն իր ա-  
ռանցքի շուրջը պտտում է այնքան ժամանակում, վորքան ժամա-  
նակում պտտում է յերկրի շուրջը: Դրա համար ել միշտ միևնույն  
կողմով ե նայում յերկրին: Վորովհետեւ նա այդքան դանդաղ է պտ-  
տում յերկրի շուրջը, դրա համար ել լուսնի որը տեսվում է մոտ 14  
յերկրային որ. մոտավորապես այնքան ել գիշերն է տեսվում:

Այդքան յերկար որվա ընթացքում լուսնի մակերեսութը սաս-  
տիկ տաքանում է, բայց հետո յերկար գիշերվա ընթացքում ել  
սաստիկ հովանում, սառչում է: Այս յերկար, մութ և ցուրտ գիշերը հի-  
շեցնում է յերկրի բեկեռային գիշերը: Միայն թե լուսնի վրա չը  
կան վոչ աղջամուղջ, վոչ արշալույս, վոչ ամպեր, վոչ մառախուղ,  
վոչ քամի, վոչ ջուր, վոչ ոդ: Վոր այդ այդպես ե, հեշտ կորելի  
յե համոզվել արեկի խավարումների ժամանակ: Յեթե լուսնի վրա  
մթնոլորտ լիներ, անպատճառ պիտի յերեար արեկի խավարումների  
ժամանակ, յերբ լուսինն ընկնում է արեկի և յերկրի մեջ: Լուսնի  
վրայի սարերի ստվերներն ել են շատ սե: Դա յել ապացույց է,  
վոր լուսնի վրա ոդ չկա: Ոդ վոր չկա, քամի, սոսափյուն, ձայն  
ել չկա: Ամեն ինչ լուս և ու մեռած: Յեթե լուսնի վրա ջուր լի-  
ներ, արեկի ճառագայթների ազգեցության տակ ամպ ու մառախուղ  
ել պիտի լիներ. բայց դրանցից և վոչ մեկը չկա: Իսկ առանց ոդի  
և ջրի վոչ մի կենդանի արարած չի կարող ապրել: Լուսնի վրա  
կյանք չկա: Այստեղ վոչինչ չի բուսնում, վոչ վոք չի ապրում.—  
վոչ թռչուն, վոչ գաղան, վոչ ձուկն, վոչ ել մարդ: Լուսինը կեն-  
սազուրկ, չորացած ցուրտ անապատ է, նա պտույտ է դալիս  
տիեզերքի անհունության մեջ, և, իբրև մի հսկայական հայելի, ար-  
տացոլում է դեպի մեզ արեկի ճառագայթներն ու պայծառ գիշեր-  
ները:

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ\*)

1. Յեթե հեռագիտակ ունեք, նայեցեք լուսնին, նրա սարերին,  
ծովերին, սարերի ստվերներին և լուսնի մակերեսութի տեսքը հա-  
մեմատեցեք 39, 40 և 41 նկարների հետ:

\*) 2. Վորպեսզի հսկանաք, թե ինչու լուսնի միայն մի կողմն է դար-  
ձած դեպի յերկրը և նրա մյուս կողմը յերեք մեզ չի յերեսում, չնայելով,

## ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

### 22. ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

Մեր յերկրը ևս մի յերկնային լուսատու յե, թեպետ իր սե-  
փական լույսը չունի: Նա արեկից է լույս ստանում, իր առանցքի  
շուրջը պտտվում է արևմուտքից արեւելք, արեկի շուրջը պտտում է  
նույնպես արեմուտքից արեւելք: Մեր յերկրը մի արբանյակ կամ  
մոլորակ ունի: Պա լուսինն ե: Յերկրից բացի ուրիշ յերկնային մար-  
միններ ևս կան, վորոնք նույնպես պտտում են արեգակի և իրենց  
առանցքների շուրջը: Սրանք ել են իրենց լույսն արեկից ստանում:  
Դրանցից մի քանիսներին մարդը վաղուց է ձանաչել, վաղուց է  
կարողանում աստղերի մեջ տարբերել: Այդ մոլորակներն աչքի յեն  
ընկնում իրենց միապաղադ, հավասար ու չառկայծող լույսով, այն  
ինչ՝ աստղերն առկայծում, շողշողում են: Բացի դրանից, մենք նը-  
րանց յերբեմն միուս համաստեղության մեջ ենք տես-  
նում, վորովհետեւ իրենց տեղն աստղերի մեջ փոփոխում են:

Մարդիկ դրանց մոլորակ անունն են տվել, վորովհետեւ շըր-  
ջում են մոլորվածի նման: Հեռագիտակով նայելիս մոլորակների ու  
աստղերի տարբերությունն իսկույն աչքի յե ընկնում: Այն ժամա-  
նակ, յերբ աստղերը՝ նույնիսկ ամենամեծ զիտակով միայն լուսա-  
տու կետեր են յերեսում, մոլորակները շըջանսուկներ են յերեսում:  
Մենք յերբեմն նույնիսկ կարողանում ենք մոլորակի մակերեսութիւն-  
կառուցվածքը վորոշել, միշտ այնպես ինչպես լուսնինը:


Յեթե մի քանի ամիս շարունակ ցանցով (Նկար 22) գի  
վոր նա իր առանցքի շուրջը 27 որում մի անգամ պտույտ է կատարում հե-  
տեւալ փորձն արեկ:

Գծեցեք մի շրջագիծ. թող այդ լինի լուսնի որբիտը: Այդ շրջագիծի կենտ-  
րոնում նկարեցեք յերկրագունդը Տ. իսկ շրջագիծի վրա լուսնի փոխարեն զը-  
րեք մի արձաթե 20 կոպեկանոց այնպես, վոր նրա աստղը դարձած լինի  
դեպի յերկրագունդը Տ. թող այդ 20 կոպեկանոցը լուսնի որբիտի վրայով  
կատարի մի պտույտ՝ ձախից աջ, յերկրագունդի (Տ) շուրջը, միշտ աստղը  
դեպի յերկրագունդը (Տ) գարձած: Դուք հեշտությամբ կնկատեք, վոր 20  
կոպեկանոցը յերկրագունդի (Տ) շուրջը՝ պտույտ կատարելի՞ս մի անգամ ևս  
իր շուրջը կատավի: Նույն փորձը կարելի յե կատարել 20 կոպեկանոցի փո-  
խարեն վերցնելով ինձորը՝ կոթով դեպի յերկրագունդը Տ գարձած:


Հ. Հ.

տեսք վորեկ մոլորակի դիրք և նշանակենք մեր տետրակներում, չմոռանալով ճիշտ ժամանակը, մենք կնկատենք, վոր այդ մոլորակն աստղերի մեջ իր դիրքը շարունակ փոխում են Նրա ճանապարհը կնմանի ամկանոն գծի՝ ըեկումներով ու կռմաններով (նկ. 42):

Մարդիկ վաղուց են ուշադրություն դարձրել մոլորակների այս տարրինակ մոլորվածության վրա: Բայց միայն այն ժամանակ դա հասկանալի դարձավ, յերբ մարդիկ համոզվեցին, թե՝ վոչ թե աստղերն ու արևն են պատում



Նկ. 42 Սատուր մոլորակի տեսանելի ճանապարհն աստղերի մեջ 1912 թ.




Նկ. 43 Մոլորակների ճանապարհն արևի շուրջը

յերկրի շուրջը, այլ ինքը՝ յերկնագունդն ե, վոր հարատե շարժվում ու պտտում ե թե իր առանցքի, և թե արևի շուրջը:

Միայն յերկիրը չե այդ վիճակում, մոլորակներն ել են պլտտում արևի շուրջը, այն ել՝ միշտ միենույն ուղղությամբ – արեմուաքից արևելք: Ճիշտ ախպես, ինչպես յերկրագունդը:

Բայց վորովհետև մենք և մեր յերկիրը հարաշարժ դրության մեջ ենք և պտտում ենք արևի շուրջը, մեզ թվում ե, թե մոլորակներն են շարժվում աստղերի մեջ, այն ել այդպես տարրինակ կերպով: Մոլորակներն արևի շուրջը հետեւյալ կարգով են պտտում (նկար 43):

Արևին ամենից մոտը Փայլածու կամ Մերկուր մոլորակն ե. հետո – Արուսյակը կամ Վեներան, այնուհետև Յերկրագունդը՝ Լուսին արբանյակով. հետո գալիս ե Հրատը կամ Մարսը՝ յերկու արբանյակներով: Սրան հետեւում են 1000 մանր մոլորակներ, վորոնք աստերոիդներ են կոչվում: Այնուհետև հաջորդում ե Լուսնթագը կամ Յուպիտերը՝ 9 արբանյակներով, հետո Սատուրնը՝ 10 արբանյակներով, ապա Ուրանը՝ 4 արբանյակներով, ամենից վերջում նեպտունը՝ 1 արբանյակով:



Նկ. 44. Արևի և մոլորակների համեմատական քաշը


### ՄԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դիտեցեք Մարսի, Արուսյակի, Լուսնթագի կամ Սատուրնի տեղափոխությունները՝ ցանցի միջոցով: Նշանակեցեք դիտած մոլորակի դիրքը, դիտողության ճիշտ ժամանակը:

### 23. ՄԵՐ ԿՈՒԻՐ

Մոլորակներից արևին ամենից մոտիկը և ամենից փոքրը Մեր-

Կուր մոլորակն ե, վոր հին հայերից Տյուր անունն ե ստացել: Նա յերկրից փոքր ե, լուսից մեծ (տես նկար 45):



Նկ. 45 Արեգակի և մոլորակների համեմատական մեծությունը

Այս մոլորակը համարյա 3 անգամ տվելի մոտ ե արեկն, քան մեր յերկիրը. դրա համար ել արեկի ճառագայթները նրան ավելի յեն տաքացնում (9 անգամ), քան մեզ: Բայց արեկի ճառագայթները Մերկուրի ամբողջ մակերեսութը չեն տաքացնում: Սա արեի շուրջը պտտում ե 88 որում և միշտ մի կողմով ե դարձած դեպի արեկը, վորովհետեւ իր առանցքի շուրջն ել ե 88 որում պտտում: Նույն յերեսույթն եր ներկայացնում նաև լուսինը, վոր դեպի յերկիրը միևնույն յերեսով ե:

Մերկուրի այն կողմում, վոր դարձած ե դեպի արեկը, մշտական ցերեկ ե և սաստիկ շոգ, իսկ մյուս կողմում—հավիտենական ցուրտ ե ու հավիտենական խավար: Մերկուրի վրա մթնոլորտ կա: Յեկ վորովհետեւ նրա մի կողմում անտանելի շոգ ե, իսկ մյուսում անտանելի ցուրտ, այդ պատճառով նրա վրա կյանք կարող ե լինել միայն այդ յերկու կողմերի սահմանագիծը կազմող շերտում:

Այս մոլորակը դիտել դժվար ե, վորովհետեւ արեկն մոտ լինելու պատճառով պահվում, թագնվում ե նրա ճառագայթների մեջ: Մերկուրն արբանյակներ չունի:

## 24. ԱՐՈՒԽՅԱԿ ԿԱՄ ՎԵՆԵՐԱ

Արուսյակն իր մեծությամբ մեր յերկրի չափ մի մոլորակ ե: Յերեալիս նա յերեկոները պայծառ փայլում ե յերկնքի արևմտյան կողմում, արեկի մայը մանելուց անմիջապես հետո, իսկ առավոտներն արեելյան կողմում, արեկի ծագելուց առաջ:

Մարդիկ նրան «յերեկոյան» կամ «առավոտյան» աստղ անունն են ավել: Յեթե հեռագիտակով նայենք նրան, կտեսնենք, վոր լուսնի նման Արուսյակն ել փուլեր ունի: Նա մեզ մեկ մանգաղի ձևով ե յերեսում, մեկ փայլուն կիսաշրջանի կամ շատ վառ շրջանի (տես նկ. 46):



Նկար 46. Արուսյակի փայլունությունները

Արուսյակն ել, ինչպես մեր յերկիրը, իր առանցքի շուրջը պտտում ե 24 ժամում: Այդ պատճառով նրա վրա յել ցերեկն ու գիշերը համարյա այնպես են, ինչպես յերկրագնդի վրա \*): Բայց տարին կարծ ե, ընդամենը 225 որ, վորովհետեւ նա իր պտույտն արեկի շուրջը կատարում ե 225 որում: Արուսյակը պտտած ե թանձր մթնոլորտով, վոր ահազին քանակությամբ ջրային գոլորշիներ ե պարունակում: Այդ ե պատճառը, վոր այս մոլորակն այնքան պահծառ փայլ ունի: Մթնոլորտի թանձրությունը թույլ չի տալիս դիել Արուսյակի մակերեսույթը:

Արուսյակն արբանյակներ չունի: Նրա վրա կյանքը հնարավոր ե:

\* ) Այդ պնդումը վիճելի յէ: Վեներան այնպիսի թանձր մթնոլորտով ե պտտած, վոր նրա մակերեսույթը լիբրեք չի նկատված ե, հետեւաբար, հնարավորություն չի լիզել նկատել Վեներայի պտույտը, իր առանցքի շուրջը և վորոշել, թե ի՞նչ ժամանակամիջոցում ե կատարվում այդ պտույտը: Հ. Հ.

## ՄԵՐ ԴԻՏՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Յեթե հեռագիտակ ունեք, դիտեցեք Մարսիակը և ձեր տեսրակներում նկարեցեք նրա փուլերը:


25. Մ Ա. Բ Ս

Մարսն անչափ հետաքրքիր է, վորովհետև շատ բանով նսան ե մեր յերկրին, թեպետ նրանից փոքր ե (տես նկար 48): Նա իր առանցքի շուրջը պտույտ է գալիս համարյա նույնքան ժամանակում, վորքան և յերկիրը.—24 ժամից մի փոքր ավելի: Նրա ա-



Նկ. 47 Մարսի բնեուը

ռանցքն ել այնպիսի թերություն ունի, ինչպիսին ունի յերկրի առանցքը: Այդ պատճառով ցերեկի ու գիշերի, այլ և տարվա յեղանակների—գարնան, ամառվա, աշնան



Նկար 48 Մարսի կիսագնդերը

և ձմեռվա իրար հաջորդելն Մարսի վրա յել այնպես ե տեղի ունենում, ինչպես և յերկրի վրա: Միայն տարվա յեղանակների տեսքությունն այնտեղ յերկու անգամ ավելի յե, վորովհետև Մարսն իր ամբողջ պտույտն արելի շուրջը կատարում ե մոտ յերկու տա-

Մարսի վրա կան—մթնոլորտ, կանաչավուն ծովեր և կարմրագույն ցամաքներ: Բևեռների մոտ սպիտակ բևեռային սառուցներ Մն յերեսում, վորոնք ամառը փոքրանում են, մինչդեռ ծովերն այդ ժամանակ ավելի վառ-կանաչ գույն են ստանում (տես նկար 47): Պարսի վրա ծովից-ծով, լճից-լիճ ջրանցքներ են յերեսում (տես նկար 48):

Մարսի ջրանցքները, այնպես, ինչպես մեզ յերեսում են, զարմանալի յերեսույթ են ներկայացնում: Նրանք մի քանի հարյուր կիլոմետր յերկարություն և մոտ յերեսուն կիլոմետր լայնություն ունեն: Սկսվում ու վերջանում են ծովերի մոտ, բայց վոչ յերեք ցամաքում. ընկած են ամենակարձ ուղղությամբ, այսինքն ուղիղ գծերով և հավասարաչափ փոված են Մարսի մակերևույթի վրա: Այդ ջրանցքները, ինչպես յերեսում ե, գետեր չեն. կարծվում ե, վոր դրանք հակայական արհեստական կառուցվածքներ են՝ Մարսի մակերևույթը վոռոգելու համար խոնավություն պահպանելու նպատակով շինված: Մարսի մթնոլորտում ջրային գոլորշիներ ավելի քիչ կան, քան մեր յերկրի վրա. այդ պատճառով այնտեղ բևեռային սառուցներից գարնան հալոցքների միջոցով ստացված ջրերը պետք ե ամբարել ու խնայել: Կերեկի հենց այդ նպատակին ել ծառայում են այդ արհեստական ջրանցքները<sup>\*)</sup>

Ինչպես տեսնում եք, կյանքի համար Մարսը միանգամայն պիտանի յե և հավանորեն, այնտեղ որդանական կյանք կա: Իսկ ջրանցքներն ապացույց են գիտակից արարածների գոյության:

Մարսը յերկու արբանյակ ունի—Ան և Վազ: Մըանք այդպես են կոչվում, վորովհետև ինքը՝ Մարսը նվիրված եր պատերազմի արյունուշտ աստծուն: Մարսի ջրանցքներն ու արբանյակները միայն ամենազորեղ հեռագիտակով են յերեսում:

26. ՅՈՒՂԻՏԵՐ ԿԱՄ ԼՈՒՍՆԹԱԳ

Մոլորակներից ամենից մեծը Լուսնթագն ե: Նա յերկրագնդից մոտ հազար անգամ մեծ ե (տես նկար 53):


Հեռագիտակով նայելիս Լուսնթագը մեզ թվում ե մի շրջակ՝ շերտերով և բծերով: Նրա վրա մթնոլորտ կա:

Լուսնթագը գեռես հեղուկ դրության մեջ ե: Նրա վրա նոր են սկսում կազմակերպվել ցամաքներ: Այդտեղ որդանական կյանք լինել չի կարող, վորովհետև ջուրը ցամաքից դեռ ե բաժանվում:

Լուսնթագն իր առանցքի շուրջը շատ արագ ե պտտում. իր ամբողջ պտույտը կատարում ե 10 ժամում, այնպես վոր, որն այնտեղ միայն 10 ժամ ունի: Դրա վոխարեն այնտեղ տարին շատ յեր-

<sup>\*)</sup>Զպետք ե կարծել, վոր ալդ «Ջրանցքները» լայն են (30—60 կիլո-

կար ե. նա հավասար ե մեր 12 տարուն, վորովինեաև Լուսնթագն Արեկի շուրջը տասներկու տարում ե պատում:



Նկար 49. Լուսնթագ

իսկ յերբ աջովն են անցնում, իրենցից են նրա վրա ստվեր զցում: Այդ ժամանակ տեսնում ենք մի սև բիծ, վոր Լուսնթագի շրջանակի վրա շարունակ տեղ սփոխվում ե:

Լուսնթագն իր տեսանելի արբանյակներով մեր արեգակնային աշխարհի (արևն իրեն շրջապատող մոլորակներով) մի փոքրիկ մոգելն ե:

#### ՄԵՐ ԴԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հեռագիտակով նայեցեք Լուսնթագին և դիտեցեք 4 արբանյակների շարժումն ու դիրքը, նկարեցեք ձեր տետրակներում: Յեթե Լուսնթագի մակերեսույթի վրա վորեւ բան նշմարեք, այն ել նկարեցեք:

#### 27. ՍԱՏՈՒՐՆ

Զորեղ հեռագիտակով այս մոլորակին նայողը կզարմանա նրա տեսքից: Նա ողակով գուերված ե (տես նկ. 50):

Այս ողակը, վոր լայն ե և նուրբ, վոչ մի տեղ չի դիպչում Սատուրնին: Շատ զորեղ հեռագիտակով կարելի յե լինում նրա վրա ճեղքվածքներ տեսնել: Ողակն իր հերթին կազմված ե



Նկար 50. Սատուրն

մի քանի փոքրիկ ողակներից: Ողակն ստվեր ե դցում մոլորակի մետր լայնություն ունեն), անշուշտ, յեթե նրանք ջրանցներ են, ապա ու-

վրա, մոլորակն ել իր հերթին ե ստվեր գցում ողակի վրա: Սատուրնի ողակը վոչ կարծր ե, վոչ հեղուկ, այլ բաղկացած ե անշափ մանրիկ փոշիներից և ամուր մասնիկներից, վորոնք մեղուների պարսի նման վիստում են մոլորակի շուրջը:

Սատուրնը դեռ հեղուկ վիճակում ե: Իր մեծությամբ նա Լուսնթագից քիչ փոքր ե (տես նկար 45): Նա յել ե իր առանցքի շուրջը 10 ժամում պտտում, իսկ արեկի շուրջը՝ 30 տարում: Նա մթնոլորտ ունի և մակերեսույթի վրա զորեղ հեռագիտակով միայն շերտեր են յերեսում՝ նման Լուսնթագի շերտերին (տես նկ. 49):

Սատուրնի վրա յել չի կարող որգանական կրանք լինել:

Սատուրնն ողակից բացի 10 արբանյակներ ել ունի, վորոնք յերեսում են առանձին-առանձին: Սրանք Սատուրնի շուրջը պտտում են նրանից տարբեր հեռավորություններով:

#### ՄԵՐ ԴԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հեռագիտակով նայեցեք Սատուրնին, և յիթե կարողանաք ողակը տեսնել, նկարեցեք մոլորակի հետ միասին\*):

#### 28. ՈՒՐԱՆ ՅԵՎ ՆԵՊՏՈՒՆ

Մեզնից ամենահեռու մոլորակներն Ուրանն ու Նեպտունն են: Անշափ հեռու լինելու պատճառով մենք նրանց միայն հեռագիտակով կարող ենք տեսնել: Սրանց մակերեսույթի վրա զորեղ հեռագիտակով միայն շերտեր ենք տեսնում, վորոնք նման են Լուսնթագի շերտերին:

Այս յերկու մոլորակները մեծությամբ համարյա իրար հավասար են: Սրանք յերկրից շատ են մեծ, իսկ Սատուրնից փոքր են (տես նկ. 45): Սրեկի շուրջը շատ դանդաղ են պտտում: Ուրանն իր լրիվ պտտույթը կատարում է 84 տարում, իսկ Նեպտունը՝ 165 տարում: Մարդկանցից շատ քչերն Ուրանի մի տարվա կյանք ունեն (84 տ.), իսկ Նեպտունի տարի (165 տ.) վոչ վոք չի ապրում:

Ուրանն ունի 4 արբանյակ, իսկ Նեպտունն միայն մեկ արբանյակ:

Քեմն նրանց լայնությունը տասնյակ կամ հարյուրավոր մետրերից ավելի լինել չէր կարող, սակայն մեզ լայն են յերեսում այն պատճառով, վոր այդ ջրանցքների ջրերը վոռողում են աջ ու ձախընկած ափերի հողերը 30—60 կիլոմետր լայնությամբ և նման են մեր նեղոսի (Յեղիպառու) վոռողված կանաչ հովտին: Մարսի մյուս տարածություններն անապատ են, Մարսն աղքատ և ջրերով, նրա ծովերն իսկական ծովեր չեն, այլ ճահիճներ են: Հավանական ե, վոր յեթե Մարսի վրա ապրում են խելացի եցակներ, նրանք պիտի հոգան ըստ հնարավորության վոռողել իրենց անապատ յերկիրը: Հ.Հ.

\* ) Սատուրնի ողակի վրա առաջինն ուշագրություն դարձրեց Գալլից, սակայն նրա հեռագիտակն այնքան անկատարյալ իր, վոր չկարողացավ ողակը տեսնել իր ամբողջությամբ: Հ.Հ.

## ԳԻՍԱՍԴԵՐԻ ԱՇԽԱՐԴ

29. ԳԻՍԱՍԴԵՐԻ ԱՇԽԱՐԴ

Գիսաստղերը կամ «պոչավոր աստղերն» իրենց անձապասելի հայտնվելով նախապաշարված մարդկանց վրա միշտ մի տեսակ սարսափ են տարածել։ Գիսաստղը մի հրաշալի տեսարան է ներկայացնում (տես նկար 56)։ Մին ել գիշերն աստղերի մեջ, կարծես, մի նոր աստղ է հայտնվում։ Յերկրորդ ու յերրորդ գիշերը նա ավելի յե մեծանում ու փայլ ստանում։ Վերջն ել փոքրիկ «պոչ» է յերևում։ Գիսավորը, քանի զնում, ավելի ու ավելի յե աճում, պոչն ել յերկարացնում ու լայնացնում։ Վերջապես, թվում ե, թե նրա գլուխը լրացած լուսնի մեծություն ունի, յերբեմն ել ավելի մեծ, իսկ պոչը համարյա կես յերկինքն է բռնում։ Գլուխն ու պոչը լույս են տալիս. միաժամանակ ել պոչի միջով աստղեր են յերեւում։ Գիսաստղը մի քանի որից կամ շաբաթից հետո ցերեկներն ել ե յերեսում, թեպետ արեի լույսի ազդեցության տակ այնքան ել պայծառ չի փայլում։ Գիսաստղը շարունակում է աճել և ավելի ու ավելի մոտենալ արեին, մինչև վոր, վերջապես, կորչում ե նրա ճառագայթների մեջ։

Մի քանի ժամանակից հետո գիսաստղը նորից է գիշերները յերեսում, բայց այս անգամ արդեն արեի մյուս կողմից ու սկսում է հեռանալ նրանից։ Հետզհետե փոքրանում է։ Պոչն ել փոքրանալով, փոքրանալով, բոլորովին կորչում է։ Մի քանի գիշեր անցնելուց հետո նա մեզնից այնքան հեռու ու փոքր է դառնում, վոր հասարակ աչքով այլևս չի յերեսում, իսկ դրանից հետո հեռադիտակով ել չի յերեսում։ Մեծ ու պայծառ գիսաստղն այսպես է յերեսում։

Մեծ ու պայծառ գիսավորները մի քանի տասնյակ տարին մի անգամ են յերեսում։ Այդպիսի գիսավորներ ելին 1744 և 1811 թվականներին յերեացածները, վորոնք իրենց յերեսութով սարսափի մեջ դրին մարդկանց։ Բայց տիեզերքում մանր գիսավորներ շատ կան, վորոնց սովորական աչքով չի կարելի տեսնել։ Նրանք միայն հեռադիտակով են յերեսում։

Աստղաբաշխները վաղուց են նկատել, վոր գիսավորներից մի քանից վորոշ տարիներից հետո նորից են հայտնվում. այնպես վոր նրանց հայտնվելը կարելի յե նախագուշակել։ Այնպիսիներն ել կան, վորոնք հայտնվում են մեկեն և այլես չեն վերադառնում։ Գիսավորն ամբողջովին կարծր կամ հեղուկ յերկնային մարմին չե. նա բաղկացած է առանձին-առանձին մեծ ու փոքր կարծր մասնիկներից, փոշուց ու գաղից։

Գիսաստղի գլուխը գլխավորապես բաղկացած է առանձին ամուր մասնիկներից, վորոնք գաղե մութ թաղանդով են պատաժ. իսկ պոչը կազմված է գաղից և անչափ մանր փոշիներից։ Գիսաստղերն ահագին մեծություն ունեն, սակայն համապատասխան քաշ չունեն, վորովհետեւ կազմված են նոսր ու ցրված մասնիկներից։ Գիսավորը հսկայական ամպ է, բաղկացած գաղից, անչափ մանր փոշիներից և համեմատաբար մանր ու ամուր մասնիկներից։

Գիսավորի պոչն սկսում է արեկի կողմից և թեքվում է դեպի այն կողմը, վորածվում է, ճիշտ այնպես, ինչպես շոգեշարժի ծուխը, վոր յերկաթուղու արագ սլանալու ժամանակ շոգեշարժից յետ և մնում։


Գիսավորները գիշերն են լուսավորվում, վորովհետեւ նրանց լուսավորողն արեն ե. մի քիչ ել այն պատճառով, վոր գիսավորի բաղկացուցիչ մասերից գաղերն ու մասնիկներն իրենք ել թեթև լույս ունեն։

Գիսավորները թուչում են մեզ մոտ բոլորովին այլ աստղային աշխարհից։

Արեկի ու մոլորակների ձգողական ուժը նրանց խլում ու քաշում է դեպի արեկը։ Դրանցից մի քանիսներն արգանքեն ել մնում են մեր արեգակնային ընտանիքում և մյուս մոլորակների հետ միասին սկսում են պտտել արեկի շուրջը։ Լինում են այնպիսիներն ել, վորոնք այնքան արագ են ուանում, վոր արեկ չի կարողանում իր ձգողական ուժով պտտցնել նրանց իր շուրջը։ Նրանք մոտենում են արեին, թուչում են մոռովը և նորից սլանում դեպի հեռու անհայտը։ Գիսավորները մեզ միայն այն ժամանակ են յերեսում, յերբ արեկին մոտենում են, վորովհետեւ այդ ժամանակ յերկրին մոտ են և ավելի լավ լուսավորվում։

Մեզ մոտենալիս գիսաստղն ավելի յե մեծ յերեսում. իսկ պոչն աճում է, վորովհետեւ այդ ժամանակ նա ավելի յե արագացնում իր թուչքն, վորի հետեանքով ել մասնիկներն ավելի յեն յետ մընում գլխից։ Իսկ յերբ սկսում է հեռանալ, հետզհետե ավելի յե փոքրանում, մինչև բոլորովին աչքից կորչում է։

— Գիտաստղերն իրենց տեսքը շարունակ փոխում են: Նրանցից վոչ մինը յերկրորդ անգամ յերեալիս իր առաջին տեսքը պահած չի լինում: Այս հանգամանքը մի անգամ ել ապացուցում է, վոր գիտաստղերը հետզիետե քայլքայվում, մասերի ու կտորների յեն բաժանվում և վերջի վերջո բոլորովին չբանում են:



Նկար 51 Գիտաստղի և յերերի ճանապարհը

Այսպես, 1872 թվին աստղաբաշխները սպասում եին 13 տարի առաջ յերեացած գիտաստղի հայտնվելուն: Յեվ հանկարծ գիտաստղի փոխարեն բազմաթիվ վայր ընկնող աստղեր յերեացին: Այդ որվանից այդ գիտավորն այլևս չերեաց, բայց ամեն տարի մոտավորապես նոյեմբերի 27-ին յերեսում եին բազմաթիվ վայր ընկնող աստղեր, վորոնք բոլորն ել միենույն կետից եին թուչում:

Գիտաստղերի այսպիսի քայլքայվումը հաճախ ե տեղի ունենում: Յերբեմն այդ բանը հենց գիտողի աչքի առաջ ե կատարվել: Այստեղից գիտնականները յեզրակացրել են, վոր գիտաստղերը հետզհետե մասերի բաժանվելով բոլորովին քայլքայվում և վայր ընկնող աստղերի (ասուպների) հոսանք են կազմում:

Հիշենք, վոր այդ գիտավորը կազմված ե ցըված մեծ ու փոքր ամուր մասնիկներից, չափազանց մանր փոշիներից ու գաղերից: Դրանցից մի քանիսն արագ են թուչում, մյոււները յետ են մնում: Այդ յետ մնացող մասնիկները գիտաստղի յետեկից մի յերկար շարան են կազմում, ժամանակի ընթացքում ձգվում են այն ճանա-

պարհով, վորով գիտաստղը պտտում է արեի շուրջը: Կերծապես գիտաստղի ամբողջ միջուկն ել ե բաժանվում ու փոշիանում և գիտաստղի փոխարեն ստացվում ե մի ահազին ողակ—կազմված անթիվ, անհամար ամուր ու մանր մասնիկներից և չափազանց մանր փոշիներից, վորոնք թուչում են արեի շուրջը:

Այդ մնացորդները ժամանակ առ ժամանակ պատահում են յերերին: Յերկիրը նրանց քաշում ե դեպի ինքը նրանք, ողը ճեղքելով, վայր են ընկնում, ճանապարհին ողի հետ շփվելուց շիկանում, լուսավորվում և տեսանելի յեն դառնում: Մենք դրանց անվանում ենք վայր ընկնող աստղեր:

Ահա այսպես, գիտավոր աստղերը տիեզերքի անսահմանության մեջ անվերջ թափառում են՝ մի աստղային աշխարհից մյուսն անցնելով: Յերբեմն նրանք մեր արեի կողքին ել են յերեսում, վոր նույնպես տիեզերքի աստղերից մինն ե: Յերբեմն նրանք թուչում, անցնում են արեի մոտով, յերբեմն ել մնում են մոլորակների ընտանիքում և նրանց հետ միասին պտտում են արեի շուրջը: Բայց միշտ, իրենց շարժողության ամբողջ ժամանակամիջոցում նրանք կորցնում են իրենց նյութը՝ փոելով նրան տիեզերքի անսահմանության մեջ:

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հենց վոր գիտաստղ յերես, անպատճառ դիտեցեք ամեն որ նկարեցեք նրա դիրքն աստղերի մեջ. նշանակեցեք պոչի դիրքը, ուղղությունն ու յերկարությունն աստղերի մեջ, այլ և դիտելու ճիշտ ժամանակը (ժամը և րոպեն): Զեր բոլոր դիտողություններից գիտաստղի տեսանելի շարժման պատկերը տվեք:

#### 30. Վ.Ա.Յ. ԼՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

Վայր ընկնող աստղեր բոլորդ եք տեսել: Համարյա ամեն յերեկո կարելի յեհանալ այդ տեսարանով: Հանկարծ աստղալից յերկը քում փայլատակում ե ինչ վոր պայծառ ու մեծ կայծ, վոր սլանում, թուչում ե, կապույտ յերկնքում, յետեկից հրեղեն զիծ թողնելով: Այդ բոլորը վայրկենական արագությամբ ե կատարվում ու իսկույն ել աչքից կորչում: Աստղերը դարձյալ իրենց տեղումն են, իսկ վայր ընկնողը՝ գնաց, անհայտացակ:

Բայց փաստն այս ե, վոր վայր ընկնողն աստղ չեր. նայեցեք, աստղերը բոլորն ել իրենց տեղումն են: «Վայր ընկնող աստղ» անվանելը թյուրիմացություն ե:

Դա փոշու հյուկը յեր, խավար ու անտեսանելի, վոր թուազ յերկնային տարածության միջով: Ճանապարհին հանդիպեց մեր

յերկրին, շփումից այրվեց ոդի մեջ և յերևաց: Նա այնքան ե փոքրը, վոր թռչելիս այրվում, սպառվում է: Այդպիսի փոշեհատիկներ ցերեկն ել են դիպչում յերկրին: Հապա ինչպես ե, կհարցնեք դուք, վոր ցերեկը վայր ընկնող աստղեր չենք տեսնում: Վորովհետև նըրանց շփկելուց սուածացած լույսն արևի լույսից շատ ավելի թույլ ե, և մենք վայր ընկնողներին ցերեկը չենք տեսնում:

Խնչպես գիտենք, այս մոռթ փոշիներն ու ամոռը մասնիկները գիսաստղերի մասցը դներն են: Տիեզերքում կամ այն տարածության մեջ, վորով պտտում ե յերկիրն արևի շուրջը, նրանք յերբեմն ահագին խմբերով են թռչում:

ՅԵՐԿՐԱԳՈՒՆԴՐ պատում ե արեի շուրջը և իր այդ պատույտի ժամանակ յերբեմն հանդիպում ե փոշու այդպիսի խմբերի։ Այդ ժամանակ աստղերի անձրեւ ե յերեսում։

Այդպիսի անձը կայր ընկնող աստղերի ահազին քանակությամբ յերևացել է 1872 թվին:

Ամեն տարի ոգոստոսի 10-ին աստղային անձրև ե յերկում, վոր, կարծես, թափվում ե Պերսե, համաստեղությունից: Դա կոչվում ե ոգոստոսյան հեղեղ կամ Պերսեյական: Միենալուն բանը կրկնվում ե նոյեմբերի 14-ին, վոր կոչվում ե նոյեմբերյան կամ Առյուծի հեղեղ, վոր, կարծես, Առյուծ համաստեղությունից ե թափվում: Իսկ ամեն տարի նոյեմբերի 27-ին յերկում են այն գիսավորի մացցորդները, վոր 1872 թվից դադարել ե գիսավոր լինելուց. այդ, ինչպես արգեն ասել ենք, վալր թափվող աստղերի հեղեղ ե: Այս հեղեղը կոչվում ե Անդրսոնեղական, զորովճետե այնպես ե թվում, թե թափվում ե Անդրոմեդա համաստեղությունից, ալսինքն այդ համաստեղության ուղղությունից:

## ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դիտեցեք Պերսեյականները ոգոստոսի 10-ին, բայց նախորդուք դիտեցեք Պերսեյի համաստեղությունը։ Տեսրում նկարեցեք այդ համաստեղության տեսքը։ Վրեցեք նաև, թե կես ժամվա ընթացքում այդ համաստեղությունից քանի՞ աստղ ընկավ։ Համաստեղության նկարի վրա խազեցեք ընկնող աստղերի յերկարությունը և ուղղությունը։

2. Յերկնքում գտեք Առյօւծ համաստեղությունը. զիաեցեք նրան նոյեմբերի 14-ին և տեսքը նկարեցեք ձեր տետրակներում։ Հաշվեցեք՝ կես ժամում քանի՞ աստղ ընկապ և գծերով ու կետերով նշանակեցեք համաստեղության նկարի վրա ընկնող աստղերի ուղղությունն ու յերկարությունը։

Յ. Յերկնքում գտեք Անդրոմեդա համաստեղությունը, նկարեցք ձեր տետրակներում։ Նոյեմբերի 27-ին դիտեցեք Անդրոմեդիտները։ հաշվեցեք նրանց թիվը՝ կես ժամվա ընթացքում և համաստեղության նկարի վրա զանազան ուղղության և յերկարության գծերով նշանակեցեք այդ աստղերի թռչելը։

### 31. ՅԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՐԵՐ

Ինչպես ընկնող աստղերը, այնպես ել յերկնային քարերը գիսավորների մնացորդներ են։ Նրանք տարբեր են միայն իրենց մեծությամբ։ Ընկնող աստղերը փոքրիկ մուլթ ավազիկներ են, փորոնք վառվում են ողի հետ ընդհարվելուց և ընկնելիս բոլորովին վառվում են՝ առանց յերկրին հասնելու։ Իսկ յերկնային քարերը մեծ կտորներ են, փորոնք մթնոլորտը ձեղքելիս ամբողջապես չեն այրվում, այլ հասնում են մեր յերկրին միայն դրսի շերտը հալված վիճակում։

Պատմության մեջ յերկըի վրա շատ յերկնային քարեր են լն-կել: Ա. Ա. Մ. Գիտությունների Ճեմարանում այդպիսի սի քար ե պահպանման նաև կոչվում է Յենիսեյան Կողա և Կոռում ե 42 փութ:

Դիտության մեջ այդ քարերը կոչվում են յերկնաքարեր կամ մետեորիտներ (տես նկ. 52):

Մեր 52 նկարի վրա  
ցուցադրած մետեորիտը վայր  
ե ընկել 1751 թվին Ավստ-  
րիայում. նա կշռում  $2^{1/2}$  ֆt.  
Մետեորիտը վայր ընկնելիս  
շփվում ե նրան դիմադրող  
ողի հետ և սաստիկ տաքա-  
նում ե. նրա արտաքին շերտն  
ե միայն հալվում. այդ պատ-  
ճառով ել փայլուն կերպով  
նկար 52. 1751 թվին Ավստրիայում վայր ընկած մե-  
լուսավորվում ե. Մետեորիտի  
թոհջքի ժամանակ սաստիկ աղմուկ, վորոտ կամ պայթյուն ե լըս-  
փում, վորովհետև ողի հետ շփվելուց սաստիկ տաքանում և, պայ-  
թելով, կտորների յե բաժանվում: Ճիշտ ե մետեորիտը շատ ե տա-  
քանում, բայց նրան ամբողջովին հալելու համար այդ ջերմու-  
թյունը շատ ե քիչ:

Մետեղիով վայր եւ ընկնում հսկայական արագությամբ — մեկ վայրկյանում մոտ 40 կիլոմետր. այդ պատճառով նրա հարվածը



շատ եւ աւժեղ, այնքան, վոր յերբեմն մի քանի Շետը խորությամբ  
հողի մեջ եւ մտնում: Այդ ժամանակ նա կարող եւ մարդիկ ու կեն-  
դանիներ սպանել. և վորովհետև ընկնելուն պես բռնկվում ե, կա-  
րող եւ և հրդեհ առաջացնել: Մահացության և հրդեհի այդպիսի  
դեպքեր յեղել են: Հնումը մարդիկ այդ քարերի ծագումը չգիտե-  
յին. նրանց համարում եյին աստծուց ուղարկվածներ և հաճախ  
յերկրպագում եյին: Հիմա բոլորը գիտեն, վոր նրանք կազմալուծ-  
վող գիսավորների մացորդներն են, վորնք թուզում են տիեզերքի  
անհունության մեջ. բայց հենց վոր պատահում են յերկրին՝ նրա  
արևի շուրջը կատարված պտույտի ժամանակ, վայր են ընկնում,  
վորովհետև յերկրին իր ձգողական ուժով նրանց քաշում ե: Յերկ-  
նային քարերը սովորաբար անկյունավոր են լինում. կարծես, ինչ  
վոր մեծ քարից պոկված լինեն: Ամբողջ քարն ապակենաման կեղե-  
վով ե ծածկված լինում. դրսից յերեսում են փոսեր՝ ու ցցվածքներ: Ահա  
այս բոլորը ցույց են տալիս, վոր քարն իսկապես սաստիկ  
տաքացած, արտաքուստ ել հալված վիճակում ե յեղել:

Յերկնային քարերը նույն բաղադրություններն ունեն, ինչ վոր  
մեր յերկրի քարերը: Մի քանիսներում յերկաթ շատ կա, դրա հա-  
մար ել կոչվում են յերկաթա, ին մետեռներ: Կան այնպի-  
սիներն ել, վորնք այլ հանքային բաղադրություններ ավելի շատ ու-  
նեն, ուստի կոչվում են քարոտ մետեռիտներ:

Յերկնային քարերը համարյա միշտ իրենց մեջ յերկաթ ունեն,  
բայց վոչ այնպիսի խառնվածքով, ինչպիսին յերկային քարերն  
ունեն. դրա համար ել նրանց իրարից տարբերելը շատ հեշտ ե:  
Յերկնային քարերում յերկաթը խառնված ե լինում նիկելի և ու-  
րիշ մետաղների հետ՝ բոլորովին այլ քանակությամբ, քան այդ լի-  
նում ե յերկրային քարերում: Սա ել ե մի նոր ապացույց, վոր  
ընության մեջ կամ ավելի ճիշտ՝ տիեզերքում գլխավոր նյութը յեր-  
կաթն ե: Յերկնային քարերը գիտության համար հազվագյուտ ար-  
ժեք ունեն և ժողովում ու պահվում են զանազան պետություն-  
ների թանգարաններում: Մեր Միության ժողովրդական կոմիսար-  
ների Խորհրդի գեկրետով յերկնային քարերը հայտարարված են  
իբրև ազգային սեփականություն: Դրանց գտնողն իսկույն պետք ե  
հայտնի մոտակա գիտական հիմնարկությանը:

#### ՄԵՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Յերբ այցելեք ձեր քաղաքի թանգարանը, հարցըք — մե-  
տեռիտ ունեն: Յեթե ունեն, խնդրեցեք, վոր ձեզ ցույց տան:  
Լավ նայեցեք և իմացեք՝ վհրանեղ և յերբ ե ընկել, ինչ բաղադրու-  
թյուն ունի:

## ՏԻԵԶԵՐՔ

### 32. ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՐՔ

Ի՞նչ եք կարծում. հեռաղիտակով յերեացող միլիոնավոր աստ-  
ղերի մեջ վորնե կարգ ու կանոն գոյություն ունի, թե վոչ: Ա-  
ռաջին անգամից կարծես ուղում ես պատասխանել — ի հարկե՝ վոչ:  
իրոք. ձմերային մի պարզ յերեկո նայեցեք յերկնքին և ձեզ կթվա,  
թե աստղերը կարծես առանց վորնե կարգի ու հաշվի փոփած են  
յերկնքում՝ ամեն ուղղությամբ: Բայց միայն կթվա:

Յերկինքն ուշադիր կերպով ուսումնասիրող գիտունները նկա-  
տել են, վոր ասղերն, վորքան ավելի յեն հեռանում Ծիր կաթինից,  
այնքան աչքով տեսնվող աստղերի թիվը ավելի յե պակասում:  
Գիտնականները յեկան այն յեզրակացության, վոր բոլոր տեսանե-  
լի աստղերը մի հարթ ու կլոր շրջանի մեջ են գտնվում վորի յեզրե-  
րը մեր տեսած Ծիր կաթինն են կազմում, իսկ արեն այդ Ծիր կա-  
թինի աստղերից սինն ե:

Աստղերի, այդ «տիեզերային արեների» հեռավորությունն ա-  
հագին ե. դրանց լույսը, վոր մի վայրկյանում 300,000 կիլոմետր  
ե անցնում, այդ հեռավորությունները տասնյակ ու հարյուրավոր  
տարիներում հազիվ ե կտրում ու մեզ հասնում: Աստղերի մեծու-  
թյունը շատ տարբեր ե: Մեր արեկից մեծ աստղեր կան: Իսկ յեթե  
արել մեծ ե յերեռում, այդ — արդեն գիտեք — նրանից ե, վոր նա  
մեզ շատ ավելի մոտ ե, քան ուրիշ աստղեր: Յեթե արել դնենք  
ամենամոտիկ աստղի հեռավորության վրա, նա մեզ առաջին մե-  
ծության աստղի չափ կերեա, իսկ կապելլայի հեռավորության վրա  
նա 6 րդ մեծության աստղի չափ կերեա:

Վորպեսզի պարզ լինի աստղերի համեմատական մեծությունն  
ու նրանց իրարից հեռու լինելը, յերեակայենք զանազան մեծու-  
թյան գետնախնձորներ՝ իրարից 15 կիլոմետր հեռավորության վը-  
րա \*): Այսպես ել աստղերն են. նրանք անհունության մեջ այնքան  
են հեռու իրարից, վոր, չնայելով նրանց հսկայական մեծությանը,

\* ) Այն գեպքում, յեթե ընդունենք արեգակի հեռավորությունը յերկ-  
րագնդից 1 մետր տարածության վրա: Հ. Հ.

կարելի յե համեմատել իրարից մի քանի կիլոմետր հեռավորության  
վրա գտնվող ավազահատերի հետ:


Աստղերը մեզ անշարժ են թվում. բայց իրականում նրանք  
շարժվում են զանազան ուղղությամբ, այն ել մի վայրկյանում մի  
քանի տասնյակ կիլոմետրի արագությամբ:

Վորովհետեւ արեն ել մյուսների նման մի աստղ ե, դրա համար  
նա յել ե շարժվում տարածության մեջ՝ տանելով իր յետելց յեր-  
կիրը, բոլոր գիսավորներն ու մոլորակները:

Արել շարժվում ե գեղի Քնար համաստեղությունը, այսինքն  
վեգա աստղի ուղղությամբ, անցնելով  $18^1/2$  կիլոմետր մի վայր-  
կյանում: Այսպիսով մենք ամեն որ միլիոնից ավելի կիլոմետր տա-  
րածությամբ մոտենում ենք Վեգային և հեռանում Որիոն համաս-  
տեղությունից: Զնայելով սրան, այդ աստղերի փայլը մնում ե ան-  
փոփոխ. և այսպես կմնա հազարավոր տարիների ընթացքում, վո-  
րովհետեւ տիեզերքում կատարվող մեր այս տեղափոխությունը,  
աստղերի հեռավորության հետ համեմատած, շատ ե չնչին: Միայն  
Ծիր կաթինի մեջ ամբողջ տիեզերքը չի ամփոփվում. ուրիշ «ծիր  
կաթիններ» ել կան, այսինքն նման աստղային համախմբումներ:  
Որինակ. այդպրսի համախմբում կարելի յե ցույց տալ Յուլ հա-  
մաստեղության մեջ. աստղերի այդ համախմբումը կոչվում ե Յոթ-  
համաստեղունք (Պլեյադա. տես աստղային քարտեզ և նկար 53, 54)

Յոթնաստեղունքի  
մեջ սովորական աշ-  
քը նկատում ե մի-  
այն վեց աստղ, իսկ  
ավելի սուրբ - 7-12.  
հեռադիտակով՝ մոտ  
1000, իսկ լուսա-  
նկարում՝ հաջողվել  
ե հաշվել սինչեն  
2400 աստղ: Բայց  
աստղային համա-  
խմբումներ ել կան, ուր նույնիսկ ամենակատարելագործված հեռա-  
դիտակով առանձին աստղեր չեն յերեսում. որինակ՝ Անդրոմեդա  
մշուշապատը:

Անդրոմեդա մշուշապատը մի հսկայական Ծիր կաթին ե: Դա  
աստղերի մի նոր աշխարհ ե՝ բաղկացած միլիոնավոր աստղ-արե-  
ներից - իրենց մոլորակներով, արբանյակներով և գիսավորներով:



Բացի Անդրոմեդա մշուշապատից, հեռադիտակով տիեզերքում  
կարելի յե տեսնել բազմաթիվ ուրիշ մշուշապատներ: Դրանց մեջ  
այնպիսիները կան, վորոնք առանձին աստղերից չեն կազմված,



Նկար 54. Յոթնաստեղունք՝ Պլեյադան լուսանկարած  
այլ լուսավոր գագի կուտակումն են ներկայացնում, ու դեռ չեն խը-  
տացել, առանձին աստղեր գարձել. որինակ՝ Բարակներ համաստե-  
ղության մեջ վոլորապտույտ մշուշապատը:

Հիմք ունենք յեն-  
թաղրելու, վոր ուրիշ  
շատ մշուշապատներ կան  
մեզնից այնքան հեռու,  
վոր նրանց լույսը մեզ  
չի հասնում: Ուրեմն դեռ  
չենք կարող ասել, թե  
ճանաչում ենք տիեզեր-  
քըն իր ամբողջ փառա-  
հեղությամբ ու գեղեց-  
կությամբ: Մարդկու-  
թյունը դեռ մեծ աշխա-  
տանք ունի կատարելու՝  
աշխարհի բոլոր գաղտ-  
նիքներն ըմբոնելու հա-  
մար:



Նկ. 55. Վոլորապտույտ մշուշապատը Բարակներում (վոր-  
քիկ համաստեղություն Եկպնարածի և Մեծ Արջի միջև):

1. Յերկնքում գտեք Յոթնաստեղունքը և տեսեք—քանի աստղ  
եք տեսնում հասարակ աչքով, քանի՞սը՝ հասարակ դիտակով, քա-  
նի՞սը՝ զորեղով և քանի՞սը՝ հեռադիտակով։ Այդ դիտողություները  
նկարեցեք տետրում և համեմատեցեք հասարակ աչքով տեսածի  
հետ։

2. Հեռադիտակով նայեցեք Անդրոմեդա աստղակույտը և նկա-  
րեցեք ձեր տետրերում։



նկ. 56 Դոնատի կոմիտան 1858 թ. (տես էջ 84)

## ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ի՞նչպես դոյացավ արեգակնային համակարգությունը։ Յերբ  
դոյացավ մեր յերկրագունդը և ի՞նչպիսի կյանք ե ունեցել իր գո-  
յանալու ժամանակից մինչև մեր որերը։

Արդյոք կարող ենք այդ հարցերին պատասխան տալ։ Այն, կա-  
րող ենք և ահա թե ինչպես։ Մի քանի փաստեր բերենք։

1. Յեթե մենք մեր վոտքի տակ մի խոր հոր քանդենք, կը  
տեսնենք, վոր քանի խորանանք գետնի ներսը, այնքան նրա տա-  
քությունը կավելանա, շատ խոր հորերում (շախտաներում) բան-  
վորները չեն կարողանում աշխատել, վորովհետեւ այնտեղ անտանե-  
լի տաք ե։ Այդպիսով մենք տեսնում ենք, վոր յերկիրը միայն դըր-  
սիցն ե սառել և ծածկվել քարե կեղեռվ, այդ կեղենի տակ, յերկի  
ներսում, այնքան տաք ե, վոր բոլոր նյութերը հալած դրության  
մեջ են։ Յերկիրի կեղեռ շատ ել հաստ չե. հազիվ 60 վերստ հաս-  
տություն ունենա. կեղենի տակ հեղուկ լավա յե գտնվում, իսկ յեր-  
կիրի մեջտեղում տաքությունը այն աստիճան բարձր ե, վոր այն-  
տեղ բոլոր նյութերը հեղուկ դրության մեջ ել չեն, այլ գազային։  
Հասկանալի յե, վոր սկզբում, յերբ յերկիրը դեռ չեր սառել, մի գա-  
զային գունդ եր, ապա, սառչելով, գարձավ հեղուկ, վորը յերեսից  
ավելի ևս սառչելով՝ ծածկվեց քարե կեղեռվ։

2. Յերկիրը և մյուս մոլորակները պատվում են արեկի շուրջը  
միենույն ուղղությամբ, բոլորն ել պատվում են իրենց առանցքի  
շուրջը և այդ 2-շարժումները, որական և տարեկան, անում են ա-  
րեմուտքից գեպի արեելք (հակառակ արեգակի և աստղերի շարժման)։

3. Այդ բոլոր մոլորակները գտնվում են արեգակի գոտու (նը-  
րա հասարակածի) հարթության վրա, նրանից վոչ բարձր և վոչ  
ցածր։

4. Բոլոր մոլորակներն՝ իրենց արբանյակներով միասին վեր-  
ցըրած իրենց կշիռով կազմում են արեգակի  $\frac{1}{700}$ -րդ մասը։

Մեր յերկրագունդը մենակ իր ծանրությամբ 300.000 անգամ  
թեթև և արեգակից։

5. Գիտնականները գտել են, վոր արել կազմված ե միենույն

նյութերից, ինչ նյութերից վոր կազմված ե սեր յերկիրը և մյուս մոլորակները, այսինքն յերկաթից, ջրածնից, կրածնից, արձակից, ածխածնից և այլն:

Այստեղից պարզ ե, վոր այդ բոլոր մարմինները մի ծագում ունեն և վոր արեկի շուրջը պտտվող մոլորակները արեգակից են սկիզբն առել:

Արեգակն այժմ հրահեղուկ գրության մեջ ե, շրջապատված գաղերով: Բայց նա առաջ ավելի տաք եր: Հետզհետե նա սառչում ե: Գալու յե մի ժամանակ, յերբ այն աստիճան սառչելու յե, վոր յերկիրի պես ծածկվելու յե պինդ քարե կեղեռվ և խավարելու յե: Կար ժամանակ, յերբ նա ավելի ևս տաք եր, քան այժմ: Ահա այն ժամանակ բոլոր մոլորակներն ել գաղեր եյին և համաձուլված եյին արեգակին, վորը բռնում եր շատ ավելի մեծ տեղ, քան այժմ: Դա գաղային նյութերից գոյացած հսկայական ամպի նման մշուշային մի զանգված եր: Այդ գաղային հսկայական գունդը պտտվում եր յուր առանցքի շուրջը: Պտտվելու պատճառով վերեկից ներքե (յուր բեկեռներում) նա սեղմվում եր, իսկ իր գոտում ուռչում: Այդ ուռած մասը, պոկվեց արեկից և Սատուրնի ողակի պես, սկսեց մայր զանգվածի պես պտտվել նրա շուրջը միենույն ուղղությամբ: Գաղերը, վորոնք այդ ողակի մեջ կային, խըմբվեցին միասին և կազմեցին մի գաղային փոքրիկ գունդ:

Այդ առաջին գունդը մեղ ծանոթ «Նեպտոն» ե: Ծնունդ տալով նեպտոնին, մշուշային զանգվածը պտույտներ անելով իր առանցքի շուրջը, սկսեց բեկեռներում նորից սեղմվել իսկ գոտում՝ ուռչել:

Այդ գոտին նորից պոկվում և դառնում ե մի նոր ողակ. ապա ողակը՝ գունդ, այդ «Ուրան» մոլորակն ե: Այդպես հերթով մայր զանգվածից պոկվում են՝ Սատուրնը, Լուսնթագը, Հրատը, Յերկիրը, Արուսյակը և Փայլածուն, վորը մայր զանգվածի վերջին ծնունդն ե: Յուրաքանչյուր մոլորակ իր հերթին իր մոր պես շարունակում ե պտտվել իր առանցքի շուրջը և միենույն ժամանակ՝ մշուշային մայր զանգվածի շուրջը, վորը այլ քան չե, քան յեթե մեր արեգակը: Ակզբում մոլորակն ել գաղային նյութերից եր. նա ել եր սեղմվում յուր բեկեռներում և ուռչում իր գոտում: Այդ գոտին նրանից ել ե պոկվում և կազմում ավելի մի փոքրիկ գունդ, վորը սկսում ե պտտվել իր մոր շուրջը:

Այդ յերկրորդական փոքր գունդը արբանյակն ե: Լուսինն ուրեմն պոկվել ե մեր յերկրից, յերբ վերջինս դեռ գաղային գունդ եր: Լուսինը 50 անգամ յերկրից փոքր ե և յերկրին շատ մոտ են նրա հեռավորությունը հավասար է 360.000 վերսի:

Յերկիրը նախ գաղային մի գունդ ե յեղել. սառչելով, նոր հեղուկ ե գարձել հալած յերկաթի նման և ապա սկսել ե դրսից ծածկել քարի կամ հողի կեղեռվ: Այդ կեղեռվ առաջ շատ բարակ ե յեղել, բայց, հետզհետե սառչելով, հաստացել ե և այժմ նրա հաստությունը 60 վերսա ե. Նույնպես սառել և կեղեռվ են ծածկվել՝ Արուսյակը, Հրատը և Մերկուրը. իսկ լուսնթագը և Սատուրնը հավանորեն դեռ չեն սառել իրենց մեծության պատճառով:

Յերբ գոյացավ յերկիրը. թվերով այդ ժամանակը վորոշել անկարելի յե. բայց անշուշտ նրա գոյացած որից մինչև հիմա հարուրացոր միլիոն տարիներ են անցել:

Հիմք կա կարծելու, վոր նրա գոյանալուց անցել ե վոչ պակաս 1.500 միլիոն տարի:



Նկ. 57

Վերև բերված Արեգակնային համակարգության ծագման տեսությունը տվել են զերմանացի հոչակավոր փիլիսոփա Եմմանուել Կանտը և Փրանսիացի աստղաբաշխ Լաւլասը: Յերկուսը յեկել են այս յեղակացության՝ իրարից բոլորովին անկախ (տես նկար 57):

## Ո Ր Ա Յ Ո Ւ Յ Յ

Որացույցը դասավորում ե ժամանակն ըստ հնարավորին հավասար մասերի՝ տարիների, ամիսների, շաբաթների, օրերի։ Մարդիկ հարկադրված եյին ժամանակն այդպես բաժանել, վորպեսզի իրենց տնտեսական կենցաղի մեջ կանոնավորություն մտցնեն, իրենց աշխատանքի և հանգստի ժամանակները վորոշեն։ Նրանք տեսնում եյին, վոր չ կարելի, յերբ ցանկանում ես, հողը վարել, ցանել, հընձել, գաղան ու ձուկ վորսալ։ Համացան, վոր բնությունը այդ բոլորի համար ժամանակներ ե մատնանշում։ Յեվ սկսեցին նկատել, վոր այն բոլորը, ինչ կատարվում ե յերկրի վրա, սերտ կերպով կապված ե յերկնային յերեռութների հետ՝ արևի, լուսնի և աստղերի նրանց համար անհասկանալի կյանքի հետ։ Դիտե ով յերկնաքր, սկզբնական շրջաններում ժողովուրդները սովորեցին կոպիտ կերպով ժամանակը հաշվել և այդպիսով ստեղծեցին բերանացի որացւ ց, վորը պահպում եր սերունդների հիշողության մեջ։ Ժամանակի ընթացքում ժողովուրդները, զարգանալով, ստեղծեցին յերկներին համաձայնեցրված որացույցները. այդպես, վեռ խալդերը մեղանից 7.000 տարի առաջ արդեն գիտականորեն դիտում եյին յերկները և բոլոր գլխավոր քաղաքներում իրենց տաճարներից, վորոնք աստղադիտարաններ եյին, կատարում եյին յերկնային լուսատուների դիտողությունները։ Այստեղից նրանք գտան ժամանակի բոլոր հիմնական միավորները՝ որեր, շաբաթներ, ամիս ու տարի։ Որը—ցերեկ և գիշերը, բնությունը մեզ պատրաստ ե տվել. միայն տարվա տարբեր յեղանակները պետք ե բացատրվեր որերի անհավասարությունը։ Այդ բացատրեց հույն վաճառական գիտնական թալեսը։ Ավելի դժվար ե բացատրել լուսնի փուլերը—ամիսները հասկանալու համար։ Լուսնով ամիսը յերկար չեյին կարողանում ճիշտ վորոշել։ Յեվ մոգերը հետեւում եյին, թե նորածին լուսինը յերբ կերևա վերջալույսի ճառագայթների մեջ, վորպեսզի բարձրածայն հայտնեն ժողովրդին նոր ամսի սկզբը։ Խալդերը ամիսները վորոշում եյին վոչ լուսնի ծնունդով, այլ արեգակի յերևութական տարեկան շարժումով։ Արեգակի տեսանելի շարժման ճանա-

պարհը նրանք բաժանեցին 12 մասերի. այն 12 համաստեղությունների հաշվով, վորոնց միջով, ամսե ամիս հերթով անցնում ե արեգակը. ևայն ժամանակը, վոր անցնում եր արեգակի մի համաստեղությունից մյուսը տեղափոխվելը համարում եյին մի ամիս։ 12 ամիսը կազմում եր մի տարի, վորի ժամանակամիջոցում արեգակը անցնում եր իր շրջանը, վերադառնալով դեպի իր յելակետը։ Այժմս ել կան ժողովուրդները, վորոնք համաձայնեցնում են իրենց տարիները արեգակի յերեռութական տարեկան շարժման հետ։ Մյուս ժողովուրդները տարին համաձայնեցնում են լուսնի փուլերի հետ։ Կան ժողովուրդներ, վորոնք այդ 2 յերեռութները միասին են հաշվի առնում։ Որինակ. յահմեդականների որացույցը լուսնի փուլերի վրա յե հիմնված։ Հրաներինը հաշվի յե առնում և լուսնի փուլերը, և արեգակի շարժումը։ Ժամանակի բաշխումը շաբաթների վրա իր սկիզբը առնում ե խալդերի ժամանակներից։ Խալդերը 7 թիվը նույնպես գտան յերկնը վրա։ Նրանց ծանօթ լուսատուները թվով 7 եյին. դրանք են՝ Արեգակը, Լուսինը, Մերկուրը, Արուսյակը, Հրատը, Լուսնթագը և Սատուրնը։ Այն որացույցը, վորով մենք դասավորում ենք ժամանակը, կոչվում ե Գրիգորյան կամ նոր-տոմարի որացույց և ընդունված ե մեզ մոտ հեղափոխության սկզբից։ Հեղափոխությունից առաջ մեզ մոտ և Ծովասատանում գործ եր ածվում Հուկյան տոմարը, վորը արևմտյան Յեվոպայում գեռ 1582 թվականին փոխարինեց Գրիգորյան տոմարը։ Հուկյան տոմարը կազմել եր մեր դարաշրջանից 46 տարի առաջ, հույն աստղաբաշխ Սողիկենը, Հուկյոս կեսարի հրամանով։ Այդ որացույցը տարվա տեղությունը ընդունում ե 365 որ, 6 ժամ։ Բայց, վորովհետև այդ 6 ժամը խանգարում ե տարվա ամրողությունը, Հուկյան որացույցը ընդունում ե շարունակ 3 տարի՝ 365 որ (հասարակ տարիներ) և 4-րդ տարին՝ 366 որ (նահանջ տարի), վորոնց թվականները բաժանվում են 4-ի վրա։ Որինակ՝ 1916, 1920 և ային Սակայն, չնայելով հուկյան որացույցի այդ պարզ կառուցվածքին, նա յուր մեջ ուներ սըխալ սկզբունք։ Հուկյան որացույցի տարին ավել եր իսկական արեգակի տարուց 11 րոպե և 14 վայրկյանով։ Հեշտ ե հաշվել վոր 400 տարվա ընթացքում այդ չնշն տարբերությունը կանի 3 որ, 2 ժամ 53 րոպե։ Այդպիսով 1592 թվականին, յերբ Հոռմի պատը Գրիգորիոս 13-րդն եր, այդ սխալը, այսինքն Հուկյան տոմարի ցուցմունքը տարբերվում եր իսկական ժամանակից 10 որով, 1.200 տարվա կուտակված սխալն եր այդ։ Այդ պատճառով Գրիգորիոս 13-րդը հրամայեց 1582 թվականի հոկտեմբերի 4-ի ժուլի որը համարել վոչ հոկտեմբերի 5-ը, այլ հոկտեմբերի 15-ը։ Վորպեսզի հե-

տաղայում կարելի լինի խռւսափել նման սիալներից, վորոշված է,  
վոր յուրաքանչյուր 400 տարվա ընթացքում այն Յ որերը վորով  
Հուլյան տարիները առաջ են ընկնում իսկական արեգակի տարի-  
ներից, դուրս ձգել: Հասկանալի յե, վոր դրանց համար հարկավոր  
եր յուրաքանչյուր 400 տարվա ընթացքում, նրա բոլոր նահանջ  
տարիներից Յ նահանջ տարիները դուրս հանել: Այդ պատճառով  
հրահանգված եր—այդ ժամանակամիջոցի 400 ամյակների թվա-  
կաններից միայն այն 100 ամյակի տարին համարել նահանջ, վորի  
հարյուրակների թիվը բաժանվում է 4-ի վրա: Որինակ՝ 1600 և  
2000 թվականները մնում են նահանջ, վորովհետև 16 և 20-ը բա-  
ժանվում են 4-ի վրա. իսկ 1700, 1800 և 1900 թվականները մը-  
նում են հասարակ տարիներ, վորովհետև 17, 18, 19-ը 4-ի վրա չեն  
բաժանվում:

**Ա. Յ ա ս ա ն Բ.**—1. Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարվեց  
1917 թվականի հոկտեմբերի 26-ին հին տոմարով, վոր որը կընկ-  
նի այդ անցքը նոր տոմարով:

2. Վաղիմիր Իլյիչ Լենինը ծնվել է 1870 թվին ապրիլի 21-ին  
հին տոմարով, վոր որը կընկնի նրա ծնունդը նոր տոմարով:

3. Հաշվեցեք, վորքան տարբերությունն կստացվի իսկական ժա-  
մանակի և հուլյան տոմարի մեջ 800 տարում, 1200 տարում, 3000  
տարում:

4. 1918 թվականին Խորհրդային իշխանությունը ընդունեց նոր  
տոմարը, վորքան որ ավելացրեց նա հին տոմարի վրա:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Է. Ֆլամմարիոն. «Общедоступная астрономия».

Կլեই. «Астрономические вечера».

Հ. Հովհաննիսյան «Մարդ և Տիեզերք»:

Հ. Հովհաննիսյան «Համառոտ Տիեզերագրություն»:

«Русский Астрономический календарь» издание Нижегородского Кружка Любителей Физики и Астрономии. Վերջին այս ուսացույցը (Русский Астрономический календарь) յուրաքանչյուր դպրոցի համար անհրաժեշտ է: Որպես լույս և տեսնում յուրաքանչյուր տարի և տարվա յերկնային լեռնույթների մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում: Այս որպես կարելի յե ձեռք բերել թե զրահանութներում, և թե դիմել ու ստանալ նիմսի նովզորողից՝ Нижний Новгород, Тихоновская ул. Педагогический Институт հասցեյով:

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

24.	Մոլորակներ	75
25.	Մերկուր	77
26.	Արուսյակ կամ Վեներա	79
27.	Մարս	80
28.	Յուպիտեր կամ Լուսնթագ	81
29.	Սատուրն	82
30.	Ուրան և Նեպտոն	83

ԳԻՍԱՍՏՐԵՐԻ ԱՇԽԱՐՀ

31.	Գիսաստղեր	84
32.	Վայր ընկնող աստղեր	87
33.	Յերկնային քարեր	89

ՏԻԵԶԵՐՔ

34.	Տիեզերքի կառուցվածքը	91
35.	Արեգակնային համակարգության ծագումը	95
36.	Թրացույց	97

ՑԱՆԿ

1.	Առաջաբան	3
2.	Մարդկության աստիճանական ծանոթությունը՝ յերկրագնդի հետ	5

ՅԵՐԿԻՐ

3.	Տեսանելի հորիզոնը	10
4.	Յերկիրը գունդ է	11
5.	Ծանրություն	13
6.	Յերկրի քաշը	14

ՅԵՐԿԻՐՆՔ

7.	Յերկնակամար	16
8.	Արևածագն ու արևմուտքը	18
9.	Աշխարհի կողմերը	21
10.	Յերկնային լուսատուներ	24
11.	Աստղային յերկնքի տեսքը	27
12.	Յերկնակամարի միորյա յերկնութական շարժումը	30
13.	Լուսատուների ծագելն ու մայր մանելը	34
14.	Աստղալից յերկինքը տարվա զանազան յեղանակներին	36
15.	Ծիր կաթին	41

ԱՐԵՎ

16.	Արև	44
17.	Արեկի ջերմությունը	47
18.	Յերեկ և գիշեր հաջորդում են իրար	50
19.	Տարվա յեղանակների իրար հաջորդելը	54
20.	Արեկի խավարումները	56


ԼՈՒՍԻՆ

21.	Լուսնի փուլերը (Փաղերը)	61
22.	Լուսնի խավարումը	66
23.	Լուսին	70

ՎՐԻՊԱԿՆԵՐ ՅԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ\*)

ՏՀ	Տպագրված ե	Պետք ե լինի	Տող
3.	«զիտական»	«զիտական»	10 ներքեից
3.	վկասակար ել են	ոգտակար ել չեն	2 »
6.	Հեկատեյ Մելիտացու	Հեկատեյ Միլետացու	9 »
7.	4000 ստագիայի	40000 ստագիայի	11 »
7.	տես նկ. 12	տնս նկ. 2.	15 վերևեից
7.	յերկագնդի	յերկագնդի	12 ներքեից
13.	Այս տարորինակ ե	Ալո, տարորինակ ե	10 »
13.	կը կնեն	կընկնեն	9 »
13.	Արևին	Արևն	4 վերևեից
14.	լոկնեն	կընկնեն	12 »
17.	Տես պատկ. 6	տես նկ. 7	3 »
24.	Հուսիս	Հուսիս	12 »
26.	Լուսնթագ	Լուսնթագ	17 »
27.	յերկու ծայերերի աստ-	ծայրի կողմի յերկու աստ-	2 ներքեից
	դերը	դերը	
28.	ամենակարեռվ	ամենակարեռը	2 վերևեից
28.	յերկը	յերկնըի	5 ներքեից
29.	զուխն ները	զուխն ե	15 վերևեից
29.	աշունն ունե	անունն ունի	17 »
29.	համաստեղություն	համաստեղությունը	15 »
30.	յերեռյթական	Յերեռյթական	13 »
32.	Նկար 17-ը նայել շուռ	տված	
49.	ավազով ցվում	ավազով լցվում	4 »
50.	վոչ թե նրա համար	վոչ այն պատճառով	2 »
50.	քամո	քամու	10 »
50.	Աստղերը, և մոլորակ-	Աստղերը և մոլորակ-	
	ները	ները	25 »
51.	Յերկը այս պտույտից	Յերկը այս պտույտից	
	ել ըստվեր ուաջ ե գալիս	ել առաջ ե գալիս	12 »
51.	տեղը վորքան	տեղը, վորքան	3 ներքեից
55.	սեպտեմբերի 13-ի դիրքը	սեպտեմբերի 23-ի դիրքը	2 »
50.	գեռ կենդանարար	գեռ կենդանարար	1 »
60.	արեվի լրիվ խավարու-	արեվի լրիվ խավարումը,	
	մը, վոր տեվում ե 3—4 վոր տեվում ե 3—4 րո-		
	վայրկյան	պէ	2 վերևեից
61.	հարթութունը	հարթությունը	1 ներքեից
66.	այն ժամանակ յերը	այն ժամանակ յերը	9 վերևեից
81.	սառուցներ Մն յերեռում	սառուցներ են յերեռում	3 »

\*) Հանձնարարվում ե ընթերցողներին, նաև քան զրբից ողափելը, հիշված ուղղումները  
մոցնել նշանակված տեղերում, մանավանդ 7, 55 և 60 եջերի մեջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ աստղագիւղ քարտով



